

24563

Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿ

ՊՐՈՑՈՐԳԱՆՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ԱՅԴ ՈՐԳԱՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

331.88
Շ-94

ՊՐՈՒԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Ն. Մ. ՇՎԵՐՆԻԿ

331.88

Շ-34

աԿ

ՊՐՈՖՈՐԳԱՆՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԱՅԴ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Զեկուցում ՀԱՄԿԽ-ի VI պլենումում 1937 թ. ապրիլի 28-ին
յեկ այդ զեկուցման առթիվ ընդունված բանաձևիչը



1010
42 999

Н. М. ШВЕРНИК
ОБ ОТЧЕТАХ ПРОФОРГАНОВ
В СВЯЗИ С ВЫБОРАМИ ПОСЛЕДНИХ
Армпартиздат, Ереван, 1937

Ընկերնե՛ր: ՀՍՄԿԽ-ի ՎԻ պլենումը ժողովվել է՝ բանվոր դասակարգի քաղաքական ակտիվությունը բացառիկ վերելքի պայմաններում պրոֆմիությունների աշխատանքի մի շարք կարևորագույն հարցերը քննարկելու համար: Աշխատավորների՝ պատմության մեջ չտեսնված այդ ակտիվությունը նոր Ստալինյան Սահմանադրությունը կյանքի մեջ մտցնելու հետևանքն է:

Դեռ մինչև Ստալինյան Սահմանադրության ընդունվելը Խորհուրդների VIII Արտակարգ Համագումարի կողմից Սահմանադրությունը վորպես նախագիծ քննարկելիս մեր յերկրի աշխատավորները ցուցաբերեցին հսկայական կազմակերպական ինքնագործունեություն և քաղաքական ակտիվությունը պետական կառուցվածքի հիմունքները մշակելու, բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության հիմնական որենքը մշակելու գործում:

Գերագույն Խորհրդի և աշխատավորների պատգամավորների Խորհուրդների առաջիկա ընտրությունները, վորոնք կատարվելու լին ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական որենքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, անկասկած, ժողովրդական մասսաների քաղաքական ակտիվությունն է՛լ ավելի բարձր աստիճանի կհասցնեն: Պետությունը կառավարելու, պետական հարցերին լուծում տալու ասպարեզ են ներդրվում աշխատավորների նոր խավեր: Այս ամենը նշանակում է, վոր «պրոլետարիատի դիկտատուրան դառնում է ավելի ճկուն, ուրեմն և բանվոր դասակարգի կողմից հասարակությունը պետականորեն ղեկավարելու առավել հզոր սիստեմ, ընդարձակվում է բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան, այդ դիկտատուրայի հիմքը դառնում է ավելի հաստատուն»: (Համկ(բ)Կ ԿԿ Պլենումի բանաձևից—1937 թ. փետրվար—մարտ):

Այս պայմաններում պրոֆմիությունական որդանների ընտրությունների հարցը բացառիկ նշանակություն է ստանում:

ընդունել է, վորպեսզի չձգձգվի պրոֆիկազմակերպութունները վերակառուցումը, վորպեսզի նախազգույն ժամկետում ապահովվի անհրաժեշտ բեկումը միության անդամների սպասարկման և միությունների ամբողջ գործնական աշխատանքը մասսաներին մոտեցնելու գործում: Բայց դա ժամանակավոր մի միջոցառում էր, վորը յենթադրում էր ամենամոտ ժամանակում միությունների համագումարների դումարում՝ միությունների կենտկոմները ընտրելու համար:

Իսկ ի՞նչ ստացվեց մեզ մոտ գործնականում: ՀԱՄԿԽ-ի ղեկավարութունը և միությունների ԿԿ-ները մոռացան, վոր այդ ժամանակավոր միջոցառում է: Միությունների համագումարներ մինչև այժմ չեն դումարել: Գործնականում դրանից առաջ յեկա՞յ այն, վոր մի շարք, հատկապես նոր ստեղծված, միությունների ԿԿ-ներ կտրվեցին մասսաներից և բոլորովին անհանդուրժելի կերպով խախտվեց պրոֆմիութենական ղեմոկրատիան միությունների հենց կենտրոնական կոմիտեներում:

Շատ միությունների կենտրոնական կոմիտեներ, պետք է ուղղակի ասել, «կոմիտեներ» են միայն անունով, վորովհետև այդ միությունների կենտկոմների պլենումները կազմը բաղկացած է ընդամենը յերկու-յերեք, յերբեմն էլ մի մարդուց: Միությունների կենտկոմների՝ որենքով ընտրված անդամների բացակայութունը լրացվել է կոոպտացիայի լայն զարգացած պրակտիկայի միջոցով: Յես կբերեմ մի քանի որինակ:

Այսպես, ահա, կաթնարդյունաբերության բանվորների միության ԿԿ պլենումը բաղկացած է ընդամենը յերեք հոգուց, նրանցից՝ պլենումի միայն մի անդամն է իր ժամանակին ընտրվել ապախոշորացման յենթակա միության համագումարի կողմից, իսկ մյուս յերկուսը կոոպտացիայի յենթարկված անդամներ են: Մետաղե շինվածքների բանվորների միության ԿԿ իր պլենումի կազմում ունի ութ հոգի, վորոնցից յերկուսը կոոպտացիայի յենթարկված անդամներ են: Վարսավիրների միության ԿԿ իր կազմի մեջ ունի պլենումի չորս անդամ, վորոնցից յերեքը կոոպտացիայի յենթարկված անդամներ են: Ալտոմոբիլային արդյունաբերության բանվորների միության ԿԿ պլենումի կազմը բաղկացած է տաս հոգուց, վորոնցից չորսը կոոպտացիայի յենթարկված անդամներ են: Չգալի թվով միությունների կենտկոմներում միությունների կենտկոմների նախազահները կոոպտացիայի յենթարկվածներ են: Կոոպտացիայի պրակտիկան հատկապես լայն չափեր

է ընդունել միությունների կենտկոմների նախազահությունների անդամների վերաբերմամբ: Այսպես, յեթե վերցնենք 65 միությունների կենտկոմներ, ապա այնտեղ կան կենտկոմների նախազահությունների միայն 116 անդամներ, վորոնք իր ժամանակին ընտրվել են համագումարում, իսկ միությունների կենտկոմները նախազահությունների 139 անդամներ կոոպտացիայի յեն յենթարկված:

Վերջին ժամանակները շատ միությունների կենտկոմներ սկսել են կիրառել նախազահությունների այսպես կոչված լայն նիստեր, հաճախ «ըրջիկ» նիստեր: Այդպիսի նիստերն ամենից քիչ էլին նմանում նախազահության իսկական նիստերի: Իսկ ամենից շատ այդ նման եր նախազահության բացակայությունն ակտիվի շերմայով քողարկելու փորձին, ըստվորում ակտիվը հաճախ հրավիրվում էր քվեարկելու, վորովհետև քվեարկել այնպիսի կազմով, վորի մասին յես խոսեցի, շատ դժվար էր:

Մենք ունենք 21 միության կենտկոմներ, վորտեղ կենտկոմների նախազահությունների կազմը բաղկացած է յերկուսուսուս անդամից, և 5 միության կենտկոմներ, վորտեղ նախազահությունները բաղկացած են ընդամենը մեկական մարդուց: (Միծաղ): Այդ ծիծաղելի յե թվում, սակայն իրոք այդ բնորոշում է, թե մեր պրոֆմիութենական կազմակերպություններն ինչ դրության են հասել՝ պրոֆմիութենական ղեմոկրատիայի ամենակոպտացիայի կոմիտեների հետևանքով:

Պրոֆմիութենական ղեմոկրատիայի խախտումը և կոոպտացիայի սխտեմը խորը կերպով արմատավորվել են նաև միությունների մարդային կոմիտեների աշխատանքի պրակտիկայում: Մարդերի ու յերկրամասերի մեծ մասում գոյություն ունեն միությունների կենտկոմների կողմից նշանակված կազմբյուրոներ, վորոնք փոխարինում են մարդային կոմիտեներին: Իսկ փոքրաթիվ մարդային կոմիտեներում, վորոնք իր ժամանակին ընտրվել են մարդային համագումարներում, զգալի թվով անդամներ կոոպտացիայի յենթարկվածներ են: Միությունների կենտկոմներում և մարդային կոմիտեներում նշանակման ու կոոպտացիայի պրակտիկան հասցրել է այն բանին, վոր ղեկավար որդանների ղեմոկրատական ընտրական բնութից շատ դեպքերում, միութենական կյանքի ամենախոշոր հարցերի լուծման ժամանակ, փոխարինվել է յուրահատուկ միանձնյա ղեկավարությամբ:

ՀԱՄԿԽ-ի պրոֆակտիվում յես մատնանշեցի ծանր արդյունա-
քերուծյան կառուցողների միության ԿԿ (նախագահ՝ ընկ. Ռյա-
բով), քաղլուսաշխատողների միության ԿԿ (նախագահ՝ ընկ.
Լիտվին-Մուրտով), վորտեղ այդպիսի պրակտիկան խոր կերպով
արմատացել և աշխատանքի սխտեմ է դարձել:

Պրոֆմիութենական դեմոկրատիայի սկզբունքների ամենա-
կուպիտ խեղաթյուրումներն անպատիթ թողնելը հասցրել է նաև
այն բանին, վոր շատ պրոֆմիութենական որդաններում՝ որինա-
կան ճանապարհով ընտրված ԿԿ անդամները և մարդկոմների ան-
դամները բոլորովին հեռացված են միութենական կազմակերպու-
թյունների ղեկավարությանը և դործնական աշխատանքին մասնակ-
ցելուց:

ՀԱՄԿԽ-ի նախագահությունն էլ այդ տեսակետից բացառու-
թյուն չի կազմել. դուք ինքներդ դիտեք, վոր ավելի քան յերկու
տարվա ընթացքում ՀԱՄԿԽ-ի նախագահությունը ՀԱՄԿԽ-ի
պլենում չի դումարել, ՀԱՄԿԽ-ի պլենումի անդամներին ու թեկ-
նածուներին աշխատանքի չի ներգրավել ՀԱՄԿԽ-ի ապարատում:
Այդ մեր ամենախոր քաղաքական սխալն է, վորը ցույց է տա-
լիս, թե ՀԱՄԿԽ-ն էլ չի պահպանել պրոֆմիութենական դեմո-
կրատիայի սկզբունքները, կտրվել է մասսաներից: Այս պետք է
ասել ուղղակի:

Մենք ունենք պրոֆմիութենական դեմոկրատիայի կուպիտ
խախտումներ նաև միությունների մարդային կոմիտեներում: Ֆի-
նանսական-բանկային աշխատողների միության Լենինգրադի մար-
դային կոմիտեյի պլենումն ընտրվել է 36 հոգուց բաղկացած կազ-
մով: Մարդային կոմիտեյի աշխատանքին մասնակցություն են
ցույց ավել ընդամենը յերեք-չորս հոգի: Մարդկոմի պլենումի
չորս անդամ դուքս են յեկել պլենումի կազմից՝ ուրիշ աշխա-
տանքի անցնելու հետևանքով. մեկը վտարվել է, պլենումի հինգ
անդամները գտնվել են վերջին ժամանակներում, իսկ պլենումի
կազմից 21 հոգի «անհայտ կորել են»: Այդ միության մարդային
կոմիտեն նույնիսկ չդիտե, թե վորտեղ են գտնվում պլենումի
«կորած» անդամները: Այդ մարդկոմում ըստ 1936—1937 թ.թ.
արձանագրությունների ցույց է տրված, վոր կայացել է նախա-
գահության 100 նիստ: Ստուգումը հաստատել է, վոր փաստորեն
նախագահության ընդամենը 6 նիստ է յեղել: Մնացած բոլոր
ղեկներում «նախագահության» նիստերն անց են կացվել միանձ-

նարար: «Ներկա յե գտնվել» միայն ինքը՝ մարդկոմի նախագահ
Լապեկինը, վորը կոոպտացման է յենթարկված 1936 թ. ուղոստո-
սին:

Նրանից առաջ նույնպիսի մեթոդով աշխատել է ընկ. Կուր-
բատովը:

Այդպիսի փաստերը յեզակի չեն. կարելի էր բազմապատիկ
անգամ ավելի փաստեր բերել: Այդ փաստերը վիպարում են այն
մասին, վոր պրոֆմիութենական դեմոկրատիայի ամենակուպիտ
խախտումներն արմատացել են նախ և առաջ մեր միութենական
ղեկավար որդաններում և վոր այդ խախտումները հակահարվածի
չեն հանդիպել վերջիններիս ղեկավարների կողմից:

Ի՞նչ վիճակում է պրոֆմիութենական դեմոկրատիայի, ընտ-
րականության գործը ստորին պրոֆմիութենական կազմակերպու-
թյուններում, միությունների Փարբիկա-գործարանային և տե-
ղական կոմիտեներում: Գործարկումները և տեղկոմները բոլոր
միություններում վերջին անգամ ընտրվել են 1933 թ.վին: Դրանից
հետո գործար-տեղկոմներ ընտրվել են մասնակիորեն առանձին
միություններում: 1935 թ.վի սկզբին ՀԱՄԿԽ-ի նախագահությու-
նը վորոշում հանեց գործարկումների ու տեղկոմների ընտրու-
թյունների մասին, ըստվորում ընտրությունների ժամկետներն
ըստ այդ վորոշման պետք է տահմանվեյին միությունների կենտ-
րումների կողմից՝ այդ համաձայնեցնելով յուրաքանչյուր յերկ-
րամասի և մարզի պրոֆմիութենական համապատասխան խոր-
հուրդների հետ: Այդ վորոշման հիման վրա ընտրություններն
սկսվեցին և մի քանի միությունների կենտկոմներում կատարվե-
ցին: Սակայն 1935 թ. մայիսին, այն բանի կապակցությամբ,
վոր Փարբիկա-գործարանային և տեղական կոմիտեների ընտրու-
թյուններն անցնում էյին անկազմակերպ, առանց անհրաժեշտ դե-
կավարման ՀԱՄԿԽ-ի և միությունների կենտկոմների կողմից,
առանց պրոֆմիութենական կազմակերպությունների աշխատանքի
քննադատությունը և ինքնաքննադատությունը լայնորեն ծավա-
լելու, ՀԱՄԿԽ-ի նախագահությունը, կուսակցության Կենտ-
կոմի և ընկեր Ստալինի ցուցումով, դադարեցրեց այդ ընտրու-
թյունները: Ընկեր Ստալինն ամենայն սրությամբ դրեց պրոֆ-
միությունների ամբողջ աշխատանքում կորուկ չըջաղարձ կատա-
րելու անհրաժեշտության հարցը: Սակայն ընկեր Ստալինի այդ
ցուցումները չկենսագործեցին վո՛չ ՀԱՄԿԽ-ը, վո՛չ միություննե-
րի կենտկոմները:

Գործարկումների ու տեղիումների կազմակերպված ընտրություններ չեն կատարվել 1933 թվից ի վեր: Այդ առաջ բերեց պրոֆմիուլթենական դեմոկրատիայի մասսայական խախտում և նշանակման ու կողպտացիայի պրակտիկայի տարածում ֆարբրիկա-գործարանային ու տեղական կոմիտեներում:

Գործարանային կոմիտեների նախադասները մեծ մասամբ փոխվել են միջանի անդամ: Նշանակովի լինելով՝ պրոֆմիուլթենական աշխատողները զգալի մասն սկսել է գործարկումների վրա նայել ինչ Վորպես ընտրովի որդանները վրա, վորոնք պատասխանատու չեն պլենումի առաջ, մասսաների առաջ, այլ վորպես պրոֆմիուլթենական գրասենյակի վրա:

Ձարմանալի չե, վոր Որեսուվո-Չույեվոյի բամբակի մանվածքային № 1 գործարանի գործարկումի նախագահ ընկ. Պրոխորովը չի կարողացել պատասխանել, թե յերբ և քանի հոգի յե ընտրվել այն գործարկումի անդամ, վորի նախագահն ինքն է: Այդ գործարանում ընտրությունները մոմենտից սկսած փոխվել է յոթը նախագահ, և զարմանալի վոչինչ չկա, վոր ընկ. Պրոխորովը հարկավոր չի համարում հետաքրքրվել գործարկումի ընտրված անդամների վիճակով:

Նույնպիսի դրություն դոյություն ունի նաև Որեսուվո-Չույեվոյի մյուս գործարաններում: Այսպես՝ մանածագործական № 1 գործարանում փոխվել է հինգ նախագահ, բամբակի մանվածքային № 2 գործարանում՝ վեց նախագահ: Բանը նույն վիճակում է Կիրովի անվան «Իլինամո» գործարանում: 1935 թ. հունիսից ի վեր այստեղ փոխվել է չորս նախագահ, Ելեկարագործարանում նույն ժամանակաշրջանում փոխվել է չորս նախագահ: Նշանակման սխտեմը խոր արմատ է դցել ու դարձել է ստորին պրոֆկազմակերպությունների աշխատանքի պրակտիկան, փոխարինել է ընտրականությունը և հետին պլանն է մղել, յերբեմն էլ պարզապես կամայականորեն տիրացել է գործարկումների որինական ճանապարհով ընտրված անդամների իրավունքներին:

Լիկինոյի գործարանի բանվորուհի ընկ. Սլադկովան ասում է. «Յես մի ժամանակ ընտրվեցի գործարկումի անդամ, սակայն մի տարի յե, վոր պլենումներում չեմ յեղել: Ինձ ջնջել են գործարկումի անդամների ցուցակից. թե ինչու, հայտնի չե»:

Բամբակի մանվածքային № 1 գործարանից ընկ. Սոլովյովը և ընկ. Կոլեսինան հայտարարում են. «Համարեն ցուցակը կորցրել են: Մեզ գործարկումի պլենումներին չեն կանչում»:

Վոչ մի առ ջարդանք չեն տալիս, պարզապես մոռացել են մեր մասին»: Այդպիսի փաստեր թույլատրելը ՀՍՄԿԽ-ի և միությունների կենտրոնների ղեկավարության գլխավոր քաղաքական սխալն է:

Մեր կազմակերպություններն ու նրանց ղեկավարներն ունեցե՞լ են, արդյոք, մեր ամբողջ աշխատանքը կարող կերպով բարելավելու, միության անդամների լայն մասսաներին մեր աշխատանքի մեջ ներգրավելու սպասաններ: Այո՛, մեղանում այդ սպասանները յեղել են և կան:

Դրանք՝ այդ սպասաններն ստեղծվել են, առաջին՝ պրոֆմիուլթյունների ապախոչորացումով: Առաջ մենք ունեյինք մեծածավալ կազմակերպություններ, վորոնք իրենց շարքերում համախմբում էյին հսկայական թվով միության անդամներ հարյուրավոր ձեռնարկություններում: Միություններն այն ժամանակ միավորում էյին արդյունաբերության տարբեր ճյուղերի բանվորներ ու ծառայողներ, վորոնք ունեյին աշխատանքի տարբեր սպասաններ, տարբեր նյութական, կենցաղային և կուլտուրական պահանջներ: Մի խոչոր միության կողմից միավորած բանվորների ու ծառայողների տարբեր խմբերի սպասարկման գործում ղիֆերենցված մոտեցում ապահովելը շատ դժվար էր: Միություններն աշխատավորական մասսաների աճող պահանջների կոնկրետ սպասարկմանը մոտեցնելու նպատակով կատարվեց պրոֆմիուլթյունների ապախոչորացումը: Յեթե առաջ շատ ղեկավարներ պրոֆմիուլթենական աշխատանքի ու ղեկավարման թերությունները բացատրում էյին այն բանով, վոր միությունների մեծածավալության պատճառով անհնարին է իմանալ միության համախմբած անդամների կարիքներն ու սպահանջները, ապա այժմ՝ ապախոչորացման կապակցությամբ այդ պատճառարանությունը վերացել է: Այժմ առաջվա 47-ի փոխարեն մենք ունենք 163 միություն:

Շատ կենտրոնական կոմիտեներ չունեն միջնոդակներ՝ չըրջկումներ, մարդկումներ և անմիջականորեն կապված լինելով ձեռնարկությունների հետ, լիակատար հնարավորություն ունեն իմանալու իրենց ստորին պրոֆկազմակերպությունների աշխատանքը, ողնելու նրանց, ուղղելու նրանց սխալները, ավելի լավ սպասարկելու միության՝ իրենց կողմից միավորվող անդամների կարիքներն ու պահանջները:

Ոգտագործե՞լ են, արդյոք, կենտրոնական և մարդային կոմիտեների մեր ղեկավարները միությունների ապախոչորացման

փաստերից բղխող բոլոր հնարավորութիւնները, վորպեսզի իրենց աշխատանքը մոտեցնեն մասսաներին, վորպեսզի միութեան անդամները լայն մասսաներին մասնակից անեն միութեան ամբողջ դամբները լայն մասսաներին, այն աշխատանքին, վոր կատարում են միութեան օրգաններն՝ սկսած գործարկումներից ու տեղիումներից և վերջացած միութեան կենտրոններով: Վո՛չ, այդ հնարավորութիւնները մենք չենք ոգտագործել: Չեմ կարծում, վոր այս դրույթը հարկավոր և հատկապես ապացուցել: Վերջին ժամանակներս մամուլում, ժողովներում և ակտիւներում բերվեցին բաւական քանակութեամբ փաստեր, վորոնք վկայում են, վոր շատ կենտրոնական կոմիտեներ և նրանց ղեկավարները չեն ճանաչում իրենց ստորին կազմակերպութիւններին:

Յերկրորդ, մասսաներին ավելի լայն սպասարկելու հողի վրա կայն այդ մասսաների հետ ընդարձակելու և ամրացնելու համար պայմաններ ստեղծվեցին Աշխտողկոմատի սոցիալական ապավազրութեան և աշխատանքի պաշտպանութեան ֆունկցիաները պրոֆմիութենական կազմակերպութիւններին հանձնելով: Անհրաժեշտ և խոստովանել, վոր Աշխտողկոմատի սոցիալական ապահովութեան և աշխատանքի պաշտպանութեան ֆունկցիաների վազրութեան և աշխատանքի պաշտպանութեան ֆունկցիաների յուրացումը մենք կատարել ենք ղգալի չափով ձեւակնորեն ու բյուրոկրատիկ կերպով: Սոցիալական ապահովագրութեան ու աշխատանքի պաշտպանութեան գծով կատարվող աշխատանքի սխալները, մեթոդները հեղաբեկելու փոխարեն, բանը շատ ղեւքերում հանգել և Աշխտողկոմատի ցուցանակը ՀԱՄԿԽ-ի և միութիւնների կենտրոնների ցուցանակով փոխարինելուն: Սոցիալական ապահովագրութեան և աշխատանքի պաշտպանութեան գործին այդպիսի ձեւակնութեամբ մոտեցում ցույց տալը նսեմացրեց այդ գործը պրոֆմիութիւններին հանձնելու քաղաքական և կազմակերպական-տնտեսական նշանակութիւնը: Իսկ իրականում Աշխտողկոմատի ֆունկցիաները պրոֆմիութիւններին հանձնելը կատարվեց այն պատճառով, վոր հատկապես պրոֆմիութիւնները, վորպես բանվոր դասակարգի ամենից ավելի մասսայական կազմակերպութիւններ, հսկայական հնարավորութիւններ ունեն բանվորական մասսաներին ներգրավելու սոցիալական ապահովութեան և աշխատանքի պաշտպանութեան ամբողջ գործի կառավարման ասպարեզը: Պրոֆմիութիւնները բոլոր հնարավորութիւններն ունեն, հենվելով մասսաների փորձի վրա, սոցիալական ապահովագրութեամբ աշխատավորներին սպասարկելու

կարևորագույն գործը նշանակալից չափով ավելի լայն հիմքերի վրա ղնելու, քան այդ անում եր Աշխտողկոմատի և Ս.Ա.Կ. Վարչութեան գերատեսչական ասպարատը: Իրագործելով այդ կարևորագույն ֆունկցիաները, պրոֆմիութիւնները պարտավոր ելին բանվոր դասակարգի մեջ դաստիարակել տեր ու տնտեսի ղգացմունք, համապետական նշանակութիւն ունեցող աշխատանքի կարևորագույն ճյուղն անմիջականորեն կառավարելու կարողութիւն:

Հատուկ նշանակութիւն ունի մասսաների մասնակցութիւնն աշխատանքի պաշտպանութեան և անվտանգութեան տեխնիկայի կազմակերպման գործում: Միայն սոցիալիզմի յերկրում, բանվոր դասակարգի ղիկատուրայի յերկրում կարող և լինել այնպիսի դրութիւն, յերբ վերահսկողութեան ֆունկցիաներն աշխատանքի սանխտարական ու առողջապահական պայմանների նկատմամբ, անվտանգութեան տեխնիկայի դրութեան նկատմամբ, աշխատանքային որենսդրութեան ճիշտ և լրիվ իրագործման նկատմամբ ամբողջապես հանձնված են հենց իրենց՝ բանվորական կազմակերպութիւնների իրավասութեամբ: Մեր յերկրում բանվոր դասակարգը, աշխատավոր մասսաներն արտագրութեան միջոցների, ֆարրիկաների, գործարանների լիչխան տերերն են: Այդ հաստատվում և նաև նրանով, վոր պրոֆմիութիւնները, վորպես բանվոր դասակարգի մասսայական կազմակերպութիւններ, ընդհանրացնելով մասսաների փորձը, կազմակերպելով մասսաների ակտիւութիւնը, իրացնելով աշխատավորների առաջարկները, ձեռք են բերում աշխատանքի առողջ և կուլտուրական պայմանների ստեղծում սոցիալիստական ձեռնարկութիւններում: Կարելի՞ յե արդյոք յերեակայել պրոֆմիութիւնների փոքրիչատե բավարար աշխատանք, առանց բանվորական մասսան ամենալայն կերպով այդ աշխատանքի մեջ ներգրավելու: Վո՛չ, չի կարելի: Այստեղ ևս, աշխատանքի պաշտպանութեան և անվտանգութեան տեխնիկայի դրվածքում, սրա վրա մանրամասն կանգ կառնեմ հետագայում, — պրոֆմիութենական օրգանները խոշոր թերութիւններ ունեն, վորոնք բղխում են այն բանից, վոր նրանք չեն կարողանում միութեան անդամների լայն ակտիւլը ներգրավել այդ աշխատանքի ասպարեզը:

Վերջապես, յերրորդ պայմանը, վոր հնարավորութիւն և

տալիս ա ըողջ մեր աշխատանքն ամենաանմիջական կերպով կապելու մասսաների հետ, ստորին վերահսկողությունն է տնտեսական և կոոպերատիվ կազմակերպությունների գործունեյության նկատմամբ, վորոնց ղեկավարումը մեր կուսակցության XVII համագումարի վորոշմամբ դրված է պրոֆմիութենական կազմակերպությունների վրա: Սմեն տեսակի բյուրոկրատական խեղաթյուրումների, անշարժության, աշխատավորների լայն մասսաների նկատմամբ ցույց տրվող անհոգի վերաբերմունքի դեմ պայքարելու գործում հսկայական ուժ և նշանակություն ունեցող այդ լծակը մենք չենք ոգտադործել այնպես, ինչպես պետք է վոր ոգտադործելին մեր պրոֆմիութենական կազմակերպությունները: Յեւ առաջին հերթին մեզ վրա, պրոֆմիութենական կազմակերպությունների ղեկավարներին վրա յե ընկնում այն բանի պատասխանատվությունը, վոր լայն մասսաների կարիքների նկատմամբ ցույց տրվող այդպիսի բյուրոկրատական վերաբերմունքի տարրեր դեռևս հաճախ յերևան են դալիս առանձին ստորին կազմակերպությունների ու վարչատնտեսական որգանների աշխատանքում:

Պետք է ուղղակի ասել, վոր շատ պրոֆմիություններ առհասարակ մոռացել են, թե գոյություն ունի ՀամԿ(բ)Կ XVII համագումարի վորոշումը, վորի համաձայն ստորին վերահսկողությունը դրված է պրոֆմիությունների վրա: Յեթե դուք հիշում եք, դեռ 1936 թ. ոգոստոսին «Труд» թերթի խմբագրությունը հարցում ուղղեց մի շարք միությունների կենտկոմների նախագահներին (հացաթխման արդյունաբերության բանվորների միութ. ԿԿ նախ. ընկ. Մաքսիմովին, բրդեղենի արդյունաբերության բանվորների միութ. ԿԿ նախ. ընկ. Նիկիտինային, ավտոմոբիլի արդյունաբերության բանվորների միութ. ԿԿ նախ. ընկ. Չգորնովին) այն մասին, թե նրանք ինչպես են ղեկավարում մասսայական վերահսկողությունը: Նրանք բոլորն այն ժամանակ խոտտովանեցին, վոր մասսայական վերահսկողության Ֆունկցիա իրենց պրոֆմիությունները չեն իրագործում: Մի քանի ընկերներ, ինչպես, որինակ, Չգորնովը, հայտարարեցին. «Այժմ մենք վո՛չ մի որով չենք թուլացնի այդ կարևոր գործի ղեկավարումը, վոր կուսակցությունը գրել է պրոֆմիությունների վրա»: Գոնե այդպես է դրվել մամուլում, Չգորնովի կողմից «Труд» լրագրին տրված ինտերվյույի մեջ: Իսկ իրականում մենք բոլորովին այլ բան ենք տեսնում: 1936 թ. սեպտեմբերի 16-ին միության ԿԿ նախագահության նիստում իրոք քննարկվել է այն հարցը, թե «ԳԱՁ» գործարանի գործարկումն ինչ աշխատանք է կատարել աշխատավարձի ու մասսայական վերահսկողության ասպարեղում և թե ինչ դրության մեջ է այդ աշխատանքը Ստալինի անվան գործարանում ու Մոսկվայի հեծանիվագործարանում: Սակայն, 1936 թ. սեպտեմբերից սկսած մինչև այժմ այդ միության կենտկոմում մասսայական վերահսկողությամբ վոչ վոք չի գրադվել և այդ ԿԿ աշխատողներից վոչ մեկը չի խմանում, թե ինչ է կատարվում այժմ իր ծայրամասում: Գործն ավելի լավ հիմքերի վրա չի դրել նաև ընկ. Նիկիտինան (բրդեղենի արդյունաբերության բանվորների միության ԿԿ), վորը նույնպես չի կատարել հանձն առած պարտավորությունները:

Ահա՛, տեսնում եք, թե ինչպես պրոֆմիութենական աշխատողների խոսքերն ու գործերը միմյանց հակասում են: Չե՞ վոր մասսայական վերահսկողությունը մոտ անցյալում այնքան էլ վատ չէր դրված: Չե՞նարկություններում գոյություն ունեյին մասսայական վերահսկողության բրիգադներ, նրանց շուրջը խմբավորվել էր բանվորների, նրանց կանանց և ծառայողների կանանց ակտիվը: Նրանք վատ չեյին վերահսկում գործի դրվածքին ճաշարաններում, խանութներում, մանկական հիմնարկներում, հիվանդանոցներում: Գործարկումները նրանց ոգնում էյին: Վատ չեյին աշխատում մի շարք ձեռնարկությունների բրիգադները աշխատավարձը ճիշտ հաշվելու և ժամանակին վճարելու գործին վերահսկելու ասպարիզում: Հապա ինչո՞ւ յե այժմ այդ բոլորը վերացվել: Վորովհետև, ընկերներ, մասսայական վերահսկողության վրա նայել են վոչ թե վորպես աշխատանքի մշտական մեթոդի, այլ վորպես ժամանակավոր կամպանիայի վրա: Մինչդեռ մասսայական վերահսկողության ղեկավարումը և կազմակերպումը այժմ էլ քիչ կարևոր դեր չեյին խաղա խորհրդային, տնտեսական և կոոպերատիվ ապարատում գոյություն ունեցող բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ մղվող պայքարում: Հատկապես անհրաժեշտ է բանվորներին լայն կերպով ներգրավել վերահսկելու բնակարանների դրության, նոր բնակարանային շինարարության ընթացքի, պոլիկլինիկաների, հիվանդանոցների, մանկամսուրների և կենցաղային բոլոր մյուս հիմնարկ-

6664
0101

ներում մենք բոլորովին այլ բան ենք տեսնում: 1936 թ. սեպտեմբերի 16-ին միության ԿԿ նախագահության նիստում իրոք քննարկվել է այն հարցը, թե «ԳԱՁ» գործարանի գործարկումն ինչ աշխատանք է կատարել աշխատավարձի ու մասսայական վերահսկողության ասպարեղում և թե ինչ դրության մեջ է այդ աշխատանքը Ստալինի անվան գործարանում ու Մոսկվայի հեծանիվագործարանում: Սակայն, 1936 թ. սեպտեմբերից սկսած մինչև այժմ այդ միության կենտկոմում մասսայական վերահսկողությամբ վոչ վոք չի գրադվել և այդ ԿԿ աշխատողներից վոչ մեկը չի խմանում, թե ինչ է կատարվում այժմ իր ծայրամասում: Գործն ավելի լավ հիմքերի վրա չի դրել նաև ընկ. Նիկիտինան (բրդեղենի արդյունաբերության բանվորների միության ԿԿ), վորը նույնպես չի կատարել հանձն առած պարտավորությունները:



ների վրա, վորոնք կոչված են սպասարկելու բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային կարիքները:

Այսպիսով, մեղանում կան սրայմաններ այն բանի համար, վորպետի լայն մասսաները ներդրավին պրոֆիտուլթյուններին աշխատանքի մեջ, այդ հիմքի վրա ամեն կերպ ամրացնելով մեր կազմակերպութիւնները, բարձրացնելով նրանց ղեկավար դերը և բարձրացնելով մեր միութիւնների անդամների հենց լայն մասսաների քաղաքական ու կազմակերպական ինքնագործունեութիւնը:

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ-ԲՅՈՒՐՈԿԻՍՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊՐՈՓԻՏԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՍԱՆԵՐԻՑ ԿՏՐՎԵՑԻՆ

Մեր պրոֆիտուլթենական որգաններէց, գործարկումներէց միութիւնների կենտրոններէց շատերը և ՀԱՄԿԽ-ը, մանավանդ նրա ապարատը, գրասենյակային-բուրոկրատական մեթոդներով են աշխատում: Պրոֆիտուլթենական որգանները և նրանց ղեկավարները դադարել են տեսնել այն բանը, վոր գործնական աշխատանքում ել անհրաժեշտ է ապահովել կապը մասսաների հետ—վորպես վճռողական սրայման մեր ամբողջ աշխատանքի հաջողութիւն, վորպես վճռողական սրայման մեր առաջխաղացութիւն:

Ընկեր Ստալինը կենտրոնի վերջին պլենումում արտասանած իր յեզրափակման խոսքում ասել է.

«Ի՞նչ է նշանակում ճիշտ ղեկավարել:

Այդ բնավ չի նշանակում նստել գրասենյակում և դիրեկտիվներ գրել:

Ճիշտ ղեկավարել—այդ նշանակում է՝

առաջին, գտնել հարցի ճիշտ լուծումը, իսկ ճիշտ լուծում գտնելն անհնարին է առանց մասսաների վորձի հաշվառման, մասսաների, վորոնք իրենց սեփական մեջքի վրա յեն վորձում մեր ղեկավարութիւն արդյունքները.

յերկրորդ, կազմակերպել ճիշտ վորոշման կենսադործումը, վորը, սակայն, չի կարելի կատարել առանց մասսաների կողմից սուղակի ոգնութիւն ստանալու.

յերրորդ, կազմակերպել այդ վորոշման կատարման ստու-

գումը, վոր գարձյալ հնարավոր չէ կատարել առանց մասսաների ուղղակի ոգնութիւն»:

Իր յեզրափակման խոսքի մի այլ տեղում ընկեր Ստալինն ասում է. «Կապը մասսաների հետ, այդ կապի ամրացումը, մասսաների ձայնին ունկնդրելու սրատրաստականութիւնը,—աստիճան է բուլչեկիյան ղեկավարութիւն սուժը և անպարտելիութիւնը»:

Պրոֆիտուլթենական շատ ղեկավարների հիմնական արատն այն է, վոր մասսաների հետ սերտ կապի իրականացումը նրանք ձեռնարկում են հասկանում: Նայեցե՛ք գործարանային կոմիտեյի նախագահի աշխատանքին: Նա կապված է մասսաների հետ: Նրա մոտ գնում են հարյուրավոր բանվորներ, նրան դիմում են ոգնութիւն ստանալու զանազան կարիքների դեպքում, ամեն տեսակ տեղեկանքներ ստանալու համար: Նա յե վորոշում նպաստի չափն ըստ հիվանդանոցային թերթիկների: Գործարկումում դուք միշտ շատ ժողովրդի կհանդիպեք: Յե՛վ այնուամենայնիվ գործարկումների շատ նախագահներ ամենևին կապ չունեն մասսաների հետ: Այդ բացատրվում է նրանով, վոր «ընթացիկ աշխատանքը» գործարկումների նախագահներից շատերին կլանում է: Գործարկումի ամբողջ աշխատանքը նրանք ջանում են անձնապես կատարել, չկարողանալով ապահովել գործարկումի ամբողջ կազմի կոլեկտիվ աշխատանքը, չկարողանալով այդ աշխատանքի մեջ գրավել լայն ակտիվը: Դրա հետևանքով, չնայած գործարկումների և տեղիումների մեծ ծանրաբեռնվածութիւնը, նրանց աշխատանքը հաճախ քիչ ոգուտ է տալիս: «Ընթացիկ աշխատանքը» նրանց հնարավորութիւնն չի տալիս զբաղվելու պրոֆակտիվով, պրոֆկազմակերպիչներով, նոր կազմեր ուսումնասիրելու և աճեցնելու գործով, վերջապես միութիւնայն անդամների տրամադրութիւնն ուսումնասիրելու գործով, մի խոսքով՝ աշխատելու այնպիսի ձևով, վորպետի վոչ թե սպասեն, մինչև վոր մարդիկ գան նրանց մոտ, այլ իրենք ոգնութիւն կազմակերպեն միութիւնների անդամների համար՝ նրանց կարիքների և կուլտուր-քաղաքական պահանջների բնագավառում: Գործարկումի նախագահը պետք է ամեն որ լինի ցեխում, անսրայման չիվի բանվորների հետ վոչ միայն իր մոտ՝ գործարկումում, այլ անմիջականորեն դադարահի մոտ, աշխատանքի տեղում, քանի վոր միայն այդպիսի կապի շնորհիվ կարելի յե իսկապես խմանալ միութիւն անդամների պահանջներն ու կարիքները:

Եւ ամէլի մեծ չափով այս վերաբերում ե ղեկավար պրոֆ-
միուքենական որդաններին և նրանց ղեկավարներին: Պրոֆմիու-
թյունների ղեկավար որդանների իսկական բոլշևիկյան վերահսկո-
ղությունն ստորին կազմակերպությունների աշխատանքի նկատ-
մամբ, այդ մի վերահսկողությունն է, վոր բովանդակում ե նաև ղե-
կավարների քաղաքական և գործարարական հատկությունների
ստուգումը, նրանց աշխատանքի ստուգումը, նրանց ոգնություն
ցույց տալը: Մեզանում սրա փոխարեն՝ ստուգումը և ստորին աշ-
խատողներին ոգնություն ցույց տալը մի շարք ղեկավարում փոխա-
բինում են այն բանով, վոր աշխատողներին բյուրոկրատիկորեն
թափ են տալիս, անսահման յերկար բաղմաթիվ բանաձևեր են
գրում, առանց հետագա վորևե վերահսկողություն ունենալու
այդ բանաձևերի կատարման նկատմամբ և առանց ոգնություն
կազմակերպելու այնտեղ, վորտեղ այդ հարկավոր ե՝ ընդունած
վորոշումների կատարումն ապահովող պայմաններ ստեղծելու
համար: Ահա վասիկ աշխատանքի այդպիսի վոճի մի փայլուն
նմուշ: Մետաղե շինվածքների բանվորների միության կենտկոմի
նախագահ ընկ. Լուկյանովը 1937 թ. փետրվարի 27-ին Չեկա-
բխակի մարզի Մինյարի գործարանի գործարկոմի նախագահ
ընկ. Սուլիմովին կանչում ե նախագահության նիստին: Այդ նիս-
տում գործարկոմի այդ նախագահին հարկադրում են ղեկուցել
մեկ անդամից հինգ հարցի վերաբերյալ: Ընկ. Սուլիմովի բո-
լոր ղեկուցումների առթիվ նախագահության ընդունած վորո-
շումներն այնքան բնորոշ են կենտկոմի ղեկավարման վոճի տե-
սակետից, վոր յես դրանք միտումի կրերեմ:

Ահա վասիկ առաջին հարցը. «Ստախանովյան շարժման և
սոցմրցման մասին»: Այդ հարցի վերաբերյալ վորոշումների մեջ
նախագահությունը գրում ե. «Հանձնարարել կի նախագահու-
թյան անդամ ընկ. Կորնեյեվին, վորը գործուղված ե Մինյարի
գործարանը, բանվորների հաշվետու ժողովներում ղենլու գոր-
ծարկոմի նախագահ ընկ. Սուլիմովի անգործունեյության վերա-
բերյալ հարցը»:

Յերկրորդ հարցը նույն այդ նիստում. «Կի Վ պլենումի՝
պրոֆաշխատանքի վերակառուցման վերաբերյալ վորոշումներն է-
րացնելու մասին»: Վորոշումների մեջ գրում են. «Նախագողու-
չացնել Մինյարի գործարկոմի նախագահ ընկ. Սուլիմովին, վոր
յեթե ամենամոտ ժամանակում աշխատանքի վերակառուցման

միջոցներ ձեռք չառնվեն, այս նրա վերաբերմամբ ձեռք կառնը-
վեն սուժանքների խիստ միջոցներ»: (Ծիծաղ):

Յերրորդ հարցը. «Անդրադիտության և կիսադրադիտության
վերացման ընթացքի մասին»: Վորոշումների մեջ գրված ե.
«Լիազորել ընկ. Կորնեյեվին բանվորական ժողովներում պարզա-
բանելու գործարկոմի անգործունեյությունը... և ղենլու գոր-
ծարկոմի նախագահ ընկ. Սուլիմովին հեռացնելու հարցը»: (Ծի-
ծաղ):

Չորրորդ հարցը. «Պաշտպանության աշխատանքի դրության
մասին»: Վորոշման մեջ գրված ե. «Մինյարի գործարանում
պատշաճ ուշադրությունը չեն նվիրել պաշտպանության աշխա-
տանքին»:

Յեվ, վերջապես, հինգերորդ հարցը. «Պրոֆտոմսերի փոխա-
նակման արդյունքները»: Վորոշումների մեջ գրվում ե. «ՀԱՄԿԽ-ի
հրահանգը և կենտկոմի նախագահության վորոշումը չկա-
տարելու համար... հանդիմանություն անել Մինյարի
գործարանի գործարկոմի նախագահ ընկ. Սուլիմովին»:

Այս յեղէլ ե մի որում և միենույն նիստում: Սրանք իմ կող-
մից հատկապես ընտրված վորոշումներ չեն, սրանք միության
Կի աշխատանքի վոճն են, ղեկավարելու վոճը:

Այս բանում համոզվելու համար վերցնենք նույն այդ միու-
թյան Կի ԸՎ պլենումի վորոշումները: Պլենումում լսում են Բելո-
բեցկի գործարանի գործարկոմի նախագահ ընկ. Կուզնեցովի
յերկու հաշվետիությունը. առաջին հարցը՝ «Անդրադիտության
և կիսադրադիտության վերացման աշխատանքի մասին» և յերկ-
րորդը՝ «Ձեռնարկություններում տեղի ունեցող հիվանդացումների
հարցի վերաբերյալ կենտկոմի ցուցումների կատարման մասին»:
Այս հարցի առթիվ վորոշում ե հանվում. «Վորովհետեւ ընկ.
Կուզնեցովը չի կարողացել հաղթահարել անդրադիտության և կի-
սադրադիտության վերացման աշխատանքը, հանձնարարել կի
նախագահությանը բանվորների ընդհանուր ժողովի առջև ղենլու
գործարկոմի և նրա նախագահ ընկ. Կուզնեցովի աշխատունակու-
թյան հարցը»: Յեվ յերկրորդ հարցը՝ «Նախագողուչացնել ընկ.
Կուզնեցովին, վոր այն ղեկավարում, յեթե նա չապահովի հիվան-
դացումների նվազեցման աշխատանքը, կենթարկվի դատական
պատասխանատիության»: (Ծիծաղ):

Այս փաստերն իրենք խոսում են այդ Կի ղեկավարման վոճի
մասին: Պարզ ե, վոր այդպիսի ղեկավարումը բացարձակապես

վոչինչ չի տալիս ստորին պրոֆիկազմակերպութիւններին, բացի այն, վոր կազմալուծում է նրանց: Այդպիսի ղեկավարումը վարչարարութեան ամենավատթար տեսակն է, այդ ծաղր է ստորին պրոֆիկազմակերպութիւններին և ստորին պրոֆաշխատողներին վերաբերմամբ:

Համարձակ կերպով վստահացնում եմ ձեզ, վոր մետաղե շինվածքների բանվորների միութեան կենտկոմի նախագահութիւնն այդ ամենից հետո գործարկումի և ընկ. Կուզնեցովի աշխատունակութեան հարցն ամենևին չի դրել միութեան անդամների առջև:

Ողնո՞ւմ է արդյոք ղեկավարման այդպիսի մեթոդը, — յետե կարելի յէ այն «ղեկավարում» անվանել, — ստորին պրոֆիկազմակերպութիւններին: Յես կարծում եմ, վոր չի ոգնում: Այլևի շուտ ընդհակառակը, ղեկավարման այդպիսի մեթոդը վնաս է բերում, վորովհետև վերարտադրում է վարչարարութեան վատթարագույն պրակտիկան:

Միութիւնների կենտրոնական կոմիտեներին ղեկավարները պետք է հետևողական լինեն և հարգեն իրենց վորոշումները: Յետե դուք գտնում եք, վոր ստորին պրոֆիկազմակերպութիւնների ղեկավարներն իրենց գործարարական հատկութիւններով պատշաճ ղեկավարում չեն ապահովում, ապա գոնէ այնպես արձանագրեցեք այդ, վորպեսզի և՛ աշխատողին, և՛ կազմակերպութեանը հասկանալի լինի, թէ ինչ պետք է անել: Իսկ վոր գլխավորն է, ձեր վորոշումները կյանքում կիրառեցեք, այլապես դուք կղաղարեք ղեկավար լինելուց, իսկ ձեր վորոշումները կղառնան անպետք խզբանքներ:

Անհրաժեշտ է վճռականապես վերջ տալ «Ժողովացավին», վորը կենդանի խոսքը փոխարինում է թղթով: Տեսե՛ք, թէ ինչ է ստացվում: Ընկ. Ռյաբովը, Կենտրոնի ծանր արդյունաբերութեան կառուցողների միութեան կենտկոմի նախագահը, 1936 թ. ընթացքում գումարել է 85 նիստ: Ընդունված 1743 վորոշումներից 1215-ը կայացվել են հարցման միջոցով: Վորոշումների կատարման ստուգումն ու կազմակերպումը բոլորովին բացակայում են, և հասկանալի յէ, վոր միութեան ԿԿ-ի վորոշումներից շատերը, գուցէ և շատ կարևորները, մնացել են ողում կախված, չեն հասել մասսաներին և, ինչպես ինքը Ռյաբովն ասում է, կարվել են թղթապանակներում: Պարզ է, վոր այս ամենը չի ոգնում պրոֆմիութենական կազմակերպութիւնների աշխատանքին:

Ձին: Այդ հիվանդութեամբ — «Ժողովացավով» պակաս չափով չի տառապում նաև ՀԱՄԿԽ-ը և հատկապես ՀԱՄԿԽ-ի քարտուղարութիւնը: Այդ ժամանակամիջոցում մեզ մոտ քննարկվել են վոչ թէ պակաս, այլ ավելի թվով հարցեր, քան Ռյաբովի մոտ, իսկ ՀԱՄԿԽ-ի նախագահութեան և քարտուղարութեան հանած վորոշումների կատարման վերահսկողութիւնը չափազանց վատ է դրված ՀԱՄԿԽ-ում:

Վատ վիճակի մեջ է ստորին պրոֆմիութենական կազմակերպութիւնների աշխատանքի ուսումնասիրութեան գործը: Միութիւնների կենտկոմների աշխատողների բազմաթիվ շրջագայութիւնները դեպի ստորին կազմակերպութիւնները դաստորոյորական բնույթ են կրում և չափազանց քիչ են ոգնում ստորին կազմակերպութիւններին և միութեան հենց կենտկոմին՝ ուսումնասիրելու գործի դրութիւնը պրոֆմիութենական կազմակերպութիւններում:

Ձեկուցման համար պատրաստվելով, յես աչքի անցկացրի միութիւնների կենտկոմների հրահանգիչների և ՀԱՄԿԽ-ի հրահանգիչների միջանդի կենտկոմները: Բոլոր այդ կենտկոմները առավել կամ նվազ լրիվութեամբ լուսանկարում են այն, ինչ կատարվում է տեղում: Սակայն դրանց մեջ չեք գտնի ստորին կազմակերպութիւնների աշխատանքի դժվարութիւնների վերլուծում: Յետե ինքներս մեզ հարց տալու լինենք, թէ հրահանգիչների շրջագայութիւններն ինչ չափով ոգնեցին ստորին պրոֆմիութենական կազմակերպութիւններին, ապա ստիպված պետք է լինենք խոստովանելու, վոր տեղերը մեկնած հրահանգիչներից առայժմ դեռ միայն շատ ու շատ քչերն այդպիսի ոգնութիւնները ցույց են տվել ստորին պրոֆմիութենական կազմակերպութիւններին: Իսկ մի քանիսը նույնիսկ ցանկութիւն էլ չեն ունեցել ոգնութիւն ցույց տալու:

Պրոֆմիութենական մեր ղեկավար որդանների ապարատի դերն ստորին կազմակերպութիւնների ղեկավարման գործում հսկայական է, և թերագնահատել այդ դերը չի կարելի: Միութենական որդանների ղեկավարութիւնը և ապարատն ամենից առաջ և ամենից շուտ պետք է ամենախիստ կերպով պահպանեյին պրոֆմիութենական կազմակերպութիւնների աշխատանքի ղեմնկրատական սկզբունքները, այն է՝ մասսաների առջև հազվետու լինելը, պրոֆմիութենական որդանի ամբողջ լործունե-

յուլթյան նկատմամբ մասսաների անպայմանական վերահսկողութիւնն ապահովելը:

Ապարատի, նամանավանդ ղեկավար ասպարատի խնդիրն այն է, վոր այն կարողանա կազմակերպել վերադաս կազմակերպութիւնների առաջադրանքների ճշգրիտ կատարումը, ամբողջի պրոֆմիուլթենական կարգապահութիւնը, ոժանդակի ստորին աշխատողներին: Պրոֆմիուլթենական ասպարատը դեռ շատ վատ է ապահովում այս խնդիրների լուծումը: Բոլոր պրոֆմիուլթենական ղեկավար որդանները, սկսած միուլթյունների կենտկոմներէից և ՀԱՄԿԽ-ից, պետք է վերջ տան իրենց ասպարատի՝ դեպի կազմակերպական աշխատանքն ունեցած անպատասխանատու վերաբերմունքին: Կազմակերպական աշխատանքը վերջին ժամանակներս պրոֆմիուլթյուններում բոլորովին վերացված է յեղել: Կազմակերպական հարցերին ցույց տրվող այդպիսի արհամարհական վերաբերմունքի հետևանքներն արտահայտվում են, որինակ, վոչ միայն միուլթյունների հենց կենտկոմների, այլև հատկապես նրանց տեղական որդանների կազմակերպական կառուցվածքում: Շատ միուլթյուններում բացակայում է ցեխային կոմիտեների, գործարկումների ու տեղկոմների, մարդային կոմիտեների հստակ կազմակերպական կառուցվածքը: Չկան կանոնադրութիւններ միուլթենական որդանների մասին, և յուրաքանչյուր միուլթենական որդան մտնում է այն կառուցվածքը, վորն իրեն նպատակահարմար է թվում: Այս բոլորը վատ է անդրադառնում պրոֆմիուլթյունների աշխատանքի վրա:

ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱՌԱՋ

Ընկեր Ստալինը ԿԿ վերջին պլենումում, խոսելով ղեկավարների աշխատանքի ստուգման մասին, մատնանշում էր.

«Վորոչ ընկերներ կարծում են, թե մարդկանց ստուգել կարելի չէ միայն վերելից, յերբ ղեկավարներն իրենց ղեկավարած մարդկանց ստուգում են նրանց աշխատանքի արդյունքներով: Այդ ճիշտ չէ: Ստուգումը վերելից, իհարկէ, հարկավոր է, վորպես մարդկանց ստուգելու և առաջադրանքների կատարումն ըստուգելու իրական միջոցներից մեկը: Բայց վերելից ստուգելը դեռ բնավ չի սպառում ստուգման ամբողջ գործը: Գոյութիւն ունի նաև մի այլ տեսակի ստուգում, ստուգում ներքեից, յերբ մասսաները, յերբ ղեկավարվողներն ստուգում են ղեկավարներ-

րին, նշում են նրանց սխալները և մատնանշում են այդ սխալներն ուղղելու ճանապարհները: Այդ տեսակ ստուգումը մարդկանց ստուգելու ամենախիստական յեղանակներից մեկն է»:

Սակայն ներքեից ստուգելը յենթադրում է նրա իրադրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Վորո՞ք են այդ պայմանները: Ամենից առաջ այդպիսի պայման է հանդիսանում մեր բոլոր թերութիւնների քննադատութիւն և ինքնաքննադատութիւն, պրոֆկազմակերպութիւնների ղեկավարների սխալների ու թերութիւնների քննադատութիւն և ինքնաքննադատութիւն վարից վեր լայն ծավալումը: Բարեհոգութիւնը, ինքնահանդատացումը, քաղքենիական ինքնասիրահարվածութիւնը և թերութիւնների կոծկումը լայնորեն տարածվել են շատ պրոֆմիուլթենական որդանների աշխատանքում: Պետք է ուղղակի ասել, վոր քննադատութիւնը և ինքնաքննադատութիւնը կուսակցութիւն ԿԿ պլենումի վորոշումից և ընկեր Ստալինի ղեկուցումից հետո միայն սկսում են ճանապարհ հարթել իրենց համար, բաց անելով հսկայական թերութիւններ և ամենակոպիտ խեղաթյուրումներ մեր շատ կազմակերպութիւնների ու ղեկավարների պրոֆմիուլթենական աշխատանքում:

ՀԱՄԿԽ-ի պրոֆմիուլթենական ակտիվում յես բերեցի հաստոցա-գործիքային արդյունաբերութիւն միութիւն ԿԿ նախագահ ընկ. Պաստուխովին վերաբերող որինակը. ընկ. Պաստուխովը միութիւն ԿԿ պլենումում ինքնաքննադատութիւն որինակ ցույց տալու փոխարեն ինքնաքննադատութիւնը ճնշելու ճանապարհը բռնեց: Նույնպիսի դրութիւն է նաև քաղլուսաշխատողների միութիւն կենտկոմում, կոմունալ և բնակարանային շինարարութիւն բանվորների միութիւն կենտկոմում և միութիւնների միջանի այլ կենտրոնական կոմիտեներում: Այս փաստերը ցույց են տալիս, վոր ինքնաքննադատութիւն և մանավանդ ղեկավարների աշխատանքի թերութիւնների քննադատութիւն գործը, բնավ էլ բարեհաջող վիճակում չէ մեղանում: Յեւ մեղ անհրաժեշտ է պայքարել քննադատութիւնը և ինքնաքննադատութիւնը սահմանափակելու, յերբմն էլ ուղղակի ճնշելու փորձերի դեմ:

Յես պետք է ՀԱՄԿԽ-ի պլենումում ասեմ, վոր այդպիսի դրութիւն պատասխանատուութիւն հսկայական բաժինն ընկնում է նաև ՀԱՄԿԽ-ի ղեկավարութիւն վրա, ՀԱՄԿԽ-ի քարտուղարների վրա: Պատասխանատուութիւն այն բանի համար, վոր մենք չապահովեցինք ինչպես, առաջին հերթին, մեր սխալները

ու թերությունները, նույնպես և միությունները կենտրոնները ու նրանց ղեկավարները աշխատանքում յեղած խոշորագույն թերությունները քննադատության և ինքնաքննադատության անհրաժեշտ ծավալումը:

Ներքևից ստուգում կատարելու, քննադատությունը և ինքնաքննադատությունը դարգացնելու համար պայմաններ ապահովելու դործում կարևորագույն տեղը պետք է հատկացնել այն բանին, վոր մեր բոլոր որդանները հաշվետու լինեն մասսաների առաջ և լիովին վերականգնվի միության յուրաքանչյուր անդամի անկապտելի իրավունքը՝ ազատություն մասնակցելու միութենական կյանքի բոլոր հարցերի քննարկմանը:

Վերջին ժամանակներս համարյա բոլոր ձեռնարկություններում պրոֆմիութենական կազմակերպությունները բոլորովին զազարեցրել են ընդհանուր ժողովներ գումարելը պրոֆմիութենական աշխատանքի հարցերի շուրջը, — հարցեր, վորոնք հուզում են բանվորական մասսաներին: Պետք է ուղղակի ասել, վոր դործարկումներն ու տեղկումները մինչև վերջին ժամանակներըս ընդհանուր ժողովներ գումարում էյին միայն այն դեպքում, յերբ նրանց սեղմում էյին վերելից, կամ թե ընդհանուր քաղաքական կամպանիաների հետ կապված հարցերի քննարկման համար: Շատ հազվադեպ էյին ընդհանուր ժողովներ գումարվում պրոֆմիութենական հարցերի շուրջը, սոցիալական ապահովագրության, կենցաղի, կուլտուրայի և այլ հարցերի շուրջը:

Գուրեմի ձեռնապակու դործարանում վերջին ժամանակներն սկսել են կիրառել միության անդամների ցեխային և հերթափոխային ընդհանուր ժողովներ գումարելու ձևը: Սակայն այդ ընդհանուր ժողովների համար ուրիշ ժամանակ չեն գտել, բայց յեթե ճաշվա ընդմիջումը: Տեղական պրոֆմիութենական ղեկավարները մոռացել են, ինչպես յերևում է, վոր ճաշվա ընդմիջումը տրվում է նրա համար, վորպեսզի բանվորները կարողանան ճաշել ու հանգստանալ: Անկախ զրանից, հազիվ թե մի ժամը բավական լինի պրոֆմիութենական կյանքի լուրջ հարցերի քննարկման համար:

Հարկավոր է ավելացնել, վոր հարցերը թույլ են նախապատրաստվում, բանվորների առաջարկությունները վատ են գրի առնվում, արձանագրությունները յերկար ժամանակ են ձևակերպվում: Իսկ ամենադժխալորը՝ վոչ վոք չի ստուգում և չի

անհանդատանում այն մասին, վորպեսզի ընդհանուր ժողովների վորոշումները կենսագործվեն:

Այնուամենայնիվ, այդ պայմաններում էլ ընդհանուր ժողովները հաճախողների թիվը կազմում է աշխատողների 70—80 տոկոսը: Այս վկայում է, վոր բանվորները շահագրգռված են աշխատի հարցերի քննարկմամբ, ինչպես են անգրագիտության վերացումը, հանգստի տներ ուղարկվողների թեկնածուությունների հաստատումը, տեղերի բաշխումը մանկապարտեզներում, պրոֆիտմարկների կազմակերպիչների աշխատանքը, միության անդամ ընդունելը և ուրիշ հարցեր: Այժմ պահանջվում է արմատապես փոխել պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովներ գումարելու պրակտիկան և ձեռնարկության մեջ ու ցեխում այդ ժողովների համար իսկապես ապահովել պրոֆմիութենական բարձրագույն որդանի դերը՝ պրոֆմիութենական աշխատանքի բոլոր հարցերի լուծման դործում:

Յուրաքանչյուր դործարտեղկումի համար վորպես պարտադիր կանոն պետք է սահմանել պարբերաբար, վոչ պակաս, քան ամիսը մեկ անդամ, տվյալ ձեռնարկության մեջ աշխատող միության անդամների ընդհանուր ժողովների գումարումը:

Այս ամենը շատ ընկերների տարրական բան կարող է թվալ: Բայց պետք է ուղղակի ասել, վոր հենց այդ տարրական բանն է, վոր պակասում է պրոֆմիութենական կազմակերպությունների աշխատանքում: (Չայնեթ՝ ձիշտ է): Յեթե պրոֆմիութենական աշխատողներն ավելի հաճախակի լսեն ճամարությունը բանվորներից, այդ կողմի վերացնելու այն թերությունները, վորոնք մեզ մոտ դեռևս շատ են:

Գլխավորը, վոր պահանջվում է, այդ ընդհանուր ժողովներում ընդունված վորոշումների կենսագործումն ապահովելն է: Գործարկումներն ու տեղկումները պետք է սովորեն հարգել ընդհանուր ժողովների վորոշումները և հիշեն, վոր այդ վորոշումների կատարումն իրենց ուղղակի և անմիջական պարտականությունն է: Ինձ թվում է, վոր վորոշումների կատարումն ստուգելու լավագույն յեղանակը կլինի, յեթե յուրաքանչյուր ընդհանուր ժողովի սկզբում դործարկումն անպայման հաղորդեր նախորդ ժողովի վորոշումների կատարման մասին: Նույն այս պրակտիկան պետք է կիրառել նաև գործարկումների և տեղկումների, մարդկումների նախագահությունների, միությունների կենտրոնների նիստերում: Այդպիսի

կարգն անպայման կուժեղացնի պատասխանատվութիւնը միութենական որդանների վորոշումների կատարման համար: Ընդհանուր ժողովների գումարումը կուժեղացնի հաշվետվութիւնն ու կատարման ստուգումը և ամբողջ պրոֆմիութենական աշխատանքի աշխուժացման, պրոֆկադմակերպութիւնի հեղինակութիւնի բարձրացման ու պրոֆմիութիւնները մասսաներին մոտեցնելու հղոր գործիքը կհանդիսանա:

ԲԱՐՉՐԱՅՆԵԼ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆԸ—ՄԵՐ-ԿԱՅՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԲՈՒՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Ընկերներ: Պրոֆմիութիւնները աշխատանքի խոշորագույն թերութիւնները, վորոնց արտահայտութիւնն են մասսաներից կտրված լինելը, բանվորների ու ծառայողների կուլտուր-կենցաղային կարիքները բավարարող տնտեսական և պրոֆմիութենական որդանների աշխատանքում յեղած բյուրոկրատական խեղաթյուրումներին անտարբեր վերաբերմունք ցույց տալը, հասցրին այն բանին, վոր պրոֆմիութենական որդանները չկարողացան բաց անել վնասարարութիւնները սոցիալական ապահովագրութիւն, աշխատանքի պաշտպանութիւն գործում, բնակարանային-կենցաղային հարցերում: Այս բանի ուղղակի հետևանքն է հանդիսանում մեր մի շարք պրոֆմիութենական որդանների, այդ թիւում նաև ՀԱՄԿԽ-ի ապարատի ղեկի խճողումը դասակարգայնորեն թշնամի տարրերով ու ժողովրդի թշնամիներով՝ տրոցկիստական և աջ վնասարարներով ու գիվերսաններով: Ներքդործողկոմատի որդանների կողմից ձերբակալվեցին ժողովրդի թշնամիներ՝ Ժարիկովը (յերկար ժամանակ ՀԱՄԿԽ-ում վարում էր ոտարերկրյա բանվորների բյուրոն), Կոտովը (մինչև 1936 թ. վարում էր ՀԱՄԿԽ-ի սոցիալական ապահովագրութիւնի բյուրոն), Անտոչինը (գիտահետազոտական ինստիտուտի գիրեկտորի տեղակալն էր), Միլյուտինը («Вопросы страхования» ժուռնալի խմբագիրն էր):

Մեր բարեհոգութիւնը, քաղաքական կուրութիւնը և բուլչեիկյան զգոնութիւնի բացակայութիւնը, միջանի պրոֆմիութենական աշխատողների խոսակցութիւններն այն մասին, թե պրոֆմիութենական ապարատում վնասարարներն անելիք չունեն, թշնամիներին հնարավորութիւն տվին անպատիժ կերպով, մի շարք տարիների ընթացքում իրենց կեղտոտ գործերը կատարե-

լու: Իհարկէ, ՀԱՄԿԽ-ի ապարատի մեջ ժողովրդի այդ թշնամիների թափանցելու հանցանքը, քաղաքական պատասխանատվութիւնն ընկնում է ՀԱՄԿԽ-ի ղեկավարութիւնի վրա և առաջին հերթին իմ վրա, վորպես ՀԱՄԿԽ-ի առաջին քարտուղարի:

Ժողովրդի թշնամիները, Փաշիստական վարձկանները՝ կապիտալիզմի տրոցկիստական և աջ ռեստավրատորները սողոսկել էին նաև ղեկավարութիւնի մեջ և միջանի միութիւնների կենտրոնական կոմիտեների մեջ՝ ղեկավար աշխատանքի: Այսպես, Դոնրասի կուբաս-քիմիական արդյունաբերութիւնի միութիւնի Կի նախագահն էր տրոցկիստական վնասարար Գիլբուրդը: Նա ըստ էութիւնի քայքայեց միութիւնի աշխատանքը, վնասում էր սոցիալական ապահովագրութիւնի և աշխատանքի պաշտպանութիւնի բնագավառում:

Յես այստեղ պետք է ասեմ, վոր այդ միութիւնի Կի աշխատանքում գոյութիւն ունեցող խոշորագույն այլանդակութիւնները մասին և մասնավորապես Գիլբուրդի աշխատանքի մասին ՀԱՄԿԽ-ում մենք ազդանշաններ ունեցինք արդեն 1935 թիւին: Բայց այդ ազդանշաններին քաղաքական նշանակութիւն չտրվեց: Այդ միութիւնի Կի աշխատանքում ՀԱՄԿԽ-ի բաց արած այլանդակութիւնների հարցը հանձնվեց միութիւնի Կի պլենումի քննողութիւնը, նույնիսկ առանց ամբողջ այդ հարցը նախապես ՀԱՄԿԽ-ի նախագահութիւնի նիստին դնելու: Միութիւնի Կի պլենումում Գիլբուրդը կարողացավ կոծկել իր գործունեյութիւնը և շարունակեց վնասարարական աշխատանքը մինչև վերջին ժամանակները:

Ներքդործողկոմատի որդանները ձերբակալել են Կոլտիլովին՝ տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողների միութիւնի Կի նախագահին: Այդ վնասարարի քայքայիչ աշխատանքի վրջ բոլոր հետևանքներն են մինչև որս պարզված մեր կողմից:

Պրոֆմիութիւնների ապարատի ղեկավար ողակների խճոզվածութիւնը, անշուշտ, դրանով չի սպառվում: Այս ամենը մեր ղեկավար որդանների մեջ դասակարգային թշնամու թափանցման միայն առանձին փաստերն են, վորոնք հայտարարված են առանց հատուկ դժվարութիւնի: Նույն բանն այս կամ այն չափով նկատվում է և մի շարք այլ միութիւնների կենտկոմներում, նաև մարդային կոմիտեներում: Որինակ, բարձրագույն դպրոցների և գիտահետազոտական հիմնարկների աշխատողների միութիւնի Կի

դժով մենք ունենք մի շարք մարդային կոմիտեաներ՝ Լենինգրա-
դում, Գորկիում, Մինսկում, Նովոսիբիրսկում, վորսեղ հեռաց-
ված են կուսակցութեանից և ձերբակալված են յերկրամասային
կոմիտեաների նախագահները: Դասակարգային թշնամիներով
խճողվել եր փոստի աշխատողների միութեան Ազով-Սևծովյան
յերկրամասի կոմիտեայի քաղաքատը: Ժողովրդի թշնամիներով մեծ
չափով խճողվել եր Վորոշիլովի անվան յերկաթուղու աշխատող-
ների պրոֆմիութեան վարչութեանը: Նույնպիսի դրութեան մենք
ունենք երկարակապի միութեան Ազով-Սևծովյան յերկրամասա-
յին կոմիտեայում, վորը գլխավորում եր արոցկիստուհի Ուստի-
նովան:

Այս փաստերը վկայում են այն մասին, վոր մի շարք պրոֆ-
միութենական կազմակերպութեաններում բողոքական զգոնու-
թեանը կորցրել են, այն մասին, վոր շատ ղեկավարներ այնպիսի
մարդիկ դուրս յեկան, վորոնց խաբել ե գասակարգային թշնա-
մին: Անհանդուրժելի քաղաքական կուրսութեանը, անհոգութեան-
ը, քաղաքական հատկութեանների ստուգման և մարդկանց վե-
բահանդուրժեան բացակայութեան իրականում գրկեցին մեզ
թշնամիներին և նրանց հանցավոր գործերն իր ժամանակին մեր-
կայցնելու հնարավորութեանից:

ԳՐՈՑՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թույլ ավելք կանգ առնել պրոֆեսիոնալ միութեանների խոր-
հուրդների հետագա գոյութեան հարցի վրա: Միջմիութենական
որգանները մեծ դեր խաղացին խորհրդային պրոֆշարժման ամ-
բացման ու զարգացման գործում: Այդ դերն առանձնապես մեծ
եր բանվորներին քաղաքացիական պատերազմի ճակատների հա-
մար մորիլիդացիա անելու գործում, պարենավորման ջոկատներ
կազմակերպելու գործում: Վերականգնման ու վերակառուցման
ժամանակաշրջաններում պրոֆմիութեանների խորհուրդները կա-
տարում եյին կարևորագույն աշխատանք, պրոֆմիութենական
որգաններին ոգնութեան ցույց տալով միութեան անդամների
սպասարկման գործում: Այդ աշխատանքն առանձնապես անհրա-
ժեշտ եր մինչև միութեանների ապախոչորացումը, յերբ կենտրո-
նական կոմիտեաներն ի վիճակի չեյին ապահովելու ստորին կազ-
մակերպութեաններին ցույց տրվելիք մշտական ղեկավարութեան

նը և ոգնութեանը: Բայց այժմ, յերբ միութեանների կենտկոմ-
ներն ապախոչորացված են և մոտեցված են իրենց ծայրամասե-
րին, յերբ բարձրացված ե նրանց դերը միութեան անդամների
սպասարկման գործում, մենք ավելի ու ավելի յենք հանդիպում
հակասութեանների պրոֆխորհուրդների, միութեանների կենտ-
կոմիտեաների և նրանց տեղական որգանների աշխատանքում: Պրոֆ-
խորհուրդները ձգտում են փոխարինել միութեանների մարդային
և կենտրոնական կոմիտեաներին, միջամտում են միութեանների
կենտկոմիտեաների ոպերատիվ ղեկավարման գործին: Առաջ ե գալիս
զուգահեռականութեան աշխատանքի մեջ, վորը մեծ շփոթութեան
ե մտցնում ստորին միութենական կազմակերպութեանների գե-
կավարման գործում:

Իսկ ամբողջ կենսաթոշակային գործը Սոցիալական ապահո-
վագրութեան ժողկոմատին հանձնելու վերաբերյալ՝ Ժողկոմխորհի
վերջին վորոշման հետևանքով պրոֆխորհուրդների իրավասու-
թեան տակ մնաց ընդամենը աշխատանքի միայն յերկու բնագա-
վա՝ տեղական նշանակութեան ունեցող հանգստի տների ու սա-
նատորիանների կառավարումն ու նրանց շինարարութեանը, նույն-
պես և այն, վոր պետք ե ստուգել, թե կուսակցութեան, կառա-
վարութեան ու ՀԱՄԿՍ-ի վորոշումներն ինչպես են կատարվում
միութենական մարդային կոմիտեաների ու ստորին պրոֆմիութե-
նական կազմակերպութեանների կողմից:

Այն բանի ստուգումը, թե կուսակցութեան, կառավարութեան
և ՀԱՄԿՍ-ի վորոշումներն ինչպես են կատարվում միութեաննե-
րի գործարկումների և մարդային կոմիտեաների կողմից, պետք ե
լիովին իրադործեն միութեանների կենտկոմները:

Ինչ չափով վոր պրոֆմիութեանների խորհուրդները ներկա-
յումս միութեանների կենտկոմների աշխատանքը կրկնող կազմա-
կերպութեաններ են հանդիսանում, նրանց գոյութեանը վճի մի
բանով չի արդարացվում: Այդ պատճառով ել ՀԱՄԿՍ-ի նախա-
գահութեանը առաջարկութեան ե մտցնում պլենում միջ-
միութենական որգանները վերացնելու մասին: (Ձայ-
ներ՝ ձիշտ ե: Ծափահարութեաններ): Ինչպես յերե-
վում ե, ձեր ծափահարութեանները նշանակում են, վոր դուք
համաձայն եք ՀԱՄԿՍ-ի նախագահութեան առաջարկին: (Ծափա-
հարութեաններ: Ձայներ՝ ինչպես առաջարկ ե: Ձի՞ կարելի,
արդյոք, մի քիչ չուտ անել այդ): Ի՞նչպես վարվել տեղական
նշանակութեան ունեցող հանգստի տների և սանատորիանների

հետ: Մեխանիկորեն բաժանել հանդստի տները միությունների կենտրոնական կոմիտեների վրա՝ չի կարելի: (Ձայնե՛ր՝ շիշտ է:) Մենք դրանով խիստ ծանր դրության մեջ կգնե՛-
յինք այն միությունների կենտրոնները, վորոնք, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, սակավագոր միություններ են՝ ըստ միության միավորած անդամների քանակության և ըստ իրենց բյուջեյի: Ակներև է, վոր հանդստի տների մի մասը հարկ կլինի հանձնել վորոշ միությունների կենտրոնների, իսկ հանդստի տնե-
րի մյուս մասի համար—կազմակերպել համապատասխան անտե-
սական միավորում, վորը հարկ կլինի յենթարկել ՀԱՄԿԽ-ին, վորպեսզի դրանով իսկ ստեղծվեն պայմաններ բոլոր պրոֆմիություններին ավելի լրիվ սպասարկելու համար:

Ընկերներ: Թույլ տվե՛ք կանգ առնել պրոֆմիութենական աշխատանքի առանձին բնագավառների վորոշ բնութագրման վրա:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԼՍՅՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Նախ և առաջ խոսենք սոցիալական ապահովագրության բնագավառի աշխատանքի մասին: Կասկած չկա, վոր սոցիալա-
կան ապահովագրությունը պրոֆմիություններին հանձնելուց հետո կան վորոշ բարելավումներ այդ գործի ընդհանուր դրված-
քում: Այդ բարելավումներն արտահայտվում են այն բանում, վոր սոցիալական ապահովագրության աշխատանքը փոխադրվել է ձեռնարկությունները: Վճարման կետերն անմիջականորեն ձեռ-
նարկություններում կազմակերպելը՝ տերիտորիալ ապահովագրա-
կան դրամարկղների փոխարեն, հնարավորություն տվեց ավելի լավ սպասարկելու բանվորներին ու ծառայողներին: Այնուամե-
նայնիս, ինչպես յես վերը նշեցի, խոշոր թերություններ կան սոցիալական ապահովագրության գործը պրոֆմիություննե-
րի կողմից յուրացնելու ասպարեզում: Պրոֆմիությունները չկա-
րողացան հասնել հիմնականին՝ ներգրավելու բանվորներին ու ծառայողներին սոցիալական ապահովագրության կառավարման և հսկայական միջոցների ծախսման վերահսկողության գործի մեջ:

Բանվորների ու ծառայողների լայն մասսաների առաջ հաշ-
վետու լինելու գործի բացակայությունը չէր կարող չառաջացնել

աշխատանքի մեջ անվերահսկողականություն, և ստեղծվեց մի
երազրություն, վորը հնարավորություն տվեց ամեն տեսակ ժու-
րիկների ու խաբեբանների խցկվելու սոցիալական ապահովագրու-
թյան ապարատը: Վերցրե՛ք Ուկրաինական գործը, վորտեղ հայտ-
նի ժուրիկներն Ուկրաինական պրոֆխորհրդի նախագահության
աչքի առջև մի շարք տարիների ընթացքում գողանում և փչաց-
նում էյին պետական միջոցներից հսկայական գումարներ: Մի-
ջոցների վատնում և փչացում տեղի յե ունեցել պրոֆմիություն-
ների Լենինգրադի, Բելոռուսիայի, Կուրսկի և Ողեսսայի խոր-
հուրդներում: Աշխտողկոմատից ՀԱՄԿԽ-ի ապարատի մեջ հաջող-
վել է քոչել վնասարար-ընկերանա Կոտովին, վորն ոգտվելով
մեր քաղաքական գեղնության թուլացումից, մի շարք տարիների
ընթացքում միլիոնավոր ռուբլիներ է ցրել տվել այնպիսի նապ-
տակների համար, վորոնք վոչ մի առնչություն չունեն աշխատա-
վորների կարիքների հետ:

ՀԱՄԿԽ-ի նախագահությունը դատել է մի հանձնաժողով, վորը պետք է մանրամասնորեն պարզի, թե Կոտովին ինչ ձևով և
ինչի վրա յե ցրել տվել միջոցները և ով է յեղել նրա գործա-
կիցը: Սակայն յես պետք է ասեմ, վոր այդ չի վերացնում
ՀԱՄԿԽ-ի նախագահության վրայից քաղաքական պատասխա-
նատվությունը՝ Կոտովի վերաբերմամբ թույլ տրված բերան-
բացության համար: ՀԱՄԿԽ-ն ուներ Կոտովին մերկացնելու բո-
լոր հնարավորությունները, յեթե վոր միքանի միլիարդ բյուջե
ունեցող անտեսության ընդունումը Աշխտողկոմատից իր ժամանա-
կին մեքենարար, ձևականորեն չկատարեր: Անցնելով ՀԱՄԿԽ-ի
ապարատի մեջ՝ ժողովրդի թշնամի Կոտովը շարունակել է
զբաղվել սխալ պլանավորումով, անց է կացրել սանատորիաների
չինարարության վնասարարական կազմակերպում, խառնաշփոթել
և հաշվառումն ու հաշվետվությունը: Այդպիսի փաստեր կարող
էյին տեղի ունենալ սոցիալական ապահովագրության աշխա-
տանքում հաշվետվության և վերահսկողության բացակայության
հետևանքով միայն, քաղաքական այն անհողության հետևանքով
միայն, վորով ՀԱՄԿԽ-ը և բոլոր պրոֆմիութենական որդաննե-
րը մոտեցել են այնպիսի հսկայական և կարևոր մի գործի, ինչ-
պիսին սոցիալական ապահովագրությունն է:

Թույլ տվե՛ք այժմ համառոտակի կանգ առնել այն խնդիրնե-
րի վրա, վորոնք մեր առջև ծառայած են սոցիալական ապա-
հովագրության բնագավառում:

Ժողովուրդի 1937 թ. մարտի 23-ի վորոշումը «Պետական սոցիալական ապահովագրության բյուջեյից միջանի ծախսեր հանելու և ապահովագրական մուծումների դրույքը փոխելու մասին», ե՛լ ավելի բարձրացնելով միությունների կենտրոնական կոմիտեների ինքնուրույնությունը սոցիալական ապահովագրության միջոցները ծախսելու գործում, հնարավորություն է տալիս զգալիորեն բարելավելու բանվորների ու ծառայողների սպասարկման աշխատանքը: Ապահովագրական մուծումների դրույքի փոխումը, ինչպես և առողջապահության, կենսաթոշակների և այլնի համար կատարելիք փոխանցումներից ազատվելն ավելացնում է անմիջականորեն պրոֆմիությունների կողմից ըստ 1937 թ. սոցիալական ապահովագրության բյուջեյի ծախսվող միջոցները 1.500 միլիոն ուրբով և ապահովում է հղիության ու նորածինների խնամքի համար հատկացվելիք նպաստների ծախսերի բարձրացումը մինչև 1.145 միլիոն ուրբով՝ 1936 թ. 553 միլիոն ուրբով հանդեպ:

Հանգստի տների և սանատորիաների ուղեգրերի համար նախազեմված է 776 միլիոն ուրբով՝ անցյալ տարվանից 54 տոկոսով ավելի: Այս տարի մենք հնարավորություն կունենանք հանգստյան տներն ուղարկելու 2.162.000 բանվոր ու ծառայող՝ 1936 թ. 1.700.000-ի հանդեպ: Մանատորիաները կուղարկենք 413.000 մարդ՝ 1936 թ. 230.000-ի հանդեպ: Այդ հնարավորություն կտա հանգստի տներում ավելի լավ սպասարկելու բանվորների պահանջմունքները:

1937 թվականի սլանով նախատեսված է պիտեբրական ճամբարների և մանկական սանատորիաների ծախսերն ավելացնել մինչև 128 միլիոն ուրբով՝ 1936 թ. 62 միլիոն ուրբով հանդեպ, արտադարձրական սպասարկման ծախսերը՝ 40 միլիոն ուրբով՝ 16 միլիոն ուրբով հանդեպ:

Սոցիալական ապահովագրության աշխատանքի զբաղմունքը բարելավելու և 3 հազարից ավելի բանվորներ ունեցող ձեռնարկությունների գործարկումների ինքնուրույնությունն ուժեղացնելու համար պետք է առանձնացնել սոցիալական ապահովագրության ինքնուրույն բյուջեներ, իսկ մնացած ձեռնարկություններում մտցնել նախահաշիվներ: Այդպիսի կարգը հնարավորություն կտա սոցիալական ապահովագրության բյուջեյի քննարկման գործի մեջ ներգրավել բանվորների լայն մասսաներին, վորոնք և պետք է վորոշեն, թե ինչպես ոլետք է ողտադոր-

ծենք սոցիալական ապահովագրության միջոցները: Յեթե միության անդամների լայն մասսաներն իմանան, թե ինչի վրա յեն ծախսվելու սոցիալական ապահովագրության միջոցները, ապա նրանք կհետաքրքրվեն, թե ինչի վրա և ինչպես են փաստորեն ծախսվում միջոցները: Գործարկումները պետք է սխտեմատիկորեն հաշիվ տան մասսաներին միջոցների ծախսման մասին:

Պետք է այնպես վերակառուցել սոցիալական ապահովագրության աշխատանքը, վորպեսզի ապահովվի միության անդամների լայն մասսաների մասնակցությունն այդ գործում և նրանց վերահսկողությունը միջոցների ծախսման վրա:

Գործարկումներին և տեղկումներին կից սոցիալական ապահովագրության խորհուրդներ կազմակերպելը կարող է զգալի չափով ապահովել այդ խնդրի լուծումը: Սոցիալական ապահովագրության խորհուրդների աշխատանքի փորձը միջանի ձեռնարկություններում դրական արդյունքներ է տալիս:

Թերևս ամենից հետաքրքրականը Կոլումենսկի՝ Կուլբիչեվի անվան գործարանի սոցիալական ապահովագրության խորհրդի աշխատանքի փորձն է: Պետք է ասել, վոր շատ ձեռնարկություններում սոցիալական ապահովագրություն ղոյություն ունի դեռևս ձեռնարկներն: Նրանց աշխատանքի լուրջ արդյունքներ չկան: Կուլբիչեվի անվան գործարանն այդ տեսակետից բացառություն է կազմում: Կոլումենսկի՝ Կուլբիչեվի անվան գործարանի ապահովագրական խորհուրդն ընտրվել է ընդհանուր ցելալային ժողովներում և հաստատված է գործարկումի պլենումի կողմից: Խորհուրդն իր աշխատանքում հենվում է ապահովագրական պատվերակների ակտիվի վրա, վորոնք 204 հոգի յեն, և աշխատանքի պաշտպանության հանրային տեսուչների վրա՝ 100 հոգի: Ապահովագրական պատվերակները խորհուրդների ղեկավարությունում վերահսկողություն են կատարում տանը, ընկերական ոլնություն են ցույց տալիս հիվանդացածներին, այցելում են հիվանդներին հիվանդանոցում, ցեխերում հայտարարում են հանգստի տներն ու սանատորիաներն ուղարկվելու կարիք ունեցող անձերին, վորոնց թեկնածություններն այնուհետև հաստատվում են պրոֆխմբակների, ցելալային կոմիտեների և գործարկումի կողմից: Հասարակայնությունը հանձինս ապահովագրական պատվերակների, հանձինս ապահովագրական խորհրդի՝ զգալիորեն կանոնավորեց ուղեգրերի ողտադործումը:

Ապահովագրական խորհրդի նիստերում քննարկվում են

գործարանի բանվորների համար կարևորագույն նշանակութուն ունեցող հարցեր՝ հիվանդանոցների և մանկամսուրների շինարարութան ընթացքը, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցի ընդարձակումը, նոր վիրաբուժական կորպուսի և ծննդաբերական տան շինարարութան վրա աղբանջանի պոստերի կազմակերպումը, հիվանդացութան և տրավմատիզմի ուսումնասիրությունը:

Ինչպես տեսնում եք, այս ամենը կենսական այնպիսի հարցեր են, վորոնցով բանվորները սաստիկ շահագրգռված են:

Հիվանդացությունների պատճառներն ապահովագրական խորհուրդներին կողմից ուսումնասիրվելիս մշակվել են հիվանդանոցային թերթիկներն ըստ առանձին բժշկիկների: Պարզվել է հետաքրքրական մի պատկեր. վորջան ավելի մեծ թվով բժիշկներ են բուժում միևնույն հիվանդին, այնքան ավելի մեծ է հիվանդութան տևողությունը: Ահա, որինակի համար կվերցնեմ այն տվյալները, վոր կան ապահովագրական խորհուրդում գրելվի վերաբերյալ: Յեթե հիվանդին բուժում է մեկ բժիշկ, ապա նա հիվանդ է լինում միայն 5,2 օր, յեթե յերկու բժիշկ՝ 9,2 օր, յեթե յերեք բժիշկ՝ 14,1 օր: Նույնն է պատկերը բոլոր մյուս հիվանդությունների վերաբերյալ: Սուր-ստամոքսային հիվանդություններից մեկ բժիշկի մոտ բուժվողը հիվանդ է լինում միջին հաշվով 8,4 օր, յերեք բժիշկների մոտ բուժվողը՝ 14 օր: Այս տվյալների ուսումնասիրության հետևանքով ապահովագրական խորհուրդը, վորին մասնակցում են նաև բժիշկներ, գործարկումի ձեռքով միջոցներ ձեռք առալ, վորպեսզի հիվանդացածները բուժվեն մեկ բժիշկի մոտ:

Ապահովագրական խորհուրդը մեծ աշխատանք կատարեց բժիշկների հիմնական մասսային հիվանդությունների ու տրավմատիզմի դեմ մղվող պայքարի մեջ ներդրավելու համար: Դրա հետևանքը յեղավ այն, վոր հիվանդությունները և տրավմատիզմը նվազեցին: Յեթե 1936 թվի սեպտեմբերին 100 ապահովագրվածի համար ժամանակավոր անաշխատունակության դժով վճարվեց 104,6 օր, ապա այն բանից հետո, յերբ ապահովագրական խորհուրդներն սկսեցին հիվանդությունների ուսումնասիրման և հիվանդությունների կանխման աշխատանքը, ժամանակավոր անաշխատունակությունն իջավ 100 աշխատողի համար հոկտեմբերին՝ 64,7-ի, նոյեմբերին՝ 61,5-ի և դեկտեմբերին՝ 61,4-ի, 1937 թ. հունվարին՝ 63,4-ի, փետրվարին՝

62,0-ի, մարտին՝ 68,7-ի: Կորումենակի գործարանում հիվանդությունները 1936 թ. համեմատությամբ 1917 թվին զգալիորեն նվազել են շնորհիվ ապահովագրական խորհուրդի աշխատանքի, վորի մեջ նա կարողացավ ներդրավել միության անդամներին և բժշկական հասարակայնությանը:

Զգալիորեն նվազեց նաև տրավմատիզմը: 1936 թ. I յեռամսյակում վնասվածքի 425 դեպք է յեղել, իսկ 1937 թ. I յեռամսյակում՝ 251 դեպք, ըստվորում բանվորների թիվը 1936 թվի I յեռամսյակի համեմատությամբ ավելացել էր 1.770-ով:

Հարկավոր է, վոր գործարկումները և տեղկումները և ցեխկումները, նույնպես և միությունների կենտրոնական, մարդային կոմիտեներն ու շաղրությամբ վերաբերվեն ապահովագրական խորհուրդների աշխատանքին և ռժանդակեն նրանց:

Արդեն գործող ապահովագրական խորհուրդների աշխատանքի փորձը ցույց տվեց, վոր նրանք ոգնում են ներդրավելու բանվորների և ծառայողների ու բժշկական հասարակայնության ակտիվը սոցիալական ապահովագրության հարցերի լուծման մեջ և նպաստում են աշխատավորների սպասարկման բարելավմանը:

Գործարկումներին ու տեղկումներին կից սոցիալական ապահովագրության խորհուրդները պետք է ընտրվեն ապահովագրական պատվիրակների ընդհանուր ժողովներում և հաստատվեն գործարկումների ու տեղկումների պլենումների կողմից: Սոցիալական ապահովագրության խորհուրդների հիմնական ֆունկցիաները պետք է լինեն՝ բանվորների ու ծառայողների ժամանակավոր անաշխատունակության ժամանակ տրվելիք սոցիալական ապահովագրության նպաստների չափի սահմանումը, սանատորիաներ ու հանգստի տներ ուղարկելը, բանվորների ու ծառայողների յերեխաներին մանկամսուրներ, մանկապարտեզներ, պիտեբերական ճամբարներ ուղարկելը, հիվանդանոցային թերթիկներ տալու վերահսկողության կազմակերպումը, մանկական հիմնարկների, հիվանդանոցների, պոլիկլինիկաների աշխատանքի վերահսկողությունը:

Սոցիալական ապահովագրության բնագավառում ամենակարևոր խնդիրներից մեկը աշխատավորներին սանատորիաներով և հանգստի տներով սպասարկելու գործի զգալի բարելավումն է: Ուղեգրերի բաշխումը մեզ մոտ անբավարար է գրված: 1936 թվի 9 ամիսների հաշվետու տվյալները ցույց են տա-

լիս, վոր չի ոգտագործվել հանգստի տների 10 · 230 ուղե-
գիր, սանատորիաների 833 ուղեգիր, բանվոր յերիտասարդու-
թյան հանգստի տների 312 ուղեգիր, յերեխաների հանգստի
տների 1407 ուղեգիր և մանկական սանատորիաների 327 ուղե-
գիր: Չողտագործված ուղեգրերի արժեքն է 2 · 700 · 000 ռուբլի:
Ի՞նչ է, ընկերներ, միթե մենք մարդ չունենք հանգստի տներն
ու սանատորիաներն ուղարկելու:

Այս ի՞նչ խայտառակ յերևույթ է: Սա վոչ մի բանով չի
կարելի արդարացնել: Այս փաստը վկայում է, վոր պրոֆմիու-
թենական կազմակերպությունների կողմից հանցավոր արհամար-
հական վերաբերմունք է ցույց տրվում դեպի միության անդամ-
ների կարիքները: Մի կողմից՝ քամուն է տրվել 2 · 700 · 000 ռուբ-
լի, իսկ մյուս կողմից՝ ուղեգրերի պահասության պայմաննե-
րում նրանց այդպիսի հսկայական քանակությունը չի ոգտա-
գործվել: Այս ամենահրեշավոր բյուրոկրատիզմ է:

Ահա տվյալներն ըստ առանձին միությունների կենտրոնա-
կան կոմիտեների:

Վոսկու և պլատինի հանույթի միության ԿԿ-ում չի ոգտա-
գործվել սանատորիաների 46 ուղեգիր, հանգստի տները՝ 133:

Արևելքի ու Հեռավոր-Արևելյան յերկրի յերկաթուղիների
բանվորների միության ԿԿ-ում չի ոգտագործվել հանգստի տնե-
րի 1135 ուղեգիր և սանատորիաների 48 ուղեգիր:

ՌիՖՍՄ տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողնե-
րի միության ԿԿ-ում չի ոգտագործվել սանատորիաների 23 ու-
ղեգիր ու հանգստի տներ 219 ուղեգիր և այլն:

Հենց այդ միևնույն ժամանակ միության տասնյակ հազա-
րավոր անդամներ չեն բավարարվում անհրաժեշտ բուժումով ու
հանգստով: Այդպիսի խայտառակ դրության հիմնական պատ-
ճառը մշտական վերահսկողության բացակայությունն է հասա-
րակայնության կողմից: Այդ է գլխավորը:

Ուղեգրերը լրիվ չողտագործելու վրա մեծ ազդեցություն է
գործում նաև այն հանգամանքը, վոր միությունների կենտրո-
նական կոմիտեներն ուղեգրերն ուչ են ուղարկում գործարկոմ-
ներին և անբավարար է սանատորիաներն ուղարկվող հիվանդնե-
րի ընտրությունը: Լինում են դեպքեր, յերբ հիվանդներին վե-
րադարձնում են կուրորտից վորպես անհամապատասխան հիվան-
դի: Այդ պատճառով հարկավոր է ուժեղացնել վերահսկողու-

թյունն ընտրող հանձնաժողովների աշխատանքի վրա, ձգտելով
ամրացնել նրանց կազմը վորակյալ բժշկական աշխատողներով:

Սոցիալական ապահովագրության բնագավառում այժմ հար-
կավոր է բոլոր կազմակերպությունների ուշադրությունն առանձ-
նապես դարձնել Փինանսական դիսցիպլինայի ամրացման վրա:
այդպիսի դիսցիպլինան կապահովեր սոցիալական ապահովագրու-
թյան բոլոր միջոցների եֆֆեկտիվ ոգտագործումը: Հարկավոր
է անխնա պայքար պետական միջոցների հաիչտակման ու փչաց-
ման դեմ, հարկավոր է մշտական պարբերական հաշվետվություն
մասսաների առջև, պետք է ուժեղացվի վերահսկողությունը և
ապահովվի սոցիալական ապահովագրության միջոցների ծախս-
ման լուրջ վերստուգումը:

Պրոֆմիությունների սոցիալական ապահովագրության ապա-
րատներից պետք է արտաքսվեն բոլոր ժուրիկները, վնասարար-
ները, բյուրոկրատները, այն մարդիկ, վորոնք արժանի չեն
քաղաքական վստահության և անընդունակ են դործով ապահո-
վելու բանվորների ու ծառայողների կարիքների բավարարման
խսկական հոգացողությունը: Յուրաքանչյուր պրոֆմիութենա-
կան աշխատող պետք է հիշի, վոր պրոֆմիությունների հեղինա-
կությունը մասսաների մեջ կախված կլինի այն բանից, թե
պրոֆմիությունն ինչպես է պայքարում սոցիալական ապահովա-
գրության բյուջեյի կատարման համար, այն բանից, թե պրոֆ-
միությունն ինչպես է հոգում աշխատավորների և նրանց ընտա-
նիքի անդամների նյութական-կենցաղային պայմանների բարե-
լավման մասին: Մեղանում կան բոլոր պայմանները, վորպեսզի
հենվելով մասսաների վրա, ամենամոտ ժամանակում հաղթա-
հարենք գերատեսչական սովորություններն ու ընտելությունները
և արմատապես փոխենք պրոֆմիությունների սոցիալական ապա-
հովագրության աշխատանքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ԿՑԱՆՔԻ ՅԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԳՑԱՆԵԼՈՒ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՁԵՎՆ Ե

Աշխատանքի պաշտպանությունը պրոֆմիությունների աշ-
խատանքի ամենապատասխանատու բնագավառն է: Իսկ մեզու-
նում ի՞նչ դրության մեջ է աշխատանքի պաշտպանության դործը
ձեռնարկություններում: Պետք է ասել, վոր այդ դործը բացա-

հայտորեն անապահով դրոււթյան մեջ է, անհասարակ միջոցառումներ են պահանջուում այդ աշխատանքը բարելավելու, իսկ շատ դեպքերում՝ վերականգնելու համար: Աշխատանքի պաշտպանութեան գործի ծայրահեղորեն անապահով լինելու արտահայտութեան է տրամաբանորէն աճումը արդյունաբերութեան մի շարք ճյուղերում:

Տրամաբանորէն աճման պատճառներն ուսումնասիրելով դալիս ես այն յեղրակացութեան, վոր տրամաբանորէն արդյունք է տնտեսական որդանների ցուցաբերած արհամարհական վերաբերմունքի դեպի աշխատանքի պաշտպանութեան հարցերը և շատ պրոֆմիուութեանների յերևան բերած կարծատեսութեան և աշխատելու անկարողութեան: Մեր հանցանքը խստանում է նրանով, վոր դեպքերի մեծ մասում տրամաբանորէն պատճառներն ունեն կազմակերպական-տեխնիկական բնույթ: Այդ պատճառները հեշտութեամբ կարելի յէ վերացնել, յեթէ պրոֆմիուութեաններն ինչպէս պետքն է պայքարելին դրանց դեմ: Ծանր մեքենաշինութեան խոշորագույն գործարանների՝ Կիրովսկի, Իթորսկի, Կրամատորսկի, Ուրալսկի, Պոզոլսկի և այլ գործարանների վերաբերյալ յեղած տվյալները ցույց են տալիս, վոր 1936 թվականի I կիսամյակում տեղի ունեցած տրամաբանորէն 85 տոկոսի պատճառը բացառապէս կազմակերպական-տեխնիկական թերութեաններն են: Ահա այդ պատճառներից հիմնականները — աշխատանքըն ու աշխատատեղը ճիշտ չկազմակերպելու պատճառով՝ դժբախտ պատահարների 26 տոկոսը, աշխատանքի մեջ ճիշտ, անվրտանդ ձևեր կիրառելու վրա հսկողութեանը բացակայելու պատճառով՝ դժբախտ պատահարների 14,3 տոկոսը, սարքի ու գործիքների սարքին չլինելու պատճառով՝ դժբախտ պատահարների 17,3 տոկոսը, ցեխերն ու աշխատատեղերը խոնաված լինելու պատճառով՝ 8,6 տոկոսը, բանվորներին անվտանգութեան կանոնները չսովորեցրած լինելու պատճառով՝ 8,7 տոկոսը, արտահագուտը սարքին չլինելու պատճառով՝ 2,9 տոկոսը և այլն: Ասացեք ինդերմ, մի՞թէ այստեղ հատուկ միջոցներ է հարկավոր ներդրել: Յեթէ պրոֆմիութեանական որդաններն աշխատանքի պաշտպանութեանն ավելի մեծ ուշադրութեան նվիրելին, զգալիորեն կնվազեր տրամաբանորէն դեպքերի թիւը:

Մի՞թէ պրոֆմիութեանական կազմակերպութեանները չէյին կարող բոլոր այդ պատճառների վերացմանը հասնել, յեթէ

նրանք լրջորեն գործի կաշէյին աշխատանքի պաշտպանութեան համար: Չե՞ վոր մենք ունենք հասարակական տեսուչների բանակ, վորի ոգնութեամբ կարելի յէր հեշտութեամբ, առանց վորեւէ ծախսերի կանխել նման դեպքերը: Հենց դժբախտ դեպքը կանխելու, բանվորի առողջութեան մասին հոգ տանելու մեջ է պրոֆմիութեան աշխատանքի ամբողջ իմաստը՝ աշխատանքի պաշտպանութեան բնագավառում: Մի դեռ տե՛ս, թէ ինչ հատուկ միջոցներ են հարկավոր, վորպետքի մաքրեն դեպի աշխատատեղը տանող ուղանցքերը, մաքրեն ցեխերն աղբից ու անպետք թափթփանքից, հոգ տանեն գործիքները սարքելու մասին և այլն: Այդ գործը կարգի դրելու համար հարկավոր է միայն վերացնել մեր անվողնաշարութեանը: Հարկավոր է պայքարել տնտեսական որդանների՝ աշխատանքի պաշտպանութեան գործունեութեան մեջ յեղած բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ, պահանջել անվերապահորեն կատարել խորհրդային որեւէ ներք, և այն ժամանակ տրամաբանորէն անպայման կնվազի:

Յերկաթուղային կենտրոնի միութեան ԿԿ նախագահութեան վորոշումը կարող է ծառայել վորպէս վառ փաստ այն բանը չհասկանալու, վոր աշխատանքի պաշտպանութեանը պրոֆմիութեանների ամենակարեւոր խնդիրներից մեկն է: Ահա նրա բնագիւրը:

«Ժամանակին ու նպատակահարմար համարել պրոֆմիութեանների՝ աշխատանքի տեխնիկական ու սանիտարական տեսչութեան ուղերատիվ-վարչական Փունկցիաները Հաղ. ճանապարհների ժողկոմատի իրավասութեանը հանձնելը՝ անմիջականորեն յենթարկելով ժողկոմատին»:

(Ստորագրել է Գարբըր — համաձայնեցված է ընկ. Վորոպայեվի հետ 1936 թվի մայիսի 11-ին, տպագրված ու տեղերն է ուղարկված 1936 թվի մայիսի 11-ին):

(Ձայն՝ Յե՞րբ է ընդունված այդ վորոշումը):

Սա ընդունված է 1936 թվականի մայիսի 11-ին:

Յերկաթուղային կենտրոնի կենտրոնական կոմիտեն այս վորոշումն ուղարկել է բոլոր յերկաթուղային պրոֆմիութեաններին, վորոնք այդ վորոշումը հասկացել են իբրև դիրեկտիվ: Վորպէս արդյունք այդ բանի, Արևմտյան յերկաթուղու պրոֆմիութեանը լուծարեց տեխնիկական տեսչութեանը, իսկ Ձեր-ժինսկի յերկաթուղու պրոֆմիութեան նախագահը նամակ ուղղեց ճանապարհի բոլոր ծառայութեաններին, վորտեղ ասված էր,

Թե «յերկաթուղային Կենտրոնի միութեան ԿԿ նախագահու-
թեան վորոշման հիման վրա տեխնիկական ու սանիտարական
տեսչութեան ապերատիվ-վարչական Փունկցիաները հանձնվում է
ՀՃԺԿ իրավասութեանը»:

Իհարկե, ՀՃԺԿ այդ Փունկցիաներն իր վրա չվերցրեց:
(Լոգովսկի՝ Այդ վորոշումն արդյոք համաձայնեցված է յեղեկ
ՀԱՄԿԽ-ի հետ): Վոչ, բայց, այստեղ ՀԱՄԿԽ-ն ել մեղավոր է:
(Ձայնեք՝ Այդ ճիշտ է: Այստեղ Պոլոնսկու մասը խառն է): Այո՛,
ՀԱՄԿԽ-ը մեղավոր է, վորովհետեւ միութեանների կենտկոմնե-
րի աշխատանքին թույլ է վերահսկել: Յեթե մենք այդ աշխա-
տանքին վերահսկել չինք, ապա մենք իր ժամանակին կհակադրեցինք
այդ վորոշմանը, ինչպես նաև իր ժամանակին կբացատրեցինք ընկ-
Պոլոնսկու բրոշյուրի հիմնական դրույթների սխալները: Այսպի-
սով, միութեան կենտկոմը փաստորեն լուծարեց աշխատանքի
պայմանների սանիտարական ու տեխնիկական հսկողութեանը
յերկաթուղիներում: Միութեան կենտրոնական կոմիտեն մինչև
այժմ չի ուղղել իր սխալները, չի պարզաբանել, վոր իր ուղար-
կած վորոշումը կողիտ սխալ էր:

Պրոֆմիութեանների կողմից աշխատանքի պաշտպանութեան
գործի թերազնահատումն արտահայտվել է անվտանգութեան
տեխնիկայի բնագավառում յեղած խոշորագույն խայտառակու-
թեանների մասին բանվորների ահազանգումներն անտեսելու մեջ
ևս:

Պրոֆմիութեանական շատ աշխատողների անհոգութեանը դու-
րացնում էր հանցավոր գործունեությունը, տրոցկիստական և
աջ դիվերսանտների, վորոնք ոգտվում էին պրոֆմիութեանների
և տնտեսական որդանների դեպի աշխատանքի պաշտպանութեան
ու անվտանգութեան տեխնիկական ունեցած հանցավոր-անփութ
վերաբերմունքից:

Պրոֆմիութեանների քաղաքական զգոնութեան բթացումով
միայն կարելի չէ բացատրել վնասարարների գործելն աշխատան-
քի պաշտպանութեան բնագավառում: Միութեան անդամների ա-
մենակենսական շահերը մոռացութեան տալը միայն կարող էր
հասցնել խայտառակ փաստերի, վոր մենք ունենք այդ բնագա-
վառում:

Պրոֆմիութեանական կազմակերպութեանների ընտրութեան-
ների կապակցութեամբ անցկացվող հաշվետու ժողովների ժամ-
նակ աշխատանքի պաշտպանութեան և անվտանգութեան տեխնի-

կայի հարցերը քննելիս ամենալուրջ ուշադրութեանը պետք է
նվիրվի վնասարարութեան հետևանքների վերացմանը: Այդ հարցի
վրա պետք է առանձնապես սրել պրոֆմիութեան բոլոր անդամ-
ների ուշադրութեանը: ՀԱՄԿԽ-ի պլենումից անմիջապես հետո
պրոֆմիութեանական կազմակերպութեանները պետք է բոլոր ձեռ-
նարկութեաններում լայնորեն ծավալեն աշխատանքի պաշտպա-
նութեան և անվտանգութեան տեխնիկայի բնագավառում յեղած
վնասարարութեան հետևանքների վերացման միջոցառումների
կատարման ստուգումը՝ ներդրավելով շարքային բանվորներին և
ինժեներ-տեխնիկական աշխատողներին: Պետք է նկատի ու-
նենալ, վոր անվտանգութեան տեխնիկայի կանոնների ու նորմա-
ների վերանայումն անթույլատրելիորեն դանդաղ է ընթանում:
ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի պլենումը վորոշում է կայացրել այն մասին,
վոր անվտանգութեան տեխնիկայի կանոնների և նորմաների վե-
րանայումը տնտեսական որդանների գլխավոր վարչութեանների
և միութեանների կենտրոնական կոմիտեները պետք է ավարտած
լինեն մայիսի 5-ին: Կան միութեանների միջանի կենտկոմներ,
վորոնք թեև քիչ ուշացած, բայց և այնպես այդ աշխատանքով
զբաղվում են՝ ծանր մեքենաչինութեան, ազոտի արդյունաբերու-
թեան և հատուկ քիմիայի, ներկա-դեղագործական արդյունա-
բերութեան, ավիաորդյունաբերութեան: Բայց կան միութեան-
ների նաև այնպիսի կենտկոմներ՝ գյուղատնտեսական մեքենա-
չինութեան, յերկաթուղաչինութեան և մետրոյի, գունավոր մե-
տաղների մշակման, վորոնք դեռևս նոր միայն պատրաստվում են
ձեռնարկել այդ աշխատանքին: Մի՞թե վնասարարութեան տեղի
ունեցած փաստերը մինչև այժմ վոչինչ չեն սովորեցրել միու-
թեանների կենտրոնական կոմիտեների ղեկավարներին: Ժամանակ
է վերջ տալու պրոֆմիութեանական կազմակերպութեանների աշ-
խատանքում յեղած անհոգութեանը և դանդաղկոտութեանը, մա-
նավանդ այն դեպքերում, յերբ այդ կապված է տասնյակ ու հա-
րյուրավոր բանվորների կյանքի հետ: Պետք է ավելի արագ շրջվել
և բոլջեկորեն կատարել այն հանձնարարութեանները, վոր
կուսակցութեանը տալիս է պրոֆմիութեաններին:

Մենք պետք է ամեն կերպ դատապարտենք, վորպես քաղա-
քականապես վնասակար բան, այն դանցառու վերաբերմունքը, վոր
պրոֆեսիոնալ միութեանները ցուցաբերում են դեպի աշխատան-
քի որենադրութեան խախտումները: Ամենից անբարեհաջող տե-
ղամասերից մեկը, վորտեղ ամենից ավելի շատ է խախտվում

աշխատանքի որենադրութիւնը, արտաժամյա և հանգստի որերի աշխատանքներն ի չարը դործադրելն է: Կիրովսկի դործարանում (նախկին «Կարմիր Պուտիլովեց») 1935 թվի ընթացքում արտա- ժամյա աշխատանքի քանակը կազմում էր 1.590.348 ժամ, իսկ 1936 թվին նկատվում էր հետագա աճում՝ 1.779.877 ժամ: Մի՞թե պրոֆմիութիւնը կարող է հաշտվել այսպիսի դրության հետ:

Այս փաստերը վկայում են, վոր ձեռնարկութիւններում բացակայում է համառ պայքարն ընդդէմ տնտեսավարների և ին- ժեներ-տեխնիկական այն աշխատողների, վորոնք չարանենդո- րեն խախտում են խորհրդային աշխատանքային որենադրութիւ- նը: 7-ժամյա աշխատանքային որվա խախտումը խորհրդային յերկրում անթույլատրելի յէ: Նա վնասաբեր է թէ բանվորին և թէ արտադրութիւնը, և այդ պետք է հասկանան, վերջապես, պրոֆմիութենական աշխատողները, վորոնց ուղղակի պարտա- կանութիւնն է ամենից անողոք պայքար հայտարարել այն տնտե- սավարներին, վորոնք խախտում են աշխատանքի մասին դոյու- թիւն ունեցող որենքները:

Աշխատանքի պաշտպանութիւնն ընդամենը պրոֆմիութիւնների անբավարար աշխատանքը նաև նրանով է բա- ցատրվում, վոր պրոֆմիութիւնների կենտրոնական կոմիտեների հսկայական մեծամասնութիւնն ղեկավար աշխատողներն աշխա- տանքի պաշտպանութիւնը կապալահանման են աշխատանքի տե- սուչներին, իսկ իրենք չեն հետաքրքրվում և չեն ուսումնասի- րում դժբախտ պատահարների և տրամադատի պատճառները, չեն ղեկավարում այդ կարևորագույն աշխատանքը: Այդ բանում մեղավոր է նաև ՀԱՄԿՍ-ը, վորը չի ապահովել միութիւնների կենտկոմների աշխատանքի տեսչութիւնն դործունեյութիւնն ղե- կավարումը և այդ դործունեյութիւնն հսկողութիւնը: Պրոֆմիութիւնների նորընտիր ղեկավար որդանները պետք է արմատապես փոխեն ղեպի աշխատանքի պաշտպանութիւնն դործը յեղած վե- րաբերմունքը, հիշելով, վոր այդ դործը բանվորների կյանքի և առողջութիւնն մասին հոգ տանելու ամենակարևոր տեսակն է: Ամենից առաջ պետք է հասարակայնութիւնը ներգրավել աշխա- տանքի պաշտպանութիւնն դործի մեջ, բոլոր ձեռնարկութիւննե- րում ջոկել աշխատանքի տեսուչներ, ղեկավարել և աշխատանքի մեջ ոգնել նրանց:

Աշխատանքի տեսուչների հեղինակութիւնը բարձրացնելու համար անհրաժեշտ է նրանց հաստատել միութիւնների կենա-

կոմների պլենումներում և աշխատանքի տեսչի կոչում տալ միայն այն տեսուչներին, վորոնք կանցնեն միութիւնների կենտկոմնե- րին կից վորակավորման հանձնաժողովներով:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱՑՄԱՆ ԳՈՐԾԻ ՄԵՋ ՆԵՐ- ԳՐԱՎԵԼ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԻՆՃԵ- ՆԵՐՆԵՐԻ ՈՒ ՏԵՆՆԻԿՆԵՐԻ ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

Արտադրական - մասսայական աշխատանքի՝ պրոֆմիութիւններում նկատված թուլացման փաստի կողքից անցնել չի կարելի: Միքանի պրոֆմիութենական աշխատողներ սխալ են հասկացել կուսակցութիւնն վորոչումը՝ ստախանովյան շարժումը ղեկավարելու համար տնտեսավարների պատասխանատուութիւնն մասին, իբր թէ այդ վորոչումը պրոֆմիութիւններին ազատում է սոցիալիստական արտադրութիւնն լավացման ու կազմակերպ- ման դործի մեջ բանվորների ու ծառայողների, ինժեներների ու տեխնիկների լայն մասսաները ներգրավելու իրենց անմիջական տեխնիկներին: Ստախանովյան շարժման զարգացմանն ոժանդա- խնդիրներից: Ստախանովյան շարժման զարգացմանը խան- կելը, աշխատանքի արտադրողականութիւնն բարձրացմանը խան- դարող արգելքները վերացնելու դործում ստախանովականներին տղները, նրանց կուլտուր-կենցաղային սպասարկման մասին հոգ տանելը պրոֆմիութիւնների աշխատանքի անբաժանելի մասն է:

Միանգամայն անթույլատրելի յէ արտադրական խորհրդակ- ցութիւնների աշխատանքի ղեկավարման թուլացումը: Միքանի պրոֆմիութիւններում արտադրական խորհրդակցութիւնների ղեկավարումն ամբողջովին հանձնված է տնտեսավարներին:

Միքանի խոշոր ձեռնարկութիւններում, ինչպես որինակ՝ «Կրասնի բողատիր» դործարանում, արտադրական խորհրդակցու- թիւնները ղեկավարւածաբար են գումարվում, ըստվորում խորհրդ- դակցութիւնների միջև ընկած ընդմիջումները յերբեմն մինչև յերեք և ավելի ամիսներ յեն հասնում: Ընկ. Կադանովիչի ան- վան վազոնանորոգման դործարանում արտադրական խորհրդակ- ցութիւններ հիմնական ցեխերում 10 ամսվա մեջ անցկացվել են ընդամենը մեկ-յերկու անգամ միայն:

Գործարկումների կողմից արտադրական խորհրդակցութիւն- ները ղեկավարելու բացակայութիւնը հասցրեց այն բանին, վոր նույնիսկ այնտեղ, վորտեղ այդ խորհրդակցութիւնները քիչ թէ շատ կանոնավոր են հավաքվում, նրանք հաճախ ձեւական բնույթ են կրում, վորովհետև արտադրութիւնն ընդհանուր խնդիրներ

են քննում՝ աշխատութի տարատեղումը, արտադրական ծրագրի կատարումն ամբողջովին առած և այլն: Իսկ այն մասին, թե ստախանովականներն ինչպես են աշխատում, թե ինչպես կազմակերպել ստախանովականների փորձի հաղորդումը հետ մնացողներին, — այդպիսի հարցերով արտադրական խորհրդակցությունները քիչ են զբաղվում: Դեռ ավելին. շատ հաճախ արտադրական խորհրդակցությունները վորոշումներ են ընդունում, բայց վոչ վոք չի հսկում այդ վորոշումների կատարման վրա:

Մենք պետք է ձգտենք վերականգնելու արտադրական խորհրդակցությունների կանոնավոր հրավիրումը, ախտվացնենք այդ խորհրդակցությունների աշխատանքը: Խոշոր ձեռնարկություններում ընդհանուր-գործարանային հարցերի քննարկման համար նպատակահարմար է կանոնավոր կերպով դուժարել արտադրական կոնֆերանսներ: Պետք է դադարեցնել վնասակար, ուսիրտունխտակախ խոսակցություններն այն մասին, թե արտադրությունը լավացնելու համար մղվող պայքարի մեջ մասսաներին ներգրավելը — այդ անտեսավարների գործն է, այլ վոչ թե պրոֆմիուլթյունների:

ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐՍԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊՐՈՓՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԿՍՐԵՎՈՐՍԳՈՒՅՆ ՈՂԱԿՆԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Այժմ անցնում եմ պրոֆմիուլթյունների կուլտուր-լուսավորական հարցերին:

Պրոֆմիուլթենական կազմակերպությունների բոլոր հաշվետու փողովներում այդ հարցերին առանձին ուշադրություն պետք է նվիրել, վորովհետև պրոֆմիուլթյունների կուլտուր-լուսավորական աշխատանքը, վորը պրոֆմիուլթյունների աշխատանքի կարևորագույն ճակատամասերից մեկն է միշտ հանդիսացել, Համ. Կ(բ)Կ Կենտկոմի վերջին պլենումի վորոշումների լույսի տակ և կուլտակցության՝ բուլչեիզմին տիրապետելու լողունդի կապակցությամբ այսօր քաղաքական հատուկ նշանակություն ունի:

Պրոֆմիուլթյունների կուլտուր-լուսավորական աշխատանքն այժմ վոչ միայն ամենից հետամնաց, այլև աշխատանքի մոռացված տեղամասն է: Պրոֆմիուլթենական կազմակերպությունների շատ ղեկավարներ տառացիորեն իրենք իրենց հեռացրել են ամենակարևոր այդ տեղամասի աշխատանքից, այդ գործը վերալրատահել են յերկրորդական աշխատողների, վորոնք չունեն վո՛չ

քաղաքական, վո՛չ գործարարական անհրաժեշտ հատկություններ, այդ գործը ղեկավարելու համար:

Պրոֆմիուլթենական աշխատանքի ամենակարևոր բնագավառը յերկրորդական աշխատողների, իսկ յերբեմն ել բացահայտ թըշնամի տարրերի ձեռքը հանձնելը կուլտուր-լուսավորական աշխատանքի միանգամայն անբավարար վիճակի գլխավոր պատճառներից մեկն է: Մենք ունենք բոլոր պայմանները և նյութական միջոցները կուլտուր-լուսավորական աշխատանքը ծավալելու համար: Ընդամին մեր հնարավորություններն ու նյութական միջոցները տարեցտարի աճում են: Յեթե վերցնենք բանվորական ախումբները, ապա նրանց քանակն աճել է 1929 թվի 3522-ից մինչև 5653-ի՝ 1937 թվին: Վոչ պակաս աճում ունենք նաև կարմիր անկյունների նկատմամբ: Առաջին և յերկրորդ հնգամյակի տարիներում պրոֆմիուլթյունները հսկայական ռազիո-անտեսություն են ստեղծել: Մենք ունենք մոտ 2 հազար ռազիո-հանդույցներ՝ 500 հազար ռազիոկետերով աշխատավորների բնակարաններում և հանրակացարաններում, չհաշված Կապի Ժողկոմատի ռազիոկետերը: Միայն 1935 և 1936 թվականներին պրոֆմիուլթյունները 42 միլիոն ռուբլի յեն ներդրել ռազիոտեսության մեջ: Չգալիորեն ավելացել է պրոֆմիուլթյունների դրադարան՝ մինչև 42 միլիոն ռիբնակ դրքով: Գրադարանային աշխատանքի համար հատկացումները 1933 թվի 39% միլիոն ռուբլուց աճել են մինչև 94 միլիոն՝ 1936 թվին:

Յես կանդ չեմ առնի այնպիսի կուլտուրական հաստատությունների քանակի ավելացման վրա, ինչպիսին են անդրքաղթյունները, կուլտուրայի և հանդատի պարկերը, քային կուլտուրայաները, կուլտուրայի և հանդատի պարկերը, դահուկային և ջրային կայանները և այլն: Դուք տեսնում եք, վոր պրոֆմիուլթյուններն իրենց տրամադրության տակ ունեն կուլտուր-լուսավորական աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելու նյութական բոլոր հնարավորությունները:

Իսկ իրականում ի՞նչ դրության մեջ է կուլտուր-քաղաքական աշխատանքը, նրա առանձին տեսակները: Ի՞նչպես ենք ոգտագործում մեր ունեցած նյութական բազան:

Վերցնենք լայն մասսաների մեջ տարվող պրոպագանդան ռազիոացիան: Ստալինյան Սահմանադրության, կուլտակցության պատմության, քաղաքադիտության հիմունքներն ուսումնասիրելու համար դպրոցներ, խմբակներ կազմակերպելը, ԽՍՀՄ-ի միջադ-

գլխին ու ներքին դրուժյան վերաբերյալ քաղաքական ինֆորմացիա և հանրամատչելի դաստիարակութուններ կազմակերպելը— այս բոլորը համարյա չեն իրականացվում պրոֆմիուլթյունների կողմից: Պրոֆմիուլթենական կազմակերպութունների ղեկավարների կողմից քաղաքական աշխատանքի այս տեսակը մոռացութեան տակ չի կարելի բացատրել վոչ այլ ինչով, քան իդեոլոգիական աշխատանքի նկատմամբ ճաշակը կորցնելով, քան այդ ամենապատասխանատու և քաղաքական կարևոր աշխատանքով զբաղվել չկամենալով, աշխատանք, վորը պրոֆմիուլթյուններին ապահովում է իրապես կատարելու իրենց պատմական դերը, վորպես կոմունիզմի դպրոցի:

Քաղաքական-դաստիարակչական աշխատանքի նկատմամբ ճաշակը կորցնելը, իսկ յերբեմն ել նրանով պարզապես զբաղվել չկամենալը արտացոլվել է նաև ակումբների աշխատանքում: Քաղաքական աշխատանքի հարցերը մոռացված են նույնիսկ այն ակումբներում, վորտեղ ինքնագործունեյության դանաղան ձևերի ու տեսակների կազմակերպման դրուլթյունը տանելի կարելի չէ համարել:

Պետք է նշել ակումբային տնտեսութեան նաև շատ բարձր-թողի արված լինելը, վորն այդ տնտեսութեանը քայքայելուն է մոտենում, վորը տեղի ունի մի շարք միութենական կազմակերպութուններում: Որինակ՝ Վոլսկի, «Կոմունար» ցեմենտի գործարանի ակումբը, Սերպուխովի նրբամահուղի գործարանի ակումբը, Անդրեյեվի անվան ակումբը Տագանրոգում: Կեղտը, բարեհարմարութեան բացակայութեանը, հատկանալի յե, լայն մասսաներին ակումբ չեն գրավում, այլ ընդհակառակը, նրանց վանում են: Վորպես կանոն, բանվորն այդպիսի ակումբ չի գնում, իսկ յեթե յերբեմն ել այցելում է ակումբ, ապա միայն ծայրահեղ անհրաժեշտութեանից դրդված: Զգալի չափով այդ նրանով է բացատրվում, վոր պրոֆմիութենական աշխատողները բանվորական մասսաներին ակումբի աշխատանքի մեջ ներգրավելուն նշանակութուն չեն տալիս: Վորպես կանոն, ակումբներում ընտրովի վարչութուններ չկան, իսկ ամբողջ աշխատանքին ուղղութուն են տալիս գիրեկտորները:

Ավելի լավ է դրված գրադարանների աշխատանքը: Այդ ցույց տվեց ՀՍՄԿՍ-ի գումարած գրադարանային խորհրդակցութունը:

Հաշվետու ժողովներում պետք է բաց արվեն ակումբների,

կարմիր անկյունների, գրադարանների, ուղիւհանդուլցների աշխատանքում յեղած բոլոր հիվանդութունները:

Կուլտուր-լուսավորական աշխատանքում առանձին ուշադրութուն պետք է դարձնել միութեան անդամներին սոցիալիզմի վոգով դաստիարակելու, հանրակրթական աշխատանքը ծավալելու գործի վրա:

Պրոֆմիութենական կազմակերպութունները պետք է նաև մեծ հոգատարութուն ցուցաբերեն կազմակերպելու խելացի հանդիսուն ու զվարճը, դեղարվեստական ինքնագործունեյութունը և մասսայական տուրիզմը:

Պետք է նոր ձևով մոտենալ ակումբներին, վերակառուցելով նրանց աշխատանքը բանվորների և ծառայողների լայն ինքնագործունեյութեան հիման վրա: Ակումբներում պետք է լինեն ընտրովի վարչութուններ, վորոնք կանոնավորապես պետք է հաշվետու լինեն ընտրողների առաջ: Գործարկումների և միութունների կենտկոմների ղեկավար աշխատողները պետք է փոխեն իրենց վերաբերմունքը դեպի ակումբները և ոժանդակեն նրանց ստեղծելու պայմաններ, վորոնք ապահովում են միութեան անդամների ներգրավումն ակումբային աշխատանքի մեջ, ապահովում են նրանց ստեղծագործական ինքնագործունեյութեան դարգացումը:

Պրոֆմիութունների անդամների լայն մասսաների միջից հարկավոր է հայտարարել մարդիկ, վորոնք կարող են կուլտուր-լուսավորական աշխատանքը բարձրացնել մինչև պրոֆմիութունների անդամների աճած պահանջների մակարդակը:

Մենք պետք է լրջորեն նշենք ակումբային այն աշխատողների վորակի բարձրացման ուղիները, վորոնք նվիրված են մեր գործին, բայց առայժմ բավականաչափ դրապետ չեն և չեն կարող ապահովել իրենց առաջ դրված խնդիրները կատարումը:

* * *

Ընկերներ: Պրոֆեսիոնալ աշխատանքը մինչև այժմ տարվել է համարյա բացառապես պրոֆմիութունների վճարովի ապարատի ուժերի միջոցով, վորը հաճախ ջղվում էր վոչ թե քաղաքական ու գործարար հատկութուններով, այլ անձնական ծանութեյութամբ: Հասարակական ինքնագործունեյութունը՝ միութեան անդամների կամավոր ակտիվը, գործարկումների ընտրված, բայց աշխատանքից չազատված անդամները, միութունների և հենց ՀՍՄԿՍ-ը կհանրը չեն դրավել դեպի պրոֆմիութենական

աշխատանքը: Պրոֆմիուսթենական կազմակերպությունների դե-
կալարները հաճախ դանդաղում են, վոր աշխատողները չեն
հերիքում: 22 միլիոն պրոֆմիուսթենական անդամների առկայու-
թյան պայմաններում այդպիսի դանդաղները վոչնչով հիմնա-
վորված չեն: Միուսթյունների անդամների մեջ շատ մարդիկ կան,
վորոնք ցանկանում են ու կարող են աշխատել: Պետք է հասարա-
կական ինքնազործունեյության հիման վրա ներդրավել նրանց
միուսթյան աշխատանքի մեջ, պետք է նաև առաջ քաշել նոր
մարդկանց՝ թարմացնելու համար պրոֆմիուսթյունների վճարովի
ապարատը:

Միուսթենական որդանների՝ իսկական դեմոկրատիայի հիմուն-
քով կատարվելիք ընտրությունները պետք է արմատապես փոխեն
պրոֆմիուսթենական կազրեր ջոկելու սիստեմը: Այդ կազրերը
պետք է կազմված լինեն ընտրովի աշխատողներից և միուսթյուն-
ների անդամների կամավոր ակտիվից:

Միուսթենական որդանների ընտրությունից հետո մենք պետք
է լրջորեն դրադվենք պրոֆմիուսթենական կազրերի բոլլևիկյան
դաստիարակությամբ և վորակի բարձրացմամբ: Պետք է կազ-
մակերպել կազրերի մշտական պատրաստում և վերապատրաս-
տում, սկսած դործարկումների ու տեղկումների աշխատողներից և
վերջացրած միուսթյունների կենտրոնական կոմիտեների դեկալա-
րող կազմով: Գործարանային կոմիտեների աշխատողների ու
սուցման կազմակերպումը պետք է իրազործեն միուսթյունների
կենտրոնական կոմիտեները: Միուսթյունների կենտրոնական կո-
միտեների և ՀՍՄԿԽ-ի ապարատի դեկալար աշխատողների ու
սուցման կազմակերպումը պետք է դրվի ՀՍՄԿԽ-ի նախագահու-
թյան վրա:

Ընկերներ: Պրոֆմիուսթենական որդանները հաշվետվություն-
ներն ու ընտրությունները պետք է վճողական դեր խաղան
պրոֆմիուսթյունների աշխատանքում յեղած խոչորագույն թերու-
թյունները վերացնելու դործում: Հաշվետվություններն ու ըն-
տրությունները պետք է ապահովեն հետևողական դեմոկրատա-
կան պրակտիկայի անցկացումը պրոֆմիուսթենական կազմակեր-
պությունների հաշվետու և ընտրական ժողովներում: Հաշվետու
և ընտրական ժողովներում ապահովված պետք է լինի միուսթյան
բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը և քննադատության
ու ինքնաքննադատության լայն ծավալումը՝ պրոֆմիուսթենական
որդանների աշխատանքում յեղած բոլոր թերությունները հայտ-

նաբերելու և վերացնելու համար: Պրոֆմիուսթենական որդաննե-
րի հաշվետու և ընտրական ժողովները պետք է ապահովեն վե-
րից-վար բոլոր կազմակերպությունների աշխատանքի արմատա-
կան բեկում՝ միուսթյան անդամների լայն ինքնազործունեյության
զարգացման հիման վրա, իսկական դեմոկրատիզմի հիման վրա:

Ձեռնարկությունների պրոֆմիուսթենական որդանների՝ գոր-
ծարկումների, տեղկումների, ցեխային կոմիտեների, խմբակային
պրոֆկազմակերպչների ընտրությունները մենք առաջարկում
ենք կատարել հունիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը: Պրոֆեսիոնալ
միուսթյունների մարզային և համամիուսթենական համագումար-
ներն անցկացնել հուլիսի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը: Յեվ
վերջապես, ԽՍՀՄ-ի պրոֆմիուսթյունների համամիուսթենական
համագումարը նշանակել 1937 թվի հոկտեմբերի 20-ին:

Ի՞նչ պրոֆմիուսթենական որդանները և պրոֆմիուսթյուն-
ների համագումարների պատգամավորների ընտրությունները
պիտի կատարվեն փակ (զաղտնի) քվեարկությամբ: Ընտրու-
թյունների այդպիսի անցկացումը կապահովի պրոֆմիուսթենա-
կան որդաններն ազատելու այն մարդկանցից, վորոնք անընդու-
նակ են գլխավորելու մասսաների աճող քաղաքական ակտիվու-
թյունը, ազատելու բյուրոկրատացած, մասսաներից կտրված
մարդկանցից, վորոնք անընդունակ են իրենց ամենուրյա աշխա-
տանքով ապահովելու միուսթյան անդամների աճող պահանջները
ուշադիր ու բազմակողմանի բավարարումը: Նրանց փոխարեն
բանվոր դասակարգն իր միջից առաջ կքաշի հասարակական աշ-
խատանքի ակտիվիստներին, հարվածայիններին և ստախանովա-
կաններին: Կարելի յե վստահ լինել, վոր պրոֆմիուսթենական դե-
մոկրատիայի բոլոր սկզբունքների պահպանումով ընտրված
պրոֆմիուսթենական որդանները կկարողանան արագությամբ վե-
րակառուցել պրոֆմիուսթյունների աշխատանքը Ստալինյան Սահ-
մանադրության մեծ դարաշրջանի խնդիրների համեմատ: Պրոֆ-
միուսթենական այդ նորընտիր որդանները մասսայական կազմա-
կերպությունների աշխատանքի բոլլևիկյան որենքի կատարման
միշտ մասսաների հետ լինելու և մասսաներին գլխավորելու հի-
ման վրա նոր հզոր վերելք կապահովեն խորհրդային պրոֆշարժ-
ման զարգացման դործում, ինչպես այդ պահանջում է մեզանից
մեր բոլլևիկյան կուսակցությունը և մեր առաջնորդ ընկեր
ՍՏՍԼԻՆԸ: (Մախհարուբյուններ):

այլն), միշտ և ամեն տեղ յերես են դարձնում այդ հարցերից կամ դիտելի են ազատում ձևական-գրասենյակային գրություններով:

Հաջողությամբ չախջախելով հակահեղափոխական տրեղյունիտնիզմը պրոֆչարթման մեջ (Տոմսկին և նրա խմբակը)՝ պրոֆմիությունները խորհրդային պետութայնը հակադրելու նրա թեորիայով ու պրակտիկայով հանդերձ՝ պրոֆմիութենական շատ աշխատողներ վորոշեցին, վոր դրանից հետո կարելի չե դափնիների վրա ներհեղ, առանց ջանալու, վոր մինչև վերջը հասցվի տրեղյունիտնիզմի մնացորդների մերկացումը պրոֆմիությունների ամենորյա գործնական աշխատանքում:

Տրեղյունիտնիզմի այդ մնացուկները պրոֆմիութենական շատ աշխատողների, նույնիսկ նորերի մոտ, արտահայտվել են քաղաքական պատկերացումների մեջ, բանվորների ու ծառայողների կուլտուրական-կենցաղային կարիքները բավարարելու գործում տնտեսական և պրոֆմիութենական որդանների աշխատանքում յեղած բյուրոկրատիկ խեղաթյուրումներին անտարբեր վերաբերմունք ցույց տալու մեջ, պետութայն որդանների համար կադրեր առաջադրելուց հեռանալու մեջ, պրոֆմիությունների՝ վորպես կոմունիզմի զարգացի խնդիրները նսեմացնելու մեջ: Հենց դրանով է բացատրվում այն, վոր պրոֆմիութենական աշխատողները մնասարարներին չկարողացան բացահայտել՝ աշխատանքի պաշտպանութայն ու սոցիալական ապահովագրութայն ասպարիզում, ստախանովյան շարժումը վիժեցնող բանմատակարարման գործում և բնակարանային շինարարութայն մեջ կատարվող մնասարար աշխատանքը: Պրոֆմիութենական որդանների մեջ էլ, ընդհուպ մինչև միությունների կենտկոմները և ՀԱՄԿՍ-ի ասպարատը, թափանցեցին և գործում եյին ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստները, աջ մնասարարները և դիվերսանտները՝ ՀԱՄԿՍ-ի սոցիալական ապահովագրութայն բյուրոյի վարիչ Կոտովը, ՀԱՄԿՍ-ի ոտարերկրյա բյուրոյի վարիչ Ժարիկովը, կոքսաքիմիական արդյունաբերութայն բանվորների միութայն կենտկոմի նախագահ Դիլբուրգը, ՌԽՅՍՀ-ի տարրական ու միջնակարգ դպրոցների աշխատողների միութայն կենտկոմի նախագահ Կոլտիլովը, նավթարդյունաբերութայն բանվորների միութայն կենտկոմի քարտուղար Կայուրովը, Կովկասի նավթահանքերի բանվորների միութայն կենտկոմի նախագահութայն անդամ Չիսլովը:

Պրոֆմիութենական ասպարատում մնասարարներին և բանվոր քասակարդի թշնամիներին մերկացնելու գործում դեկավար պրոֆմիութենական աշխատողները հանդես բերին քաղաքական կուլտություն, դանդաղկուտություն և անհողություն: Ընդամին պրոֆմիութենական շատ աշխատողներ դտնում եյին, վոր մնասարարները, բանվոր դասակարգի թշնամիների դեմ պայքարելին իրենց գործը չե, այլ մյուս որդանները գործը: Նրանք մոռացութայն եյին մատնել, վոր կուսակցությունը պրոֆմիություններից բազմիցս պահանջել եր պայքար մղել խորհրդային և ներից բազմիցս պահանջել եր պայքար մղել խորհրդային և տնտեսական որդաններում նկատվող բյուրոկրատական խեղատնտեսականների դեմ, իսկ առավել ևս պայքար մղել բանվորների կուլտուրական-կենցաղային սպասարկման գործում յեղած մնասարարութայն դեմ:

Պրոֆմիությունների դեկավարները պետք է հիշեն, վոր պրոֆմիություններն իրենց հատուկ խնդիրները, իրենց աշխատանքի հատուկ մեթոդներն ունեցող բազմամիլիոն մասսայական կազմակերպություն են, վոր նրանք պետք է մինչև վերջը լինեն դեմոկրատական կազմակերպություն—կոմունիզմի զարգացը:

Այնինչ, պրոֆմիութենական որդանները աշխատանքում, սկսած գործարանային կոմիտեներից մինչև ՀԱՄԿՍ-ի նախագահությունը, շարունակ խախտում են պրոֆմիութենական դեմոկրատիայի սկզբունքները: Սխառվել է պրոֆմիությունների ընտրականութայն սխառմը. գործարանային ու տեղական կոմիտեները, մարդային ու կենտրոնական կոմիտեները 3—5 տարի չեն վերընարվել: Պրոֆմիություններում արմատացել է կոտպտացիայի սխառմը:

Մոսկվայի Կիրովի անվան «Դինամո» գործարանում 1935 թվի հուլիսից առանց ընտրությունների փոխվել է գործարկումի չորս նախագահ: Կրասնոուրալսկի պղնձածուլական գործարանում յերկու տարվա ընթացքում կոտպտացիայի միջոցով փոխվել է գործարկումի վեց նախագահ: Գործարկումների նախագահներ և կենտրոնական կոմիտեները մատնելու և հեռանում եյին առանց հաշիվ դալիս եյին առանց ընտրվելու և հեռանում եյին առանց հաշիվ տալու իրենց աշխատանքի մասին: Յերկու և կես տարի յե, ինչ տարի իրենց աշխատանքի մասին: Շատ պրոֆմիությունների ՀԱՄԿՍ-ի պնեում չի հավաքվել: Շատ պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեներում փաստորեն նախագահություն գործություն չունի՝ նախագահներն ու քարտուղարները միանձնաբար են լուծում բոլոր հարցերը: Պրոֆմիութենական որդանները փաստորեն վերացրել են

պրոֆորգանների սիտեմատիկ հաշվետվութունները պրոֆմի-
ուլթունների անդամների առջև: Պրոֆմիուլթունների անդամնե-
րի ընդհանուր ժողովներ շատ քիչ են դուստարվում, վատ են նա-
խապատրաստվում, կրում են առավելապես վոչ թե դործարար,
այլ ձևական-դեկլարատիվ բնույթ: Ժողովների վորոշումները
հաճախ չեն կենսադործվում, նրանց կատարումը չի ստուգվում:

Հաշվետվության և ընտրականության սկզբունքները նսե-
մացնելու հետևանքով պրոֆաշխատողներն իրենց դրել են ան-
դամների մասսայից անկախ կացության մեջ: Այդտեղից առաջա-
նում է պրոֆաշխատողների անուշադրութունը դեպի միու-
թյան անդամների հարաճուն սրահաններ ըսվարարումը, նրանց
վոչ զրաշուն վերաբերմունքը դեպի բանվորների ու ծառայողնե-
րի բողոքներն ու առաջարկները, քննադատության և ինքնաքն-
նադատության բացակայությունը:

Փոխանակ լայնորեն ոգտադործելու պրոֆմիուլթուններին
անդամների նախաձեռնությունը և ինքնադործունեյությունը,
ընտրովի և կամավոր ակտիվ ստեղծելու, պրոֆմիուլթուններին
աշխատանքը ներքևից մինչև վերև կառուցված է գլխավորապես
վճարովի ապարատի, վճարովի աշխատողների վրա: Պրոֆմիու-
թենական շատ դեկավարներ չեն ուղում հասկանալ, վոր նրանք
ունեն կադրերի անսպառ ռեզերվուար, վոր բանվոր դասակարգի
ակտիվության պայմաններում կարելի յեր առաջ քաշել հարյուր-
հազարավոր հրաշալի աշխատողներ: Սակայն դեմոկրատիան
սահմանափակվելու պատճառով, ընտրականությունը կրճատելու
պատճառով, նեղացել է պրոֆմիութենական որդաններում աշ-
խատող մարդկանց շրջանակը, արհեստականորեն դժվարացել և
նոր մարդկանց աճեցումն ու առաջըաշումը: Դեռ ավելին-
պրոֆմիությունների համար շարունակ աշխատողներ եյին ջոկ-
վում վոչ թե ըստ քաղաքական ու դործարար հատկությունների,
այլ «անձնական կապերի», «հարմարության», «միատեղ աշխա-
տանքի վարժված լինելու», «բարեկամական հարաբերություննե-
րի» սկզբունքով:

Ոչոր թերություններ կան պրոֆմիությունների սոցիալա-
կան ապահովագրության աշխատանքում: Սոցիալական ա-
պահովագրության դործը պրոֆմիություններին հանձնելը պետք է
ուղեկցվեր նրա արմատական վերակառուցմամբ՝ միության ան-
դամներին սոցիալական ապահովագրության հսկայական միջոց-
ների տնորինման մեջ ներգրավելու հիման վրա: Այնինչ, սոցի-

ալական ապահովագրության դործը վարվում է բյուրոկրատա-
բար, դերատեսչական մեթոդներով, իսկ պրոֆմիությունների
անդամներն այդ աշխատանքին չեն ներգրավվում, բացակայում
է պրոֆմիության անդամների վերահսկողությունը սոցիալական
ապահովագրության միջոցները բաշխման և ոգտադործման վրա:
Այդ հնարավորություն տվեց ամեն տեսակ ժուլիկներին, խաբե-
բաններին և ժողովրդի թշնամիներին թափանցելու սոցալի ապա-
րատը, սխալ ոգտադործելու, ցիրուցան անելու և թալանելու մի-
լիոնավոր ռուբլի պետական միջոցներ, — ՀԱՄԿՍ-ի սոցիալական
ապահովագրության բյուրոն, Պրոֆմիությունների՝ Ուկրաինայի,
Լենինգրադի. Բելոռուսիայի խորհուրդները:

Պրոֆմիություններն իսկական պայքար չեն մղում բուժող-
նությունը բարելավելու և սանատորիաները, հանգստյան տները,
հիվանդանոցները մանավանդ ծանր հիվանդների համար ավելի
լավ հիմքի վրա դնելու համար: Սոցիալական ապահովագրու-
թյան որդանների աշխատանքում բացակայում է ուշադիր անհա-
տական մոտեցումը դեպի հիվանդները, մանավանդ դեպի լուրջ
բուժման կարիք ունեցողները:

Պրոֆմիութենական կադմակերպությունները, ստանալով
պետությունից բանվորների աշխատանքի պայմանները բարելա-
վելու այնպիսի մի հոոր լծակ, ինչպիսին աշխատանքի պաշտպա-
նության և անվտանգության տեխնիկայի դործն է, չկարողա-
ցան կադմակերպել այն և չստեղծեցին լայն մասսաների իսկա-
կան վերահսկողություն խորհրդային աշխատանքային որենս-
կան վերահսկողություն խորհրդային, ծառայողների, ին-
դրության պահպանման վրա: Բանվորների, ծառայողների, ին-
ժեներների և տեխնիկները հաճախակի աղբանջանները, աշխա-
տանքային որենսդրության անվտանգության տեխնիկայի կա-
տանքային որենսդրության անսին (ողափոխիչ սարքերի,
նոնների հանցավոր խախտումների մասին (ողափոխիչ սարքերի,
ցանկապատերի քանդումներ և այլն), հաճախ պրոֆմիություն-
ներն անուշադրության եյին մատնում (դուստավոր մետաղների
ներդրունահանման բանվորների միության կենտկոմը, դյուղա-
արդյունահանման բանվորների միության կենտկոմը, դյուղա-
տնտեսական մեքենաշինության բանվորների միության կենտկո-
մը, Դոնբասի քարածխի արդյունաբերության բանվորների միու-
թյան կենտկոմը և այլն): Պրոֆմիությունների դեկավարները
թյան կենտկոմը և այլն): Պրոֆմիությունների դեպի այդ աղբա-
քաղաքական հոտաություն չցուցաբերեցին դեպի այդ աղբա-
նջանները, դրանցից քաղաքական ու դործնական հետևություն-
ներ չարին, պայքար չմղեցին աշխատանքի պաշտպանության ո-
րենքների հանցավոր խախտումների դեմ, վորով հեշտացրին ժո-

գործը թշնամիները՝ տրոցկիստ վնասարարների, գեղերսանտները ու նրանց աջ գործակիցները հանցավոր գործունեություն հասարակությունը:

Պրոֆմիությունները խիստ թուլացրին մասսայական-արտադրական աշխատանքը, չէին ղեկավարում սոցիալիստական մըրցությունը և ստախանովյան շարժումը, մասնավանդ նրա դարձացման առաջին շրջանում: Պրոֆմիությունական շատ որդաններ իրենց հեռու ելին պահում արտադրական խորհրդակցությունները ղեկավարելուց: Մինչդեռ ղեկավ աշխատանքը կոմունիստական վերաբերմունք պատվաստելը և աշխատանքի արտադրողականություն բարձրացման համար պայքարելը պրոֆմիությունների հիմնական խնդիրներից մեկն է:

ՀԱՄԿԽ-ի նախագահությունն աշխատել է դրասենյակային բյուրոկրատական մեթոդներով, սխտեմատիկաբար ուշացրել է պրոֆեսիոնալ շարժման կարևորագույն հարցերի լուծումը: Նախագահություն վորոշումները հաճախ կրել են ընդհանուր գեղարացիաների բնույթ, կատարման ստուգում չի յեղել: ՀԱՄԿԽ-ի ղեկավարներն աշխատանքում նախաձեռնություն չեն ցուցաբերել, բոլորիկյան համառություն չի յեղել սկսված գործը մինչև վերջը հասցնելու ուղղությունը: ՀԱՄԿԽ-ի նախագահությունը կոնկրետ, ամենորյա ղեկավարություն չի ցուցաբերել պրոֆմիությունների կենտրոնների աշխատանքում: ՀԱՄԿԽ-ի նախագահությունն աշխատանքի չի ներգրավել, չի ոգտագործել ՀԱՄԿԽ-ի՝ ձեռնարկություններում աշխատող անդամներին բանվորական մասսաների հետ կապ հաստատելու համար, ՀԱՄԿԽ-ն այցելուների ընդունելություն չի կազմակերպել, Բողոքների բյուրո չկա:

Պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեների մեծ մասը ծանոթ չէ ձեռնարկություններում տիրող դրությունը, չզրտես և չի ուսումնասիրում, թե ինչով են ապրում և ինչ հարցեր են առաջադրում միությունների անդամները, չի վերցնում և չի քննարկում այդ հարցերը: Կենտրոնական կոմիտեները չեն ղեկավարում գործարանային և տեղական կոմիտեների աշխատանքը, չեն քննադատում նրանց և չեն ուղղում նրանց սխալները: Դրա հետևանքով մի շարք կենտրոնական և մարզային կոմիտեների աշխատանքում կան բյուրոկրատական խեղաթյուրումներ, անանտեսվարություն, Ֆինանսական կարգապահություն խախտում և պետական ու պրոֆմիությունական միջոցների սխալ ծախսում (Կոնսերվի արդյունաբերության բանվորների միություն

կենտրոն, Բամբակագործական կոտնտեսությունների և ՄՏԿ-ների բանվորների միություն կենտրոն, Հարավի սև մետաղաբույսի բանվորների միություն կենտրոն, Գաղաքային ձեռնարկությունների բանվորների միություն կենտրոն, Գաղղուսավորական հիմնարկների աշխատողների միություն կենտրոն):

ՀԱՄԿԽ-ի որդան «Տրուդ» թերթը և միությունների կենտրոնական կոմիտեների թերթերը պրոֆմիությունական կազմակերպությունների թերթությունները և այդ թերթությունները կրող կոնկրետ անձերին քննադատելու գործում դեռ անհրաժեշտ սրություն չեն հասել: Թերթերը թույլ են լուսաբանում բանվորական կյանքը: «Տրուդ»-ին չեն աշխատակցում պրոֆմիությունական ղեկավար աշխատողները, առավել ևս միությունների շարքային անդամները, քիչ է լուսաբանվում պրոֆմիությունական աշխատանքի փորձը:

Պրոֆմիությունների հրատարակած ժուռնալները մասսաների մեջ աշխատանք չեն կատարում և չեն բավարարում ստորին պրոֆկազմակերպությունների պահանջները: Պրոֆհրատը վոչենչ չի անում պրոֆմիությունական ակտիվին՝ նրա աշխատանքի ասպարիզում անհրաժեշտ գործնական ձեռնարկներով գինելու համար:

Առանց մերկացնելու պրոֆմիությունների աշխատանքի բոլոր թերթությունները, առանց համառ պայքար մղելու պրոֆորդանների քաղաքական պասսիվության և կարճատեսության, անշարժության և բյուրոկրատիզմի դեմ, անկարելի յե ուղղել այդ թերթությունները, անցկացնել պրոֆմիություններում իսկական դեմոկրատիզմը և շրջադարձ կատարել պրոֆմիությունների աշխատանքում՝ նոր պայմանների ու խնդիրների համաձայն:

Պրոֆմիությունների ղեկավարները պետք է հատկանան, վոր բանվորների ու ծառայողների կուլտուրական-կենցաղային կատարողների ու ծառայողների կուլտուրական-ընկերների մասին հողատարություն ունենալը և կուլտուրական-հասարակակարգի պայմաններում, հանդիսանում են պրոֆեսիոնալ միությունների առաջնակարգ գործը:

Պրոֆմիությունների աշխատանքի վերոհիշյալ թերթությունները վերացնելու և նրանց աշխատանքը վերակառուցելու նպատակով ՀԱՄԿԽ-ի պետումը վորոշում է՝

1. Պրոֆկազմակերպություններում վերացնել կոոպտացիայի

պրահաիկան և լիակատար չափով վերականգնել պրոֆմիու-
թյունների ղեկավար որդանների ընտրականութունը:

2. 1937 թվականին բոլոր պրոֆմիութենական որդանները
ընտրութունը, ներքեից մինչև վերև, անցկացնել զննադատու-
թյան և ինքնաքննադատության հիման վրա, լիովին պահպանե-
լով պրոֆմիութենական լայն դեմոկրատիան:

3. Արդելել պրոֆորդանների ընտրության ժամանակ ցուցա-
կով քվեարկելը, քվեարկութունը կատարել ըստ առանձին թեկ-
նածութունների, ընդամին ապահովելով պրոֆմիության բոլոր
անդամների համար թեկնածուներին բացարկելու և նրանց զննա-
դատելու անսահմանափակ իրավունք:

4. Պրոֆորդանների ընտրության ժամանակ սահմանել թեկ-
նածուների փակ (չազտնի) քվեարկութուն:

5. Ընտրություններից առաջ պրոֆմիութենական բոլոր քր-
դանները պետք է իրենց գործունեյության մասին հաշիվ տան
միությունների անդամների առաջ: Պրոֆորդանների հաշվետվու-
թյուններին պետք է ուղեկցեն վերստուգիչ հանձնաժողովների
հաշվետվությունները:

6. Պարտավորեցնել միություններին կենտրոնական կոմիտե-
ներին համառոտ հաշվետվություններ հրատարակել իրենց աշ-
խատանքի մասին և ուղարկել ստորին պրոֆկադակերպություն-
ներին:

7. Առաջարկել «Տրուդ» թերթի խմբադրությանը, միու-
թյունների կենտրոնական կոմիտեների թերթերի խմբադրու-
թյուններին և գործարանային բազմատիրաթ թերթերին՝ լուսա-
բանել պրոֆմիութենական որդանների հաշվետվությունների և
ընտրությունների ընթացքը:

8. Ձեռնարկություններում և հիմնարկներում պրոֆմիութե-
նական որդանների (գործարանային կոմիտեների, տեղական կո-
միտեների, ցեխային կոմիտեների, խմբակային պրոֆկադակեր-
պիչների) ընտրությունները կատարել հունիսի 1-ից մինչև հու-
լիսի 15-ը, միությունների մարզային կոնֆերանսները և համա-
միութենական համագումարները, ղեկավար պրոֆորդանների
ընտրություններով հանդերձ, անցկացնել հուլիսի 15-ից մինչև
հոկտեմբերի 1-ը: ԽՍՀՄ-ի պրոֆմիությունների համամիութե-
նական համագումարը նշանակել 1937 թ. հոկտեմբերի 20-ին*):

*) ՀԱՄԿԽ-ի պլենումը հաստատեց առանձին պրոֆմիությունների համա-
գումարների հրավերման ժամկետները: ԽՄԲ:

9. Գտնելով, վոր բանվորների լավագույն սպասարկման
գործում արտադրական միությունների ու նրանց կենտրոնական
կոմիտեների դերը բարձրացնելու մասին ՀԱՄԿԽ-ի ընդունած
վորոշումը հաջողությամբ կատարելուն խանգարել են միջմիու-
թենական կադակերպությունները (պրոֆմիությունների շրջա-
նային, քաղաքային, մարզային, յերկրային և հանրապետական
խորհուրդները), նույնպես և հաշիվ առնելով այն, վոր պրոֆ-
միությունների ապախոշորացման ժամանակ միջմիութենական
կադակերպությունները, վորոնք ժամանակին դրական դեր են
կատարել, չեն կարող այժմ ընդգրկել պրոֆմիութենական կադ-
ակերպությունների, շատացած պրոֆմիությունների և նրանց
անդամների կյանքի ու գործունեյության բոլոր կողմերը, վե-
րացնել պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզա-
յին, յերկրային և հանրապետական խորհուրդները:

10. Պրոֆմիությունների անդամների ակտիվը սոցիալական
ապահովադրության աշխատանքին մասնակից դարձնելու համար
ձեռնարկություններում և հիմնարկներում գործարկում-տեղկոմնե-
րին կից կադակերպել սոցիալական ապահովադրության խոր-
հուրդներ, դնելով սոցիալական ապահովադրության խորհուրդնե-
րի վրա հետևյալ պարտականությունները՝ վորոշել ժամանակա-
վոր անաշխատունակության նպաստի չափը, ուղարկել բանվորնե-
րին ու ծառայողներին սանատորիաներն ու հանգստյան տները,
բանվորների ու ծառայողների յերեխաներին՝ մանկամսուրները,
մանկապարտեղները և պիոներական ճամբարները, վերահսկողու-
թյուն կադակերպել բյուլետենները ճիշտ տրվելու, բուժողնու-
թյունը կադակերպելու բնադավառում:

11. Նկատի ունենալով, վոր աշխատանքի պաշտպանության
գործում պրոֆմիությունների հիմնական խնդիրն է իրականաց-
նել պետության կողմից պրոֆմիություններին հանձնարարված
վերահսկողությունը տնտեսական որդանների կողմից աշխատան-
քի որենքները կատարելու վրա (անվտանգության տեխնիկա, աշ-
խատանքային ժամանակ, հանդատի օրեր, հատուկ հազուստի և
վտանգամանի նորմաներ) և պայքար մղել այդ ասպարիզում բյու-
րոկրատական խեղաթյուրումների դեմ, — պարտավորեցնել
պրոֆմիություններին հատուկ ուշադրություն դարձնել աշխա-
տանքի տեսուչների վորակը բարձրացնելու, նրանց կադմը տվյալ
արտադրության աշխատանքի պայմաններին լավատեսչյակ աշխա-
տողներով ամրացնելու, հանրային տեսուչների՝ կամավոր լայն

ակտիվ ներդրավելու գործի վրա նախ և առաջ վորակյալ բան-
վորներէց ու ստախանովական ծառայողներէց :

Աշխատանքի տեսուչները հեղինակութունն ամրացնելու և բարձրացնելու նպատակով սահմանել, վոր աշխատանքի իրավա-
կան, տեխնիկական և սանիտարական տեսուչները հաստատվեն
միությունների կենտրոնական կոմիտեները պլենումներում,
ըստվորում տեսուչը կարող է կոչում ստանալ միմիայն միութ-
յունների կենտրոնին կից կազմակերպվող վորակավորման
հատուկ հանձնաժողովում մասնագիտական քննություն տալուց
հետո :

12. Վերականգնել պրոֆմիությունները և անտեսական որ-
դանների միջև կոլեկտիվ պայմանագրեր կնքելու պրակտիկան :

Առաջարկել միությունների կենտրոնական կոմիտեներին՝
համապատասխան անտեսական որդանների հետ միասին սահմա-
նել կոլեկտիվ պայմանագրեր կնքելու կարգ՝ այն հաշվով, վոր
կոլեկտիվ պայմանագրերի մեջ մտցվեն աշխատանքի ու աշխա-
տավարձի հիմնական պայմանները, հաշվի առնելով այս կամ այն
արտադրության առանձնահատկությունները, ինչպես և միջոցա-
ռումներ մշակել աշխատանքի պաշտպանության ու անվտանգու-
թյան տեխնիկայի վերաբերյալ :

Կոլեկտիվ պայմանագրերի կնքումը հարմարեցնել ժողովըր-
դական անտեսության 1938 թվականի պլանի հաստատման ժամ-
կետին :

13. Վերականգնել պրոֆկազմակերպությունների կողմից
պարբերաբար արտադրական խորհրդակցություններ հրավիրելու
պրակտիկան, ներդրավելու բանվորներին, ծառայողներին, ինժե-
ներների ու տեխնիկներին լայն մասսաներին արտադրությունը
բարելավելու գործի մեջ : Խոշոր ձեռնարկություններում սահ-
մանել պարբերաբար արտադրական կոնֆերանսներ հրավիրելու
պրակտիկա :

14. Առաջարկել բոլոր պրոֆկազմակերպություններին ալ-
տիվորեն մասնակցել բնակարանային շինարարության միջոցների
բաշխմանը, շինարարության տեղն ու տիպը վորոշելուն, բնա-
կելի տարածության բաշխմանը, ձգտելով ընդամին բարելավելու
բնակարանների և նրանց նորոգման վիճակը :

Հատուկ ուշադրություն նվիրել մանկամտերների և ման-
կապարտեղների շինարարությանն ու վիճակին, ներդրավելու

ղեպի այդ աշխատանքը բանվորների ու ծառայողների և նրանց
կանանց լայն ակտիվին :

15. Նկատի ունենալով, վոր պրոֆմիությունների գործու-
նելության կարևորագույն ողակներից մեկը պետք է դառնա կուլ-
տուրական-լուսավորական աշխատանքը, պարտավորեցնել պրոֆ-
միություններին հատուկ ուշադրություն դարձնել պրոֆմիութ-
յունների անդամներին սոցիալիզմի վորով դաստիարակելու գոր-
ծի վրա, հանրակրթական աշխատանքի ծավալման և բանվորների
ու ծառայողների վորակավորման բարձրացման վրա, խելացի
հանգստի ու ժամանցի կազմակերպման, մասսայական տուրիզ-
մի, հանգստի որերին քաղաքից դուրս եքսկուրսիաներ ծավա-
լելու վրա, Ֆիզկուլտուրայի, սպորտի և զեղարվեստական ինք-
նագործունեության ծավալման վրա :

16. Նշելով ահումբների և ահումբային անտեսության ան-
խնամ վիճակը, պարտավորեցնել պրոֆմիութենական որդան-
ներին վերականգնել ահումբների վարչությունների ընտրակա-
նությունը և նրանց սիստեմատիկ հաշվետվությունն իրենց ընտ-
րողների առջև, միջոցներ ձեռք առնել կարգի բերելու ահում-
բային անտեսությունը, ստեղծելու ահումբներում պատշաճ բա-
րեհարմարություն և համապատասխան պայմաններ միության
անդամների ստեղծագործական ինքնագործունեության համար :

17. Գտնելով, վոր Ֆինանսական հաշվետվության ու վեր-
ստուգման գործը հատուկ նշանակություն է ստանում, ՀԱՄԿԽ-ի
պլենումը դատապարտում է զեկավար շատ պրոֆաշխատողների
այն անպատասխանատու վերաբերմունքը զեպի Ֆինանսական
անտեսությունն ու Ֆինանսական հաշվետվության բացակայու-
թյունը միությունների անդամների առջև, պարտավորեցնում է
ՀԱՄԿԽ-ի նախագահությանը, միությունների կենտրոններին,
մարզկոմներին ու գործարկում-տեղկոմներին՝ սահմանել ամենա-
խիստ հաշվետվություն ու Ֆինանսական կարգապահություն և
խստիվ պատժել պրոֆմիութենական միջոցների հանգեպ ցուցա-
բերվող վոչ-ինսյոդական վերաբերմունքը, ամենավոք վատ-
նումի համար դատի տալ :

18. Հատուկ նշանակություն տալով պրոֆմիութենական
կազրերի բոլշևիկյան դաստիարակության և նրանց վորակի
բարձրացման գործին՝

ա) առաջարկել միությունների կենտրոնական կոմիտեներին՝

կազմակերպել մշտական յեռամսյա կուրսեր մարզային, յերկրային և դործարանային կոմիտեաների նախագահներին համար:

բ) առաջարկել ՀԱՄԿԽ-ի նախագահութեանը՝ կազմակերպել յեռամսյա կուրսեր միութեաններին կենտրոնական կոմիտեաների նախագահներին, քարտուղարներին և հրահանգիչներին համար:

գ) ակումբներին վարիչներ պատրաստելու համար դպրոցներ կազմակերպել:

Պարտավորեցնել ՀԱՄԿԽ-ի նախագահութեանը մի ամսում քննել և հաստատել վերոհիշյալ կուրսերի ծրագրերը:

ՀԱՄԿԽ-ի պլենումը կոչ և անում բոլոր քանվորներին, ծառայողներին, ինժեներ-տեխնիկական ու դիտական աշխատողներին, պրոֆմիութեաններին բոլոր անդամներին՝ ամենաակտիվ մասնակցութեան ցուցց տալ պրոֆմիութեանական որդաններին ընտրութեաններին, քննադատութեամբ և իրենց դործնական առաջարկներով ոգնել բարելավելու պրոֆմիութեանական կազմակերպութեաններին աշխատանքը և առաջ քաշել պրոֆմիութեանական որդաններին համար ամենալավ, ամենաակտիվ ու բանվոր դասակարգի դործին նվիրված մարդկանց:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի պատմական վերջումները (1937 թ. մետրվար—մարտ) մորիլիզացիայի յեն յենթարկում մեր հայրենիքի բոլոր աշխատավորներին և ամենից առաջ պրոֆեսիոնալ միութեաններում կազմակերպված 22 միլիոն առաջավոր մարդկանց՝ զարգացնելու քննադատութեանն ու ինքնաքննադատութեանը, վերացնելու պրոֆմիութեաններին աշխատանքի թերութեանները, արմատախիլ անելու ժողովրդի թշնամիներին և նորանոր հաջողութեաններ ձեռք բերելու սոցիալիզմի դործում:

ՀԱՄԿԽ-ի պլենումը հաստատապես համոզված է, վոր պրոֆմիութեաններին աշխատանքի բոլչևիկյան քննադատութեանն ու թերութեաններին ուղղումը կոգնեն նրանց շրջադարձ կատարելու իրենց աշխատանքում, ամբացնելու պրոֆմիութեանական որդանների կապը մասսաներին հետ և ավելի սերտորեն համախմբելու միլիոնավոր բանվորներին ու ծառայողներին կոմունիզմի կարմիր դրոշի շուրջը:

ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿԽ-Ի 6-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Պրոֆմիութեանական որդանների ընտրութեաններն անցկացնելիս անհրաժեշտ է խստիվ ղեկավարվել ՀԱՄԿԽ-ի 1937 թ. մայիսի 15-ի հետևյալ վորոշումով:

«Արգելել պրոֆորգանների ընտրութեան ժամանակ ցուցակով քվեարկելը, քվեարկութեանը կատարել ըստ առանձին թեկնածութեանների, ընդամին ապահովելով պրոֆմիութեան բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և նրանց քննադատելու անսահմանափակ իրավունք»: Պրոֆորգանների ընտրութեանների ժամանակ սահմանել թեկնածուների փակ (զազտնի) քվեարկութեան:

2. Փակ (զազտնի) քվեարկութեամբ ընտրվում են՝

ա) դործարանային և տեղական կոմիտեաների անդամները, ցեխային կոմիտեաների անդամները, պրոֆմիութեանական խմբակների կազմակերպիչները (պրոֆկազմակերպիչները):

բ) պրոֆմիութեանների շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային և հանրապետական կոնֆերանսների ու համադումարների պատգամավորները:

գ) պրոֆմիութեանների շրջանային, քաղաքային, յերկրային, մարզային, հանրապետական և կենտրոնական կոմիտեաների անդամները:

դ) համապատասխան պրոֆորգանների վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

ե) դործարանային և տեղական կոմիտեաների նախագահներն ու նախագահների տեղակալները՝ կոմիտեաների պլենումներում:

զ) պրոֆեսիոնալ միութեանների շրջանային, քաղաքային,

մարդային, յերկրային, հանրապետական ու կենտրոնական կոմիտեների նախագահութիւններին նախագահները, քարտուղարները և անդամները՝ կոմիտեների համապատասխան պլէնումներում :

3. Զեռնարկութիւններում, հիմնարկներում և ուսումնական հաստատութիւններում պրոֆմիութենական որդաններին ընտրութիւնները կատարվում են հետեյալ կարգով՝ նախ ընտրվում են դործարանային ու տեղական կոմիտեները, ապա ցեխային կոմիտեները և պրոֆկազմակերպիչները :

4. Զեռնարկութիւններում, հիմնարկներում և ուսումնական հաստատութիւններում հաշվետու-ընտրական ժողովներ անցկացնելու ամբողջ նախապատրաստական աշխատանքը դըրվում է դործարանային ու տեղական կոմիտեների վրա :

Գործարանային և տեղական կոմիտեները, հաշվետու-ընտրական ժողովից վոչ ուշ քան տասն որ առաջ, հայտնում են պրոֆմիութեան անդամներին՝ հաշվետու-ընտրական ժողովն անցկացնելու պլանը :

Հաշվետու-ընտրական ժողովը բաց է անում համապատասխան պրոֆորգանի ներկայացուցիչը, այսինքն՝ ձեռնարկութեան մեջ պրոֆմիութեան անդամների ընդհանուր ժողովը բաց է անում դործարանային կոմիտեյի ներկայացուցիչը, ցեխում՝ ցեխային կոմիտեյի ներկայացուցիչը, պրոֆմիութենական խմբակում՝ պրոֆկազմակերպիչը : Հաշվետու-ընտրական ժողովն անցկացնելու համար բաց քվեարկութեամբ ընտրվում է նախագահութիւն : Նախագահութեան անդամների թիվը վորոշում է ինքը ժողովը : Նախագահութեան կազմի համար թեկնածուներ են առաջարկվում անմիջականորեն ժողովում :

Պրոֆմիութեան այն անդամին, վորը ցանկանում է թեկնածութիւն առաջարկել նախագահութեան կազմի համար, ժողովը բաց անող համապատասխան պրոֆորգանի ներկայացուցիչը խոսք է տալիս՝ նախագահութեան անձնական կազմի մասին առաջարկ մտցնելու համար :

5. Գործարանային կոմիտեների հաշվետուութիւնները և ընտրութիւնները կատարվում են ձեռնարկութիւնների, հիմնարկների, ուսումնական հաստատութիւնների պրոֆմիութեան ներքին ընդհանուր ժողովներում : Արդելվում է հաշվետուութիւններ և ընտրութիւններ կատարել համադործարանային և հիմնարկային կոնֆերանսներում : Այն դեպքերում, յերբ ըստ արտա-

դրութեան պայմանների (խոշոր ձեռնարկութիւններ, արտադրութեան անընդհատականութիւն, բազմահերթափոխութիւն), հնարավոր է գումարել պրոֆմիութեան անդամների ընդհանուր ժողով, յուրաքանչյուր անգամ՝ պրոֆմիութեան համապատասխան կենտրոնական կոմիտեյի թույլտուութեամբ՝ համադործարանային կոմիտեյի հաշվետուութիւնն ու ընտրութիւնը կարելի է կատարել հերթափոխութիւնների կամ ցեխերի ժողովներում :

Այդ դեպքերում համադործարանային և տեղական կոմիտեների համար թեկնածուներ են առաջարկվում յուրաքանչյուր ընտրական ժողովում (հերթափոխութեան կամ ցեխի), վորից հետո դործարանային կոմիտեն կազմում է հերթափոխութիւնների ու ցեխերի ժողովներում առաջարկված բոլոր թեկնածութիւնների ցուցակը : Այդ ցուցակի մեջ մտցված թեկնածութիւնները քվեարկվում են բոլոր հերթափոխութիւնների կամ ցեխերի ժողովներում :

Ցեխային կոմիտեների հաշվետուութիւնները և ընտրութիւնները կատարվում են պրոֆմիութեան անդամների ընդհանուր և ցեխային ժողովներում :

Այն դեպքերում, յերբ ըստ արտադրութեան պայմանների հնարավոր է գումարել պրոֆմիութեան անդամների համացեխային ժողով, դործարանային և տեղական կոմիտեների թույլտուութեամբ պրոֆմիութեան անդամների ժողովները կարելի է գումարել ըստ հերթափոխութիւնների :

Խմբակային պրոֆկազմակերպիչների հաշվետուութիւնները և ընտրութիւնները կատարվում են պրոֆմիութեան անդամների համապատասխան խմբակային ժողովներում :

Պրոֆմիութեան անդամների հաշվետու-ընտրական ժողովներն իրավադոր են համարվում այն դեպքում, յերբ ներկա չեն ընտրութիւնների շրջանում ձեռնարկութեան մեջ և հիմնարկում աշխատող պրոֆմիութեան բոլոր անդամների առնվազն յերկու յերրորդ մասը :

6. Պրոֆմիութենական որդանների ընտրութիւնները կատարվում են այն ժամանակ միայն, յերբ ժողովը, կոնֆերանսը, համադումարը լսել ու քննարկել է միութեան համապատասխան կոմիտեների և վերստուղիչ հանձնաժողովների հաշվետու զեկուցումը և վորոշում է ընդունել այդ առթիվ :

7. Գործարանային (տեղական) կոմիտեյի հաշվետուութիւնը քննարկելուց և հաշվետուութեան առթիվ բանաձև ընդունելուց

հետո ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը վորոշում են միութեան համապատասխան կոմիտեյի նոր անդամներ թիվը, գործարանային, շրջանային և մարզային կոմիտեյների նկատմամբ ղեկավարվելով միութեան կենտկոմի ղերեկտիվով, իսկ միութեաններին կենտկոմներին նկատմամբ՝ ՀՍՄԿԽ-ի ղերեկտիվով:

8. Պրոֆմիութենական որդանի նոր կազմի համար թեկնածու-թյուն է առաջարկվում հենց ընտրական ժողովում:

Պրոֆմիութեան յուրաքանչյուր անդամին, վորը ցանկանում է այս կամ այն թեկնածու-թյունն առաջարկել պրոֆմիութենական որդանի կազմի համար, ժողովի նախագահութեանը խոսք է տալիս թեկնածու-թյան մասին առաջարկ մտցնելու և այդ առաջարկը հիմնավորելու համար:

Այն դեպքում, յերբ առաջարկ է ստացվում, վոր դադարեցվի թեկնածուների առաջադրումը համապատասխան պրոֆորդանի համար, ժողովի նախագահութեանը այդ առաջարկը մտցնում է ընդհանուր ժողով, կոնֆերանս, համագումար՝ վորոշում կայացնելու համար, և բաց քվեարկութեամբ վորոշվում է այն հարցը, արդյոք պետք է շարունակել, թե դադարեցնել ընտրվող պրոֆեսիոնալ որդանի կազմի համար նոր թեկնածու-թյուններ զրանցելը:

Թեկնածու-թյունների քննարկումը կատարվում է անհատականորեն: Թեկնածու-թյուններն անհատականորեն քննարկվելիս պետք է ապահովվի պրոֆորդանի կազմի համար առաջադրված թեկնածու-թյունները բացարկելու անսահմանափակ իրավունք, այսինքն՝ ժողովի յուրաքանչյուր մասնակից կարող է բացարկել առաջադրված թեկնածու-թյունների ուղած քանակութեանը և յուրաքանչյուր առաջադրված թեկնածու-թյան շուրջը «թեր» կամ «դեմ» կարող են արտահայտվել պրոֆմիութեան անսահմանափակ թվով անդամներ:

Այն դեպքում, յերբ առաջարկ է ստացվում դադարեցնել այս կամ այն թեկնածու-թյան քննարկումը, ժողովի նախագահութեանը այդ առաջարկը մտցնում է ընդհանուր ժողով, կոնֆերանս, համագումար՝ վորոշում կայացնելու համար, և բաց քվեարկութեամբ վորոշվում է տվյալ թեկնածու-թյան քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը:

9. Բացարկ ունեցող թեկնածու-թյունները քննարկվելուց հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվե-

արկութեան կարգով լուծել այն հարցը, թե հարկավոր է արդյոք մտցնել կամ չմտցնել տվյալ թեկնածու-թյունն այն ցուցակի մեջ, վորը կազմվում է պրոֆմիութենական որդանի ընտրութեանները փակ (զաղտնի) քվեարկութեամբ անցկացնելու համար: Ընդամեն անհրաժեշտ է հաշվել թե՛ «հողուտ բացարկի» և թե՛ «ընդդեմ բացարկի» տրված բոլոր ձայները:

Թեկնածու-թյունների նկատմամբ, վորոնց դեմ բացարկ չէ ստացվել, բաց քվեարկում չի կատարվում, և այդ թեկնածու-թյունները մտցվում են փակ (զաղտնի) քվեարկութեամբ ընտրութեաններ կատարելու ցուցակի մեջ:

Թեկնածու-թյունները ժողովում, կոնֆերանսում, համագումարում քննարկվելուց հետո փակ (զաղտնի) քվեարկութեան ներկայացվող ցուցակներին ճշտութեան համար պատասխանատու յե ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահութեանը: Նախագահութեանը պարտավոր է ուշի-ուշով ստուգել կազմված ցուցակի զրանցումների ճշտութեանը:

Փակ (զաղտնի) քվեարկութեան համար կազմված ցուցակները չպետք է ստորագրվեն պրոֆմիութեան քվեարկող անդամների կողմից:

10. Փակ (զաղտնի) քվեարկութեան կատարելուց առաջ պրոֆմիութեան անդամների ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը բաց քվեարկութեամբ ընտրում է հաշվող հանձնաժողով՝ փակ (զաղտնի) քվեարկութեան արդյունքները հաշվելու համար:

Հաշվող հանձնաժողովի անդամների թիվը վորոշում է ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը: Հաշվող հանձնաժողովի անդամներն ընտրում են հաշվող հանձնաժողովի նախագահ:

Այն ձեռնարկութեաններում ու հիմնարկութեաններում, վորտեղ համագործարանային պրոֆորդանների ընտրութեանները կատարվում են ցեխերի ու հերթափոխութեանների ժողովներում, համագործարանային հաշվող հանձնաժողովը կազմվում է պրոֆմիութեան ցեխային, հերթափոխային ժողովներում հաշվող հանձնաժողովի համար ընտրված ներկայացուցիչներից: Այդ դեպքերում հաշվող հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը և յուրաքանչյուր ցեխից կամ հերթափոխութեանից այդ հանձնաժողովի համար ընտրվող ներկայացուցիչների թիվը վորոշում են գործարանային և տեղական կոմիտեյները:

Քվեարկությունից առաջ հաշվող հանձնաժողովի նախագահը (իսկ այն ձեռնարկություններում, վորտեղ ընտրությունները կատարվում են ցեխերի ու հերթափոխությունների ժողովներում՝ հաշվող հանձնաժողովի անդամը) պարտավոր է պրոֆմիուկթյան անդամների ժողովին, կոնֆերանսի ու համագումարի պատգամավորներին բացատրել փակ (զաղտնի) քվեարկություն անցկացնելու կարգը:

Հաշվող հանձնաժողովը պարտավոր է փակ քվեարկությունից առաջ պատրաստել քվեատուփեր և անձամբ կնքել կամ կողպել դրանք:

11. Ընտրական ժողովի, կոնֆերանսի, համագումարի մասնակիցներին, պրոֆտոմսը կամ պատգամավորական մանդատը ներկայացնելուց հետո, հաշվող հանձնաժողովը տալիս է նրանց պրոֆորզանների նոր կազմի համար առաջարկված թեկնածու-թյունների ցուցակներից մի-մի որինակ և ցուցակներում կամ մանդատներում նշում է, թե պրոֆմիուկթյան անդամը մասնակցել է քվեարկությանը:

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքները հաշվելու ժամանակամիջոցում հաշվող հանձնաժողովի անդամներն ազատվում են իրենց արտադրական պարտականություններից:

12. Փակ (զաղտնի) քվեարկությանը մասնակցում են պրոֆմիուկթյան անդամները միայն:

Միության յուրաքանչյուր անդամ փակ (զաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի ջնջելու առանձին թեկնածու-թյունները և առաջարկելու պրոֆորզանների կազմի համար նոր թեկնածուներ, անկախ նրանից, թե ժողովը, կոնֆերանսը, համագումարը քանի անգամ է վորոշել ընտրել պրոֆորզաններին նոր կազմի համար:

13. Քվեարկությունից հետո հաշվող հանձնաժողովը բաց է անում քվեատուփերը և այդ նպատակով հատկացված սենյակում հաշվում է քվեարկության արդյունքները:

Հաշվող հանձնաժողովը պարտավոր է յուրաքանչյուր թեկնածու-թյան համար «թեր» և «դեմ» տրված բոլոր ձայները հաշվել առանձին:

Ձայները հաշվելուց հետո հաշվող հանձնաժողովը կազմում է մի արձանագրություն, վորի մեջ մտցնում է յուրաքանչյուր առանձին թեկնածու-թյան քվեարկման արդյունքները, և հանձնա-

ժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն սենյակում, վորտեղ հաշվումն է կատարվում, վոչ վոք իրավունք չունի դանվելու, բացի հաշվող հանձնաժողովի անդամներից:

14. Հաշվող հանձնաժողովն ընտրական ժողովում, կոնֆերանսում, համագումարում գեկուցում է յուրաքանչյուր թեկնածու-թյան քվեարկման արդյունքներն առանձին:

Պրոֆորզանի կազմի համար ընտրված են համարվում այն թեկնածու-թյունները, վորոնք ստացել են ձայների մեծամասնություն, բայց վոչ պակաս, քան ժողովում, կոնֆերանսում, համագումարում տրված ձայների առնվազն կեսը:

15. Փակ (զաղտնի) քվեարկության ամբողջ նյութը (թեկնածու-թյունների ցուցակները, դրավոր դիմումները, քվեարկման հաշվումները և այլն) վորպես զաղտնի փաստաթղթեր պետք է պահվեն համապատասխան պրոֆորզաններում:

ՊՐՈՑԵՍԻՈՆԱԼ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՅԻՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿԽ-Ի 6-ԲԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մեծ նշանակութիւն տալով պրոֆեսիոնալ միութեան տիպային կանոնադրութեանը, վորը հսկայական դեր պետք է խաղախորհրդային պրոֆեսիոնալ միութիւնների հետագա զարգացման մեջ, ՀԱՄԿԽ-ի պլենումը վորոշում է՝

1. Կազմել կանոնադրային հանձնաժողով հետեյալ կազմով՝

1. Ն. Մ. Շվեդնիկ	28. Ա. Յա. Նովիկովա
2. Կ. Ի. Նիկոլայեվա	29. Դ. Ա. Պողբեգով
3. Պ. Գ. Մոսկատով	30. Ա. Ն. Ռյաբով
4. Ս. Լ. Բրեզման	31. Մ. Տ. Մաքսիմով
5. Յե. Ն. Յեզորովա	32. Ն. Մ. Միզինով
6. Լ. Մ. Կազանովիչ	33. Վ. Վ. Կիլոսանիձե
7. Ա. Ա. Անդրեյեվ	34. Ս. Ո. Կոտլյար
8. Ս. Ա. Լոգովսկի	35. Ի. Վ. Տրոֆիմով
9. Մ. Մ. Ռոմանով	36. Ֆ. Գ. Վորոպայեվ
10. Մ. Ն. Կուրկինա	37. Գ. Ֆ. Կոսիլով
11. Մ. Պ. Ստեպանով	38. Պ. Չ. Պավլով
12. Լ. Մ. Լոկչին	39. Մ. Կ. Կուրիև
13. Ն. Լ. Սորով	40. Յե. Ա. Կիրյանովա
14. Ն. Վ. Վորոնինա	41. Ա. Վ. Միշչենկո
15. Լ. Բ. Տալալայ	42. Մ. Մ. Կազանովիչ
16. Մ. Ա. Վոլկով	43. Գ. Դ. Վեյնբերգ
17. Ա. Վ. Չելիկով	44. Ն. Ն. Յեվրեյինով
18. Ա. Ի. Ստեցկի	45. Ա. Կ. Արտին
19. Բ. Մ. Տալ	46. Պ. Յե. Սիյանկո
20. Լ. Չ. Մեխլիս	47. Մ. Յե. Գրանատ
21. Ա. Վ. Կոսարեվ	48. Ն. Լ. Չարուբին
22. Կ. Կ. Սարիեվսկի	49. Ի. Ս. Նեպոպ
23. Ա. Վ. Արտյուխինա	50. Պ. Գ. Կարպով
24. Պ. Ի. Վալեսկալն	51. Վ. Ի. Տրուբաչեյեվ
25. Գ. Ս. Մորոզ	52. Ա. Մովլյանով
26. Յե. Ի. Ավդեյեվա	53. Գ. Ն. Պետելին :
27. Մ. Ի. Պապով	

2. Հանձնարարել կանոնադրային հանձնաժողովին՝ վերամշակել պրոֆեսիոնալ միութեան տիպային կանոնադրութեան՝ ՀԱՄԿԽ-ի նախագահութեան կողմից ներկայացված նախադիժը, հաշվի առնելով պլենումում տեղի ունեցած կարծիքների փոխանակումը :

3. Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահութեանը՝ ամենաուշը մինչև ս. թ. հուլիսի 1-ը դումարել ՀԱՄԿԽ-ի պլենում՝ քննելու տիպային կանոնադրութեան նախադիժն այն հաշվով, վորպեսզի կանոնադրային հանձնաժողովի ներկայացրած նախադիժը, ՀԱՄԿԽ-ի պլենումում քննարկվելուց հետո, հրատարակվի՝ պրոֆեսիոնալ միութիւնների անդամների լայն քննարկման համար :

Պրոֆեսիոնալ միութեան տիպային կանոնադրութեան հաստատումը մտցնել իՍՀՄ-ի պրոֆեսիոնալ միութիւնների 10-րդ համագումարի որակարգի մեջ :

ԻՐԱԳՈՐԾԵԼ ՇՐՋԱԴԱՐՉԸ ՊՐՈՖԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Յերեկ վերջացավ ՀԱՄԿՍ-ի 6-րդ պլենումը: Այդ պլենումի նշանակությունը հսկայական է. նա կմտնի խորհրդային պրոֆ-չարթման պատմության մեջ, վորպես ամենալուրջ, բեկումնային ուղենիշ:

Նորհրդային պրոֆեսիոնալ միությունները միավորում են 22 միլիոն բանվորների, ծառայողների և մասնագետների: Սակայն, սոցիալիզմի յերկրում պրոֆմիությունների դերը վորոշ-վում է վոչ այդ կազմակերպությունների մեջ մտնող աշխատա-վորների մեծ քանակով միայն: Պրոֆմիությունները կառավա-րող, տիրապետող դասակարգի, պրոլետարական հեղափոխու-թյան հեղեմոն-դասակարգի մասսայական կազմակերպություն են: Բանվոր դասակարգի դիկտատուրայի ամրացումը և մասնա-վորապես Նորհուրդների առաջիկա ընտրությունների հաջող անցկացումն անհնարին է առանց պրոֆեսիոնալ միությունների ակտիվ մասնակցության:

Յերկրի քաղաքական կյանքում կատարված շրջադարձը պրո-ֆեսիոնալ միություններին անպատրաստի վիճակում է դնում: Այդ կազմակերպությունների աշխատանքի բովանդակություն ու մեթոդները և նույնիսկ բուն կանոնադրությունը չեն համա-պատասխանում նոր իրադրությունը: Պրոֆմիությանական դեկա-վար որդաններն իրենց համար լիովին չեն պարզել կուսակցու-թյան դրած նոր խնդիրների բնույթը: Նրանք հետ են մնացել սո-ցիալիստական շինարարության լայն թափից, կտրվել են մասսա-ներից, վորոնց կուլտուրական մակարդակն ու քաղաքական ակ-տիվությունն անչափելիորեն մեծացել են: Հենց այդ է, իսկն ասած, պրոֆմիությունների ապրած յուրահատուկ ճգնաժամի եյությունը:

ՀԱՄԿՍ-ի պլենումում ճառախոսների մեծամասնությունը հարկադրված էր խոստովանելու, վոր պրոֆմիությունական աշ-խատանքում յեղած լճացումը, դեկավար աշխատողների՝ ընդ-հուպ մինչև ՀԱՄԿՍ-ի քարտուղարների կտրվելը պրոֆմիության անդամներից ամենից առաջ բացատրվում է իսկական դեմոկրա-տիայի բացակայությունը պրոֆմիություններում: Պրոֆմիություն-ներն իրենց բնույթով կրկնակիորեն դեմոկրատիկ կազմակերպու-թյուններ են: Նրանց գործունեությունը պետք է կառուցվի մասսաների ինքնադործունեություն, նախաձեռնություն, ստեղ-ծագործության հմուտ ոգտագործման վրա: Հրամայումը, վար-չարարությունը, նշանակովիությունը, կոոպտացիան ամլացնում են պրոֆմիությունների հասարակական բնույթը, կտրում են պրոֆորդանները մասսաներից և նրանց դարձնում են դրասենյա-կային հիմնարկություններ, իսկ պրոֆաշխատողներին՝ այդ դրասենյակների վատթար պետեր: Մինչդեռ, պրոֆմիությունա-կան որդանների աշխատանքում՝ սկսած գործարանային կոմի-տեներից և վերջացրած ՀԱՄԿՍ-ի նախագահությունը՝ դեմոկրա-տիան խախտվել է: Տարրական թվացող բաները, ինչպես պրո-ֆեսիոնալ կազմակերպությունների անդամների ընդհանուր ժո-ղովների կանոնավոր գումարումը, մասսաների առաջ հաշվետու լինելը, ժողովների և կոնֆերանսների վորոշումների կատարու-մը, ժողացված վիճակում են յեղել: Աշխատավորների աղբյու-րաբուղիս ակտիվությունը, պրոֆեսիոնալ միությունների ան-դամների ինքնադործունեությունը չեն ոգտագործվել:

Պրոֆմիությանական աշխատանքի վերակառուցումը հարկա-վոր է սկսել դեմոկրատիան վերականգնելով: Պրոֆորդանների ընտրություններն այժմ պետք է կատարվեն դադտնի քվեարկու-թյամբ: Այդ միջոցառումը կհայտաբերի պրոֆմիությունների անդամների իսկական վերաբերմունքը դեպի պրոֆաշխատողե-րը. նա կնպաստի մաքրելու պրոֆեսիոնալ միությունների դե-կավարությունը բյուրոկրատներից, չինուչներից (чужих), մաս-սաներից կտրված մարդկանցից. նա կողնի հայտաբերելու ժո-ղովրդի թշնամիներին, վորոնք թագնվել են վորոշ պրոֆորդան-ներում: Հենց ՀԱՄԿՍ-ի պլենումում արդեն վճռական քայլ է արված թարմացնելու խորհրդային պրոֆմիությունների դեկա-վարությունը՝ ՀԱՄԿՍ-ի նախագահության և քարտուղարու-թյան նոր կազմ է ընտրված: Ինչպես հայտնի յե, պրոֆմիու-նական վեկավար աշխատողների զգալի մասը, վորոնք իրենց

դէրքի բարձրութեան վրա չէյին դտնվում, նախագահութեան և քարտուղարութեան կազմի մեջ չանցան: ՀԱՄԿԽ-ի պլենումը նրանց թեկնածութիւնները բացարկեց, քվեարկութեամբ տասուլեց: Սա մի ակնառու դաս է պրոֆմիութենական բոլոր կազմակերպութիւններին համար, թե ինչպէս պետք է իրագործել դեմոկրատիան: Սխալ է կարծել, թե պրոֆմիութենական դեմոկրատիայի լրիվ իրագործումն սպառվում է լոկ դադարնի քվեարկութեամբ: Իսկական դեմոկրատիան նշանակում է այնպիսի հարաբերութիւններ պրոֆմիութեան շարքային անդամի և պրոֆորգանի միջև, վորի ժամանակ յուրաքանչյուր աշխատավորի ձայն պարզորեն կլսվեր, այդ ձայնին ականջ կդնէյին, նրան հաշի կտոնէյին: Ժամանակն է, վորպեսզի պրոֆմիութենական բոլոր աշխատողներն ըմբռնեն, թե այս կամ այն ժամանակաշրջանում իրենց կողմից գլխավորվող կազմակերպութիւնների իսկական տերերը պրոֆեսիոնալ միութեան անդամներն են: Նրանք, և միմիայն նրանք են վճռում բոլոր գործերը: Նրանց վստահութեամբ է ուժեղ այս կամ այն պրոֆաշխատողը, այդ վստահութեան վրա յի հիմնվում նրա անձնական հեղինակութիւնը:

Պրոֆմիութիւնները կոչված են հսկայական դեր խաղալու խորհրդային դեմոկրատիայի ծավալման գործում: Նրանք յերկրի այն հասարակական կազմակերպութիւններից մեկն են, ըստվորում ամենից ավելի խոշորը և առաջատարը, վորին Ստալինյան Սահմանադրութիւնն իրավունք է վերապահել Խորհուրդների առաջիկա ընտրութիւններում իր թեկնածուներն առաջադրելու: Բայց աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընտրութիւններում վայել տեղ գրավելու համար պրոֆմիութիւնները պարտավոր են նախ կարգի բերել իրենց սեփական տունը և ամենից առաջ մեկ անգամ ընդմիտ վերջ տան ներմիութենական դեմոկրատիայի խախտումներին:

Լենինի-Ստալինի կուսակցութիւնը պրոֆեսիոնալ միութիւնները բանվոր դասակարգի բազմամիլիոն կազմակերպութիւն դարձրեց: Լենինը հսկայական նշանակութիւն էր տալիս պրոֆեսիոնալ միութիւններին, վորպէս բանվոր դասակարգի օլատմականորեն միանգամայն անհրաժեշտ կազմակերպութիւնների, առանց վորոնց պրոլետարիատը չեր կարող համախմբվել ու կազմակերպվել վորպէս դասակարգ, հաջողութեամբ պայքարել բուրժուազիայի դեմ, տապալել նրա տիրապետութիւնը,

ևս իշխանութիւնը վերցնելուց հետո՝ իրագործել իր դիկտատուրան և կոտուցել սոցիալիստական հասարակութիւնը:

Բոլշևիկյան կուսակցութեան ոգնութեամբ պրոֆեսիոնալ կազմակերպութիւնները գտեցին իրենց շարքերը մենչեիկներին, սինդիկալիստական և տրեդ-յունիոնիստական տարրերին: Հաջողութեամբ ջախջախվեց աջ ոպորտունիզմը, տրեդ-յունիոնիզմը խորհրդային պրոֆշարժման մեջ (Տոմսկու խմբակը): Վտարելով պրոֆեսիոնալ միութիւններից կապիտալիզմի ուստավրատարներին՝ Տոմսկուն և նրա ամենամերձավոր արբանյակներին, պրոֆմիութենական շատ աշխատողներ վճռեցին, վոր կարելի չէ դափնիների վրա հանդատանալ, մինչդեռ տրեդ-յունիոնիզմի մնացորդները պրոֆմիութիւնների պրակտիկ գործունեութեան մեջ պահպանվել են: Պրոֆմիութիւնների պրակտիկ գործունեութեան մեջ տրեդ-յունիոնիզմի մնացորդները հասցնում էյին քաղաքական պասսիվութեան, տնտեսական և պրոֆմիութենական որդանների աշխատանքում յեղած բյուրոկրատական աղավաղումների դեմ պայքարելուց եյապէս հրաժարվելուն, պրոֆմիութիւնների՝ վորպէս կոմունիզմի դպրոցի դերը նվաստացնելուն: Գաղաքական պասսիվութիւնն ու անհոգութիւնը հասցրին այն բանին, վոր պրոֆմիութենական աշխատողները չկարողացան մերկացնել աշխատանքի պաշտպանութեան, սոցիալական ապահովագրութեան մեջ յեղած վնասարարներին, ստախանովյան շարժումը վիժեցնող վնասարարներին: Պրոֆմիութենական որդանների մեջ, ընդհուպ մինչև միութիւնների կենտկոմները և ՀԱՄԿԽ-ի ապարատը, թափանցել էյին ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստներն ու աջ վնասարարները, դիվերսանտները: Բանվորների, ծառայողների, մասնագետների ահագանդերը պրոֆմիութիւնները հաճախ անուշադրութեան էյին մատնում, վորը հեշտացրեց ժողովրդի թշնամիներին՝ տրոցկիստական վնասարարների, դիվերսանտների և նրանց աջ գործակիցների հանցավոր գործունեութիւնը: ՀԱՄԿԽ-ի անդամների մեջ դտնվեցին մի քանի տրոցկիստներ և աջեր, բանվոր դասակարգի յերդվայթ թշնամիներ, վորոնք յերեկ վերջացած պլենումում միայն վտարվեցին խորհրդային պրոֆշարժման շտաբի կազմից:

Պրոֆեսիոնալ միութիւններն իրենց շարքերում համախմբում են ակտիվութեամբ և ստեղծագործութեամբ յերեկի մի բանվոր դասակարգ, խորհրդային ինտելիգենցիայի լայն շրջանները, բնակչութեան՝ քաղաքականապէս ամենից ավերակա-

վորված և կուլտուրական մասը: Ամենուրեք՝ յուրաքանչյուր
հանրապետութեան մեջ, յերկրում ու մարզում պրոֆեսիոնալ
միութեանների անդամների ճնշող մեծամասնութիւնը, ինչպէս
հայտնի յե, ապրում է քաղաքներում և բանվորական ավաննե-
րում: Հետևաբար, յեթե մենք ուզում ենք ամբացնել քաղաքի՝
վորպէս քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի
կենտրոնի ղեկավար դերը, անհրաժեշտ է ամեն կերպ մինչև
այսօրվա խնդիրների մակարդակը բարձրացնել այն կազմակեր-
պութիւնը, վորն ընդգրկում, համախմբում է աշխատավոր քա-
ղաքացիներին, այն է՝ պրոֆեսիոնալ միութիւնը: Այլապէս, ա-
մեն տեսակի խոսակցութիւնները քաղաքի ղեկավար դերի ամ-
բացման մասին՝ միայն ապարդշուն շաղակրատութիւն կլինեն:

Վնասակար է, լենինիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունի
վորոչ կոմունիստների արհամարհական վերաբերմունքը դեպի
պրոֆմիութենական աշխատանքը: Պրոֆմիութիւններն այժմ
խիստ հետ են մնում կուսակցութեան պահանջներէից, աշխատա-
վորները պահանջներէից: Կոմունիստները պրոֆեսիոնալ միութ-
թիւնների աշխատանքը կարող են բարձրացնել միլիոնավոր ան-
կուսակցական բանվորների և ծառայողների վրա հենվելով և
նրանց պրոֆմիութենական ակտիվ աշխատանքի մեջ ներգրավե-
լով միայն: Կոմունիստները պրոֆեսիոնալ միութիւնների ուղե-
ցույցներն ու ղեկավարներն են: Յուրաքանչյուր կոմունիստ
պրոֆմիութենական աշխատանքի մասնակիցն է: ՀԱՄԿԽ-ի պլե-
նումին ներկա եյին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարներն՝ ընկեր-
ներ Լ.Մ. Կադանովիչը և Ա.Ա. Անդրեյեվը: Նրանց մասնակցու-
թիւնը պլենումի աշխատանքի մեջ մտցրեց ստալինյան վոզի, բոլ-
շևիկյան կրքոտութիւն, անողոք քննադատութիւն, այն ամենը,
ինչ վոր անհրաժեշտ է, ինչի կարիքն ունեն մեր պրոֆմիութիւն-
ները:

ՀԱՄԿԽ-ի պլենումը վերջացավ: Նա հանեց խորհրդային
պրոֆմիութիւններին ճիշտ ուղի մատնանշող բացառիկ կարևոր
վորոշումներ: Այժմ մնում է, վորպէսզի ՀԱՄԿԽ-ի պլենումի վո-
րոշումները հասցնենք պրոֆմիութենական ամեն մի բջիջին, բա-
ցատրենք պրոֆմիութեան յուրաքանչյուր անդամին, իրագործենք
կյանքում:

Այս է գլխավորը:

«Правда», 16 մայիսի 1937 թ.

ԼԱՅՆՈՐԵՆ ԾԱՎԱԼԵԼ ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի այսօր հրատարակվող վորոշում-
ները՝ պրոֆմիութենական որդանների ընտրութիւնների կազմա-
կերպման և պրոֆեսիոնալ միութեան տիպային կոնոնադրու-
թեան նախադի մասին՝ բացառիկ մեծ նշանակութիւն ու-
նեցող փաստաթղթեր են: ՀԱՄԿԽ-ի պլենումի վորոշումները նոր
եջ են բաց անում խորհրդային պրոֆեսիոնալ շարժման մեջ և
կոնկրետ ծրագիր են տալիս՝ հաղթահարելու պրոֆմիութեան-
ների առանձնահատուկ ճգնաժամը, վորի եյութիւնը նրանց ղե-
կավար որդանների՝ մասսաներից կտրված լինելն է, պրոֆմիութ-
ենական գործիչները՝ սոցիալիստական շինարարութեան լայն
թափից և բանվոր դասակարգի քաղաքական աճումից հետ մնալն
է:

Բուլլետիլների կուսակցութեան ուժը միշտ այն է յեզել, վոր
նա կարողացել է անողոքաբար բաց անել իր սխալներն ու թերու-
թիւնները: Տասնհինգ տարի առաջ, կուսակցութեան XI համա-
դումարում հանդէս գալով, Լենինն ասել է. «Բոլոր հեղափոխա-
դումարում հանդէս գալով, վորոնք մինչև այժմ կործանվել են, —
կոմունիստներն են նրանից, վոր գոռոզացել են ու չեն կարողացել
տեսնել, թե ինչի մեջ է իրենց ուժը, և վախեցել են խոսել ի-
րենց թուլութիւնների մասին: Իսկ մենք չենք կործանվի, վո-
րովհետև չենք վախեցում խոսել մեր թուլութիւնների մասին, և
կսովորենք հաղթահարել թուլութիւնը»:

Պրոֆմիութիւնները սարտավոր են վճռականապէս լավաց-
նել դաստիարակչական աշխատանքը, ոգնել միլիոնավոր բան-
վորներին ու ծառայողներին՝ տիրապետելու բոլշևիզմին: Իսկ
մասսաների ճիշտ դաստիարակութիւնը չի կարող լինել առանց
ծավալուն, գործուն ինքնաքննադատութեան: Հենց այս է, վոր
առայժմ պակասում է պրոֆմիութիւններին:

ՀԱՄԿԽ-ի ավարտված պլենումի կարևորագույն նշանակու-
թյունն այն է, վոր նա կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի
ակտիվ ոժանդակութեամբ կարողացավ սուր քննադատություն
ծավալել պրոֆչարթման ղեկավարների թույլ տված սխալների ու
թերութեանների նկատմամբ: Ինչպես դարձնանային մրրիկը գետ-
նից քչում-տանում է ցեխը և մաքրում է ողը, այդպես էլ ծավալ-
ված քննադատությունը բազմապատկեց պրոֆմիութեանների ու-
ժերը և ամրացրեց նրանց ղեկավարութեանը: Քննադատութեան
բացակայութեան ժամանակ՝ ուժեղ աշխատողը հաճախ քայքայվում
է, թուլացնում է իր զգոնութեանը և դառնում թշնամու համար
ձեռնտու կերպով գործող բյուրոկրատ: Ծավալուն ինքնաքննա-
դատութեանը խորտակում է թղթե ղեկավարութեանը, պասկա-
ցերձ է անում նվաղ հեղինակավոր ղեկավարներին, բայց դրա
փոխարեն զինում է կուսակցական և անկուսակցական բոլշևիկ-
ներին, վողեորելով նրանց նոր աշխատանքի համար, հեղինա-
կավոր ղեկավարներ դարձնելով նրանց: Այդպիսի գործոն քննա-
դատութեան որինակ տվեց ՀԱՄԿԽ-ի պլենումը: Չխնայելով վոչ
վոքի ինքնասիրութեանը և նորոգելով ղեկավարութեանը,
ՀԱՄԿԽ-ի պլենումն ակնառու կերպով ցույց տվեց, վոր մեր
մարդկային ռեզերվներն անսպառ են, վոր աճել են նոր կազմեր,
վորոնք հաջողութեամբ կարող են համալրել պրոֆմիութեանական
ակտիվի շարքերը:

Յերկիրն ընթանում է դեպի խորհուրդների նոր ընտրութեան-
ներն՝ ըստ Ստալինյան Սահմանադրութեան: Մասսաների քաղա-
քական ակտիվութեան վիթխարի աճումը մեր ուժի ամենափայ-
լուն ասպարեցն է, ցուցանիչը այն բանի, վոր մեր մեծ հայ-
րենիքի աշխատավորներն այժմ լիակատար չափով իրացնում են
այն քաղաքական ազատութեանները, վոր իրենք նվաճել են սո-
ցիալիստական հեղափոխութեան 20 տարվա ընթացքում: Յերկրի
քաղաքական կյանքի՝ նոր Սահմանադրութեան իրականացման
հետ կապված շրջադարձն ամենից առաջ արտացոլում է մասսանե-
րի քաղաքական գիտակցութեան հսկայական աճումը: Պրոֆմիութե-
անների կուլտուրայի աճած, քաղաքականապես հասունա-
ցած անդամների վճռականորեն պահանջում են իրենց ղեկավար-
ներից, վորպեսզի նրանք դադարեն հին ձևով աշխատելուց, վոր
նրանք վերակառուցվեն վոչ թե խոսքով, այլ գործով:

Խորհուրդների նոր ընտրութեաններին պատրաստվելով,
մենք՝ բոլշևիկներս վոչ մի ընտրական քվեաթերթ չենք ցանկա-

նում ստանալ խաբեյական ճանապարհով: Մենք դրա կարիքը
չունենք: Յեթե բուրժուական կուսակցութեաններն ընտրու-
թյուններից առաջ դիմում են ամեն տեսակի խորաման-
կութեանների, վորպեսզի խաբեն մասսաներին, վոր-
պեսզի կոծկեն կապիտալիստական հասարակարգի արմատա-
կան հակասութեանները և յերախաբաց խոցերը, ապա ընտրու-
թյունների համար մեր բոլշևիկյան նախապատրաստումն իր մեջ
պարունակում է թերութեանների անողոք քննադատութեան
ու նրանց իրական վերացումը: Ստալինյան Սահմանադրութեամբ
կատարվելիք նոր ընտրութեաններին մոտենալով, մենք ամենից
առաջ բոլշևիկյան կարգ պետք է մտցնենք վոչ միայն մեր կու-
սակցական տան մեջ, այլ նաև պրոֆմիութեանական կազմակեր-
պութեաններում, վորոնք կուսակցութեանը հազարավոր թելե-
րով կապում են բանվոր դասակարգի հետ:

Պրոֆմիութեանները կուսակցութեանն ամենամոտիկ մասսա-
յական կազմակերպութեանն են: Նրանք իրենց շարքերում հա-
մախմբում են շուրջ 22 միլիոն մարդ և մոտենում են այն բանին,
վորպեսզի դառնան բանվոր դասակարգն ամբողջապես ընդգրկող
կազմակերպութեան: Նրանք ավանդարդը միացնում են մաս-
սայի հետ, առաջավորներին շաղկապում են հետամնացների
հետ, կառավարման բոլոր ճյուղերում ղեկավարող աշխատանքի
համար իրենց միջից դուրս են բերում լավագույն մարդիկ:
Նրանք կոմունիզմի դպրոցն են: Պրոֆմիութեանների առաջնա-
կարգ խնդիրը հողացողութեանն է բանվորների և ծառայողների
քաղաքական դաստիարակութեան մասին, հողացողութեանը՝
մասսաների կենսական կարիքների և կուլտուրական պահանջնե-
րի բավարարման մասին: Այս խնդիրների իրագործումը յուրա-
քանչյուր բոլշևիկի պատվավոր պարտականութեանն է: Ուստի
անհրաժեշտ է ամենայն վճռականութեամբ վերջ տալ արհամար-
հական վերաբերմունքին դեպի պրոֆաշխատանքը: Անհրաժեշտ
է հաստատակամորեն և սիրով դաստիարակել և աճեցնել պրոֆ-
աշխատողների կազմերը, համալրելով նրանց բանվոր դասա-
կարգի գործին նվիրված լավագույն և ամենից ակտիվ մարդկան-
ցով:

ՀԱՄԿԽ-ի պլենումի վորոշմամբ զաղտնի քվեարկութեան
այսուհետև մտցվում է պրոֆեսիոնալ բոլոր կազմակերպութեան-
ներում, ներքևից մինչև վերև, այսինքն՝ այսուհետև զաղտնի
քվեարկութեամբ պետք է ընտրվեն բոլոր ղեկավար պրոֆաշխա-

տողները՝ սկսած գործարանային ու տեղական կոմիտեաների ան-
դամներից և պրոֆմիուսթենական խմբակների կազմակերպիչներից,
վերջացրած պրոֆմիուսթյունների մարզային, յերկրային, հանրա-
պետական ու կենտրոնական կոմիտեաների ղեկավարներով: Ընդամի-
յուրաքանչյուր թեկնածուսթյուն մանրամասն քննարկման առար-
կա պետք է լինի: Թեկնածուսթյունները բացարկելու անսահմա-
նափակ իրավունքը, ցուցակով քվեարկելն արգելելը, ընդհանուր
ժողովների նենդափոխումը և ընտրությունները գործարանային
ու հիմնարկային կոնֆերանսներում կատարելն արգելելը, ընտ-
րող մասսայի առաջ պրոֆմիուսթենական յուրաքանչյուր օրգանի
պարտադիր հաշվետվություն մտցնելը,—այս բոլորն առաջիկա
ընտրությունների՝ մինչև վերջ հասցրած դեմոկրատիզմի հետե-
վողականությունն են բնութագրում:

Պարոն Սիտրինները, վորոնք հանցանքի մեջ բռնված ու մեր-
կացված են, վորպես ձեռնարկատերերի լրտեսական, պրոպոկա-
տորական կազմակերպության գործակիցներ, ամենուրեք դավա-
բանում են Սմստերգամի Ինտերնացիոնալին հարող պրոֆմիու-
սթյունների դեմոկրատիզմը: Սակայն, նրանք յերբեք սիրտ չեն ա-
րել հարցնելու բանվորների իսկական կարծիքը տրեղ-յունիսնների
այժմյան ղեկավարության մասին, և հենց այժմ ել նրանք չեն
փորձում զաղտնի քվեարկության դնել իրենց թեկնածուսթյունները:
Հետևողականորեն զարգացնելով ներմիութենական դեմոկրատի-
ան և անկեղծորեն ցանկանալով շուտ վերջ տալ իրենց աշխա-
տանքում յեղած թերություններին, մեր պրոֆմիուսթյուններն
ամենից առաջ մասսաների իսկական ձայնին են դիմում:

Միանգամայն պարզ է, վոր մեր իսկական դեմոկրատական
ընտրությունները վոմանց համար բարիք չեն բերի: Փակ (գաղտ-
նի) քվեարկությունն անդուր է բուլչեիզմի բոլոր թշնամիներին,
վորոնք համառորեն կառչում են Տոմսիու պատվաստած տրեղ-
յունիսիզմի մնացորդներից: Նոր ընտրությունները վոչ մի լավ
բան չեն խոստանում տրոցկիստական և բուխարինյան վնասա-
բարներին, վորոնք ծվարել են պրոֆմիուսթյունների՝ ինքնաքննա-
դատության թարմ հողմով բավականաչափ չողահարվող այս կամ
այն ճեղքում: Նոր ընտրություններն ուղղված են ընդդեմ ամեն
տեսակի քաղաքական նեխածության և աղտեղության: Քաղաքա-
կան պասսիվությունը, բյուրոկրատական խեղաթյուրումները,
գործամոլությունը մասսաների դաժան քննադատության առարկան
են լինելու, իսկ այդ խեղաթյուրումները կրողները հարկադրված

կլինեն կամ վճռականորեն վերակառուցել իրենց աշխատանքը,
կամ իրենց տեղը զիջել բուլչեիզմի գործելու ընդունակ նոր
մարդկանց:

Պրոֆմիուսթենական ստորին կազմակերպությունների ընտ-
րությունները պրոֆեսիոնալ միությունների Համամիութենա-
կան X համագումարի նախապատրաստման առաջին քայլն են:
Այդ համագումարը խորհրդային պրոֆչարթման պատմական
ետապն է լինելու: Կուսակցական կազմակերպությունների խըն-
դիրն այն է, վոր ողնեն պրոֆմիուսթյուններին՝ մինչև վերջը
վերացնելու նրանց ապրած առանձնահատուկ ճղնաժամը և բարձ-
րացնեն նրանց աշխատանքը ստալինյան դարաշրջանի մակար-
դակին:

«Правда», 20 մայիսի 1937 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Մ. Շվերնիկ.—Պրոֆորգանների հաշվետվությունների մասին այդ որգանների ընտրությունների կապակցությամբ (Զեկուցում ՀԱՄԿԽ-ի VI պլենումում 1937 թ. ապրիլի 28-ին)	5
Ընկեր Շվերնիկի զեկուցման առթիվ ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի ընդունած բանաձևը	52
Պրոֆմիութենական որգանների ընտրությունները կազմակերպելու մասին (ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի վորոշումը)	65
Պրոֆեսիոնալ միություն տիպային կանոնադրության նախագծի մասին (ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի վորոշումը)	72
Իրագործել շրջադարձը պրոֆմիությունների աշխատանքում («Правда»-յի 1937 թ. մայիսի 16-ի առաջնորդողը)	74
Լայներեն ծավալել պրոֆմիութենական դեմոկրատիան («Правда»-յի 1937 թ. մայիսի 20-ի առաջնորդողը)	79



Քարգմանեցին Հ. Տ.-Հովհաննիսյան, Ա. Դումզումաջյան
Խմբագրեցին Հ. Հովհաննիսյան, Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր Ի—4895, հրատ. № 460,
Պատվեր № 114, Տիրաժ 15.000
Հանձնված է արտադրության 27/VI 1937 թ.
Ստորագրված է տպագրության 3/VII 1937 թ.
Գին՝ 60 Լ.

Հայկուսերատի տպարան, Երևան, Ալլահվերդյան № 71

« Ազգային գրադարան



NL0204249

Н. М. ШВЕРНИК
ОБ ОТЧЕТАХ ПРОФОРГАНОВ
В СВЯЗИ С ВЫБОРАМИ ПОСЛЕДНИХ
Армиздат, Ереван, 1937